ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(**75**-րդ տարի) **Թիվ-6** (1652) *Հունիս 2021*

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Քաղաքական
«Հայաստան» դաշինքի հռչակագիրը (էջ 1-2)

2- Առաջնորդող
Հավատանք որ հայ ենք (էջ 3-4)

3- Հարցազրույց
Հարցազրույց ՀՅԴ Բյուրոյի անդամ Ռաֆֆի Տոնապետյանի հետ
Հունիսի 20-ի ընտրությունները պատմական են լինելու ողջ հայության համար (էջ 5-7)

4- Քաղաքական
Արմեն Ասրյան
Պատմության դասերը և 2020 թ. աշնան աղետի պատճառներն ու պատասխանատուն (մաս 1-ին) (էջ 8-14)
Վահե Սարգսյան
Ինչո՞ւ «Պողոսը» չեկավ հրապարակ (հետպատերազմյան պայքարի 7-ամսյա շրջանի մասին) (էջ 15-16)

5- Հասարակություն
Վիգէն Աբրահամեան
Մտորումներ՝ քուէի ու քուէարկութեան մասին (էջ 17-18)

6- Ռազմաքաղաքական
Թաթուլ Հարությունյան
Ինչպիսի՞ն են լինելու ապագայում պատերազմները (Արցախյան պատերազմի արձագանքները) (էջ 19-22)

7- Քաղաքատնտեսական
Արփի Աբրահամյան
Եվրասիական տնտեսական ինտեգրումը ՌԴ արտաքին քաղաքականության համակարգում (էջ 23-29)

8- Աշխարհաքաղաքական
Արմեն Պետրոսյան
Պաղեստինա-իսրայելական թնջուկը կրկին մերձավորարևելյան և աշխարհաքաղաքական օրակարգերում (էջ 30-33)

9- Պատմության լուսարձակ
Անի Մելքոնյան
Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանը (էջ 34-36)
Գոհար Խանումյան
Հայ որբերի տարհանումն Օսմանյան կայսրությունից 1922 թ. (էջ 37-40)

10- Ընկերական զրույցներ
Նորեկ Գասպարյան
Վախենում եմ (էջ 41-42)
Վրէժ-Արմէն
Համատարած խտրականութիւնը (էջ 43-44)

«Հայաստան» դաշինքի հռչակագիրը

Մեր մասին

«Հայաստան» դաշինքը քաղաքական կուսակցությունների, կազմակերպությունների և անհատ գործիչների միավորում է: Այն ձևավորվել է հանուն Հայաստանի Հանրապետության, Արցախի Հանրապետության, հանուն հայ ժողովրդի հարատև անվտանգության, զարգացման և բարեկեցության: Դաշինքի ձևավորումը թելադրված է 2020 թվականի 44-օրյա պատերազմի աղետալի հետևանքները, մեր պետականությանը նետված նոր սպառնալիքները հաղթահարելու անհրաժեշտությամբ:

Դաշինքն առաջնորդվում է գիտակցությամբ, որ միայն համատեղ ջանքերով և միասնական լինելով է հնարավոր լուծել երկրի առջև ծառացած լրջագույն խնդիրները:

Մենք պատրաստ ենք ստանձնել ամբողջ պատասխանատվությունը պետության ճակատագրի հանդեպ, կանխել պետականության փլուզումը, ձևավորել նոր որակի իշխանություն, կերտել Հայաստանի ապագան:

Մենք համոզված ենք, որ խորհրդարանական մեծամասնության միջոցով կձևավորենք այնպիսի գործադիր իշխանություն, որը վեր կանգնելով նեղ քաղաքական նպատակներից, կծառայի ազգային-պետական շահերին, կիրականացնի դրանց պաշտպանությանն ուղղված արտաքին քաղաքականություն, կերաշխավորի հուսալի անվտանգություն, կկասեցնի սոցիալ-տնտեսական անկումը, կապահովի զարգացման բարձր տեմպեր, կկանխի զանգվածային արտագաղթի նոր ալիքը՝ անհրաժեշտ հիմքեր ստեղծելով արժանապատիվ և երկարաժամկետ խաղաղության համար:

Անցյալի մասին

Մենք կարևորում ենք երկրի զարգացման վերջին 30 տարիների պատմության հակասական փուլերի բաց և անկեղծ արձանագրումը, հաստատակամ ենք բացթողումներից խոսելու, անցյալից դասեր քաղելու, ապագայի նոր էջ բացելու հարցերում:

Ամենաբարդ ժամանակներում մեզ հաջողվել է պահպանել անկախ Հայաստանը՝ որպես աշխարհի բոլոր հայերի ազգային պետություն, արձանագրել միասնական նպատակներ և հաջողություններ, քայլել աշխարհին համընթաց, տարածաշրջանում դառնալ գործուն դերակատար, աշխարհաքաղաքական բարդ իրավիճակներում հավասարակշռություն պահպանել: Բոլոր իշխանությունների օրոք եղել են հաջողություններ և բացթողումներ, ձեռքբերումներ և սխալներ: Այնուամենայնիվ, մեր պետությունը շարունակել է իր ընթացքը՝ լինելով Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության ամուր խարիսխ:

ՀԱՅԱՍՏԱՆ
ԴԱՇԻՆՔ

2018-ին երկրի ընթացքը խաթարվեց: Արմատական փոփոխությունների, արդար երկիր կառուցելու խոստմամբ իշխանության եկած քաղաքական ուժը, դրսևորելով հանցավոր անպատասխանատվություն և պետական կառավարման համակարգը կազմալուծելու, օտարածին օրակարգեր սպասարկելու, հասարակական–քաղաքական մթնոլորտը թունավորելու իր հետևողական քայլերով ոչ միայն չկատարեց հանրությանը տված խոստումները, այլև երկիրը ներքաշեց պատերազմի մեջ՝ զոհելով հազարավոր երիտասարդների, կորցնելով Արցախի Հանրապետության մեծ մասը, թուլացնելով պետականության հիմքերը, վտանգելով մեր ընդհանուր ապագան:

Արցախ

Արցախի Հանրապետության հետ տեղի ունեցածը և շարունակվող գործընթացները ցավոտ հարված են մեր ազգային պետականությանը, խաթարում են երկրի անվտանգությունն ու պաշտպանունակությունը, հարցականի տակ են դնում մեր արժանապատվությունն ու կյանքի իրավունքը:

Անարդարացի ստատուս քվոն կարող է նոր պատերազմի պատճառ դառնալ: Ուստի մենք կողմ ենք ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահողների միջնորդությամբ բանակցային գործընթացի վերսկսմանը՝ ուղղված Արցախի տարածքի վերականգնմանը՝ ինքնորոշման իրավունքի հիման վրա, և Արցախ-Հայաստան երաշխավորված, գործուն ցամաքային անվտանգ կապի ապահովմանը:

Դաշինքը, մեր քաղաքացիների վստահության քվեն ստանալուն պես, հետամուտ է լինելու թուրք-ադրբեջանական ագրեսիայի և պատերազմական հանցագործությունների միջազգային ճանաչմանն ու դատապարտմանը, լծվելու է հետպատերազմյան հումանիտար աղետի հետևանքները մեղմելու աշխատանքներին (գերիների վերադարձ, զոհվածների և անհետ կորածների տվյալների ամբողջացում, վիրավորների ու հաշմանդամների, տնավեր դարձած մարդկանց սոցիալական աջակցություն, վերականգնողական աշխատանքներ և այլ կարևորագույն հարցեր):

Մենք համոզված ենք, որ պատերազմից կարելի էր խուսափել, եթե անհեռատես և անպատասխանատու քայլերի հետևանքով բանակցությունները չմտնեին փակուղի: Պատերազմը, դրան նախորդող ու հաջորդող գործընթացները պետք է քննության առարկա դառնան, ստանան քրեաիրավական և քաղաքական ամբողջական գնահատական:

Մեր հանձնառությունը

Մենք պարտավոր ենք կասեցնել ազգակործան այս ընթացքը, դասեր քաղել անցյալից, Հայաստանն ազատել օտարածին օրակարգով շարժվող և թշնամու շահերը սպասարկող խմբակից, բոլոր ջանքերը գործադրել պետության և հասարակության կայուն, առողջ զարգացման համար, կառուցել մեր երկրի ապագան:

Մենք բացառում ենք

•Մեկ անձի ձեռքում իշխանական լծակների կենտրոնացումը,
•Պետական իշխանության ինստիտուտների կազմաքանդումը,
• Իշխանության ամբարտավանությունը, ամենաթողությունը, ապազգային և ամբոխավարական գործելաոճը,
•Արդարադատությունը խոչընդոտելը,
• Հասարակության մեջ ներքին բաժանարար գծերի ստեղծումը, ներազգային պառակտումը,
•Սոցիալական բևեռացումը, Հանրային կարծիքի այլասերումը և կեղծ լուրերի հետևողական շրջանառման դատապարտելի քաղաքականության շարունակումը:

Մենք երաշխավորում ենք

• Պետական համակարգի արդյունավետ կառավարում,
• Անվտանգ երկիր, պաշտպանված սահմաններ,
• Տնտեսության ակտիվացում, գյուղատնտեսության զարգացում, ներդրումների ներհոսք, կյանքի որակի տեսանելի բարելավում, աղքատության ցուցանիշների շեշտակի նվազեցում,
• Բացառապես լեգիտիմ ընտրություններով իշխանության ձևավորում,
• Կոռուպցիայից, հովանավորչությունից և չարաշահման որևէ դրսևորումից զերծ իշխանության գործունեություն,
• Պետական իշխանության ու բիզնեսի տարանջատում,
• Սոցիալական արդարության և բարեկեցության անհրաժեշտ պայմանների ստեղծում. հանրային կյանքի որակի իրական և առաջանցիկ բարելավում,
• Երիտասարդության ակտիվ ներգրավում,
• Հասարակության մեջ նոր վարքականոնի հաստատում:

Ապագայի մասին

Հայաստանի Հանրապետությունը ողջ հայության անկախ պետականության երազանքի մարմնավորումն է: Խաթարված ազգային արժանապատվությունը և դիմադրողականությունը, պետականության կորուստները վերականգնելու, ինքնիշխանությունը պահպանելու համար անհրաժեշտ է վճռական քայլերով լավատեսություն և հավատ ներշնչել երկրի ապագայի հանդեպ՝ հաղթահարելով անվտանգային, քաղաքական, սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական ճգնաժամը:

Մենք կարո՛ղ ենք և կերտելո՛ւ ենք իր ուժերին վստահ, արժանապատիվ պետություն, որն ունակ է պաշտպանելու երկրի սահմաններն ու ժողովրդի անվտանգությունը:

Ժամանակակից կրթությունը, գիտական, տեխնոլոգիական առաջընթացը և նորարարությունը Հայաստանի հուսալի ապագան կերտելու բանաձևի կարևորագույն բաղադրիչներն են:

Հայ ինքնության պահպանման և զարգացման հիմնասյուներն են հայոց լեզուն, պատմությունը, հավատքը, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, մշակույթը, ուրույն արժեհամակարգը:

Գլոբալ գործընթացներում մեր մրցակցային առավելությունն այն քաղաքացին է, որն իբրև ինքնության անկյունաքարային բաղադրիչ գիտակցում է պետականության դերը, կարող է խելամտորեն համադրել ազգայինն ու համամարդկայինը, ավանդականն ու ժամանակակիցը:

Ապագան կերտելու գրավականը

• Խաղաղություն և անվտանգություն,
• Արդարություն, ազատություն, համերաշխություն,
• Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչում և դատապարտում, հայ ժողովրդի անժամանցելի իրավունքների իրացում,
• Համահայկական ներուժի ամբողջական իրացում, երկքաղաքացիության սահմանափակումների վերանայում,
• Ազգային միասնականության և անփոփոխ բարոյական արժեքների վրա հիմնված քաղաքական մշակույթ:

Մենք ունենք երկրի զարգացման երկարաժամկետ ծրագրեր, որոնք կներկայացվեն հանրությանը և որոնց իրականացումը սկսվելու է «ՀԱՅԱՍՏԱՆ» դաշինքի հաղթանակով: Մեր ժողովուրդն զգալու է կյանքի որակի դրական փոփոխությունները ամենամոտ ապագայում:

Դաշինքի անդամ հանդիսացող յուրաքանչյուր ոք գիտակցում է պատմական այս փուլի պատասխանատվությունը և պատրաստակամ է աշխատել իր կարողությունների առավելագույն կենտրոնացմամբ՝ հանուն երկրի ապագայի, հանուն հայկական պետականության նոր վերելքի»: ■

09 ՄԱՅԻՍ 2021

Հավատանք որ հայ ենք

Հայաստանը մտել է նախընտրական գործընթացների փուլ, և, եթե իշխանությունները նոր անակնկալների առջև չկանգնեցնեն ժողովրդին, 2021 թվականի հունիսի 21-ին կուրվագծվի լրջագույն փորձությունների մեջ հայտնված մեր երկրի ապագան: Այս ընթացքում գործող իշխանությունն, ինչ կերպ էլ փորձի մեկնաբանել արտահերթ ընտրությունների կայացման վճիռն, ակնհայտ է, որ նա այս քայլին դիմեց՝ չունենալով այլ ելք: Քաղաքական ու բարոյական վարկը կորցրած ղեկավարությունը, հանրային ճնշման պայմաններում կորցնելով երկիրը կառավարելու ունակությունը, պատասխանատվությունից խուսափելու ելք համարեց փաստացի կորցրած իշխանությունը վերադարձնելու վերջին հնարավորությունը՝ նոր ընտրության ճանապարհով:

Այս դեպքում, սակայն, մեզ հետաքրքրողն ընտրական գործընթացին մասնակից այն բևեռն է, դեպի ուր անշեղ հետևողականությամբ թեքվում է հանրային հետաքրքրությունը: ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի, Հայ Յեղափոխական Դաշնակցություն ու Վերածնվող Հայաստան կուսակցությունների ձևավորած դաշինքն ի սկզբանե գնահատվեց որպես գործող իշխանության հիմնական մրցակից, իսկ ավելի շուտ՝ այլընտրանքային բևեռ՝ ապազգային և պարտվողական իշխանության նկատմամբ: Նման ձևաչափով դաշինքի ձևավորումն առաջին հերթին պետք է բացատրել ոչ թե քաղաքական նախընտրություններով, այլ երկիրը կործանարար ուղուց դուրս բերելու ազգային ու պատմական հրամայականով: Այս առումով նման համախմբումը նաև խորհրդանշական արժեք ու իմաստ է ստանում, երբ նկատի ենք ունենում, որ Արցախ-Հայաստանի փրկության համար ձեռք ձեռքի են տվել ճակատագրական փորձությունների շրջանում Արցախն ու Հայաստանը ղեկավարած գործիչը, հայոց նոր պետականության ակունքներում կանգնած հայոց վերջին հույսի կուսակցությունը և Հայաստանի վտանգված ողնաշարը հանդիսացող հերոսական Սյունիքի նորաստեղծ քաղաքական ուժը: Այս միավորման առողջ տրամաբանական հիմքն են կազմում նաև այն իրողությունները, որ Ռոբերտ Քոչարյանի ու Դաշնակցության միջև գործակցությունն սկսվել է դեռևս Արցախյան ազգային-ազատագրական պայքարի շրջանից և արդյունավետորեն շարունակվել է Հայաստանի ամենաբուռն զարգացման տարիներին: Ողջ այս ընթացքում այդ հարաբերությունները պայմանավորված են եղել հայրենի պետականությունների կենսական շահերով, եղել են գործնական, անկեղծ ու պարկեշտ:

Հայոց նոր պետականության կերտման ժամանակաշրջանում առանձնահատուկ է եղել նաև ՀՅ Դաշնակցության կապը Սյունիքի հետ: Դաշնակցության Սյունիքի կառույցները, որոնք գլխավորաբար ունեցել են մարտական դիմագիծ, հաջողությամբ մասնակցել են Արցախի ազատագրման և Հայաստանի

հարավային սահմանների պաշտպանության գործին: 2020 թվականի աշնանային պատերազմին հաջորդած դժվարին օրերին էլ տարբեր վայրերից մեկտեղված Դաշնակցության կամավորականներն ուս-ուսի կանգնեցին հայրենի բնակավայրերի սահմանները պահող սյունեցիների կողքին:

Չպետք է կասկածել, որ գալիք ընտրություններից հետո նույնպես նշված երեք ուժերը համատեղված ուժով անելու են ամեն ինչ՝ հայանպաստ լուծումներ ապահովելու համար այն կենսական հարցերում, որոնցով օրվա 24 ժամը տագնապած են յուրաքանչյուր նորմալ հայի միտքն ու հոգին:

«Հայաստան» քաղաքական դաշինքը չի գնում ընտրությունների, շահարկելով մարդկանց զգացմունքներն, ինչն, ի դեպ, իշխող ամբոխավար իշխանությունների հիմնական զենքն է: Ընդդիմադիր ազգային բևեռն, որպես քաղաքական հայտ, հանրությանը ներկայացել է նախընտրական ծրագրով, որում շարադրված են անվտանգության, տնտեսության, քաղաքականության, կրթության ու մշակույթի և այլ ոլորտներում առկա համընդհանուր ճգնաժամի հաղթահարման և երկրի զարգացման ուղենիշները:

Եթե իշխանության վրա դեռևս գտնվող ուժի ողջ նախընտրական ծրագիրը հերթական անգամ վարկաբեկման ճանապարհով ընդդիմության նկատմամբ ատելության բորբոքումն է, ապա ազգային բևեռի համազգային տեսլականները կոչված են հետընտրական Հայաստանում ապահովելու «Կոնսենսուս մինուս մեկ» բանաձևի կենսագործումը, ինչը նշանակում է բոլորի հետ համագործակցելու կամք՝ բացառությամբ դավաճանական, պարտվողական էությամբ վարչախմբի և նրա արբանյակների: Իշխանության գալուց հետո կառավարող դաշինքի գլխավոր անելիքներից մեկը դառնալու է ազգային համերաշխության վերականգնումը և պառակտված հասարակության համախմբումն ազգային գերակա նպատակների շուրջ՝ առանց որի անհնարին կլինի իրագործել մնացած բոլոր խնդիրները, ամրապնդել պետականության թուլացած հիմքերը:

Թերեւս ավելորդ չէ արձանագրելը, որ հայաստանցիներից ոչ պակաս անհանգստությամբ ու ակնկալիքներով այս ընտրությունների

արդյունքներին սպասում են արցախահայությունն ու սփյուռքահայությունը: Մեր ազգային օրգանիզմի պառակտված երեք մասերի համար էլ «Հայաստան» դաշինքի հաղթանակը նշանակելու է հավատի վերարթնացում Հայաստանի ու Արցախի ապագայի հարցում և ազգային երեք թևերի մերձեցմամբ՝ հայկական եռամիասնության վերականգնում: Եթե հասարակության անկումային տրամադրությունները հասկանալի են Արցախի դեպքում, ապա իրականության ամբողջ ողբերգականությունն ակնառու է դառնում, երբ անդրադառնում ես, որ, օրինակ՝ վերջին ամիսներին աննախադեպ չափերի է հասել Հայաստանից արտագաղթը: Բնականաբար այս իրավիճակն անդրադառնում է կյանքի ու կենսագործունեության բոլոր ոլորտների վրա:

Այնուամենայնիվ մոայլ օրինակներն ավելի շուտ նրանց համար են, ովքեր լավ չեն պատկերացնում, որ փաշինյանական ապազգային խունտային ձայն տալը նշանակում է սահմանային բնակավայրերի անպաշտպան վիճակի շարունակում և թուրքական հետագա առաջխաղացում, Արցախի հարցի վերջնական մոռացում, ստորացված, օտարից փրկություն մուրալու արտաքին քաղաքական վարք, ներքին կյանքի պառակտվածության խորացում, տնտեսական անվերահսկելի դարձող անկում, թուլացող ու քայքայվող պետականություն՝ համատարած հուսալքության և երկրից փախուստ տալու տրամադրությունների պայմաններում: Իրականում երկրի ներսում տեղի է ունենում հանրային տրամադրությունների արմատական փոփոխություն: Դատելու կարողությամբ օժտված մարդու համար համեմատության եզրեր չկան այն հարցում, թե կողմերից յուրաքանչյուրն, իշխանություն ստանձնելու հայտ ներկայացնելով, այդ պատասխանատու և ծանր առաքելության համար ինչ պատրաստվածությամբ է ներկայացել ժողովրդին: Եթե ժողովրդի հետ «Հայաստան» դաշինքի հանդիպումներն անցնում են առկա վիճակի հաղթահարման և ապագայի հետ կապված խնդիրների ու ծրագրերի քննարկման մթնոլորտում, ապա մրցակից կողմը, հոգեբանորեն գտնվելով ընդդիմադրի կարգավիճակի մեջ, փորձում է արդարանալ, նախորդող շրջանի իր բոլոր մեղքերը

բարդելով նախկինների վրա, ինչպես և զբաղվում է մրցակիցներին ամբաստանելու, սևացնելու գործով: Կողմերի ցայտուն տարբերություններից մեկն էլ այն է, որ «Հայաստան» դաշինքի շուրջ այսօր համախմբվում են քաղաքական, տնտեսական, կրթական, գիտական, մշակութային ընտրախավը, երկրի ճակատագրով մտահոգ հասարակական շերտերն, ըստ էության բազմակողմ տեղեկատվության տիրապետող հանրությունը, իսկ միանձնյա ընտրապայքար իրականացնող վարչապետի անօրինական պաշտոնակատարի կողքին դժվար է նշմարել քայլածների թիմին մաս չկազմած, քիչ թե շատ ճանաչված և հեղինակություն վայելող որևէ անձի: Դժվար է վիճարկել այն փաստը, որ Ազգային դաշինքի հաղթանակի դեպքում երկրին սպասվում է խաղաղություն և ներքին անդորր, իսկ հակառակ պարագայում՝ շարունակվելու է ժողովրդից օտարված իշխանության թաքուն, վտանգավոր ու անհեռանկար գործունեությունն՝ օր օրի անպաշտպան և խոցելի դարձող երկրում: Դժվար է բարձրաձայնելը, թե Հայաստանն այսօր այնքան է հեղինակազրկված, որ չի ընկալվում որպես լուրջ պետություն: Մի պետություն, որն ունակ չէ պաշտպանելու սեփական սահմանները, կորցրել է կայուն կենսագործունեության ճանապարհը, ընկղմված է ներքաղաքական պղտոր մթնոլորտի մեջ, ուր պատերազմում կրած խայտառակ պարտությունից հետո երկրի ղեկավարը թաքնվում է ժողովրդից և տեղաշարժվում է հարյուրավոր ուժայինների պաշտպանության շղթայի միջով, նման պետությունը նաև չի արժանանում որևէ արտաքին ուժի գործնական աջակցությանը:

Յուրաքանչյուր հայի համար այլևս ասերկբա պետք է լինի, որ մեր երկրին անհրաժեշտ է արմատական շրջադարձ այս գահավիժման ընթացքից: Այդ փոփոխության խաղաղ ու օրինական ճանապարհը մեզ ընձեռված քաղաքակիրթ ընտրության առիթն է: Կընտրի՞ հայ ժողովուրդը փրկության ուղին, թե կործանման ընթացքի մեջ կհաշտվի անարժանապատիվ գոյաքարշության հեռանկարի հետ: Ամոթալի է նույնիսկ, որ կարող է գոյություն ունենալ նման երկընտրանք: Հունիսի 20-ին, անկասկած, արձանագրվելու է հայոց նոր վերածնդի սկիզբը: Հավատանք ինքներս մեզ, հավատանք, որ մենք հայ ենք:

Հունիսի 20-ի ընտրությունները պատմական են լինելու ողջ հայության համար:

Հարցազրույց ՀՅԴ Բյուրոյի անդամ Ռաֆֆի Տոնապետյանի հետ

– Ընկեր Ռաֆֆի, Դուք ապրում եք Կանադայում: Հեռավորությունը չի խանգարում, որ հայության տարբեր հատվածները իրենց համարեն ազգային մեկ հավաքականության մասեր և ապրեն ընդհանուր հոգսերով: Հայտնի է, որ կանադահայությունը մեր ամենակազմակերպված, աշխույժ համայնքներից մեկն է: Վերջին տարիներին այստեղ-այնտեղ հայությանը պատուհասած զանազան աղետները իրենց ազդեցությունն են թողնում աշխարհագրական սահմաններ չճանաչող հայաշխարհի վրա: Այս ամենին ավելանալու եկավ նաև համաշխարհային համավարակը բոլորին թելադրելով սեփական օրակարգը: Նման պայմաններում որքանո՞վ է հաջողվում բնականոն հունի մեջ պահել համայնքի կյանքը, որքանո՞վ է ազգային կառույցներին հաջողվում արձագանքել առկա ու ծագող նորանոր մարտահրավերներին:

– Լինելով ՀՅԴ Բյուրոյի անդամ, ինչպես և բնակվելով Քվեբեկում՝ մոտիկից հետևել և, անշուշտ, մաշկիս վրա զգացել եմ, թե համաճարակը ինչպես ազդեց մեր գաղութային կյանքի վրա, և մեր կառույցները՝ Կենտրոնական կոմիտեն, ուղեկից կազմակերպությունները, կենտրոնները, եկեղեցիները, դպրոցները ինչպես արձագանքեցին և ինչպիսի վերաբերմունք դրսևորեցին այս դժվար ժամանակահատվածում: Ասեմ, որ Կանադան այս մեկուկես տարում անցավ համաճարակի երեք ալիքի միջով: Առաջինը սկզբնական օրերին էր, երբ 2020-ի մարտ ամսին հայտարարվեց համաճարակի մասին: Այս շրջանը ձգվեց մինչև հունիսի սկիզբը, երբ դաշնակցային և նահանգային իշխանությունները փորձեցին տարբեր միջոցներով, օրենքներով խստացնել համակարգի գործունեությունը: Անշուշտ, քանի որ Կանադան մեծ երկիր է, և նահանգները տնօրինում են առողջապահական ոլորտները, նրանք փորձեցին նաև տարբեր մոտեցումներ որդեգրել: Ընդհանրապես հայ գաղութը ապրում է Մեծ Մոնրեալում, Մոնրեալ-Լավալում, որոնք Քվեբեկի նահանգում են, հետո Տորոնտոն և Հարավային Օնտարիոն են, որոնք Օնտարիո նահանգում են: Երրորդը Վանկուվեր քաղաքն է, որը Բրիտանական Կոլումբիա նահանգում է: Ինչպես նշեցի, այս նահանգները նաև իրենց առանձին մոտեցումներն ունեին, որոնց պետք է համակերպվեինք: Համաճարակի առաջին ալիքի ազդեցությունը բավական մեծ էր մեր գաղութի վրա, որովհետև մեր եկեղեցիները, դպրոցները, կենտրոնները, գրասենյակները այն հրապարակներն են, որտեղ գաղութի անդամները հավաքվում են, իրար են տեսնում, սուրճ են խմում, միասին ճաշարան են գնում, զավակներին դպրոց են տանում, միջոցառումների, ժողովների են մասնակցում, եկեղեցի են գնում, նշանդրեք ու պսակ են անում: Անշուշտ, այս ամենը ընդհատվեց: Պետք է շատ արագ կարողանայինք որպես կազմակերպություն մեր առօրյա կյանքը կազմակերպել առցանց, հեռավար ձևով, և այս ամենը հաջողությամբ արվեց: Արդեն համաճարակի հայտարարումից մեկ ամիս անց հնարավոր եղավ, օրինակ, Ապրիլի 24-ի ոգեկոչման միջոցառումը հաջողությամբ առցանց կազմակերպել, համաճարակի հետ կապված դրամահավաք կազմակերպվեց, որը նույնպես հաջող անցավ, մեր վարժարաններն անցան հեռավար, առցանց դասընթացների, որոնք որոշ դժվարություններից հետո նույնպես որոշ չափով հունի մեջ մտան: Այսպիսով՝ համաճարակի առաջին ալիքը, որը տևեց մինչև 2020-ի հունիսը, առիթ ստեղծեց, որ մեր կառույցները, հանձնախմբերը, մարմինները մեր գաղութային կյանքը վերակազմակերպեն տարբեր ձևերով: Չնայած 2020-ի ամառը մի քիչ ավելի ազատ անցավ, դժբախտաբար, դրանով ամեն ինչ չավարտվեց: Աշնանը երկրորդ ալիքը սկսվեց, իսկ 2020 թվականի ձմռանը երկրորդին հաջորդեց համաճարակի երրորդ ալիքը: Մեր կազմակերպությունները, կառույցները կարողացան ավելի մասնագիտացած ձևով մեր գաղութային կյանքն առաջ տանել, Հայ դատի աշխատանքներն առցանց իրականացնել հատկապես 2020 թվականի հուլիսի պատերազմի ժամանակ, ապա՝ 44-օրյա պատերազմի օրերին, ինչպես նաև ոգեկոչել զանազան կարևոր թվականներ, ինչպես, օրինակ, 1918 թ. մայիսի 28-ը, Հայաստանի անկախության տոնը սեպտեմբերին: Այս ամենը դարձավ առցանց միջոցառումների շարք, և պետք է ասել, որ գաղութը ակտիվորեն մասնակցեց այդ ամենին: Իհարկե, ինչպես հայությունը աշխարհի տարբեր ծագերում, կանադահայ գաղութը նույնպես մասնակցեց հանգանակությունների, օրինակ՝ Արցախի ժողովրդի համար պատերազմի օրերին

և դրանից հետո, Լիբանանի մեր գաղութի համար՝ կապված տնտեսական տագնապի և նավահանգստի պայթյունի հետ, մեր Սուրիո գաղութի ապրած տագնապի առիթով և այլն: Այս ամենը առցանց եղավ, մեր գաղութը ակտիվորեն մասնակցեց այդ հանգանակություններին, և կարող եմ ասել, որ նույնիսկ մի քիչ ավելին արվեց, քան բնականոն կյանքի օրերին: Կարելի եղավ բոլոր ծրագրերն իրականացնել: Մտել ենք հունիս ամիս, պատվաստումների արշավը ընթանում է բավականին լավ, և հույս ունենք, որ հուլիս-օգոստոս ամիսներին դրված սահմանափակումները կամաց-կամաց կվերանան: Հույս ունենք, որ եթե սեպտեմբերին մեր գաղութային կյանքը առաջվա բնականոն ընթացքը չստանա, ապա շատ մոտ կլինի այդ վիճակին: Այնուամենայնիվ հուսանք, որ եթե համաճարակի նոր տարբերակներ չլինեն, որոնք կստիպեն իշխանություններին գնալ նոր խստացումների, սեպտեմբերին կյանքն իր բնականոն ընթացքին կվերադառնա:

– Ընկեր Ռաֆֆի, ես միտումնավոր առաջին հարցով չանդրադարձա Հայ դատի ուղղությամբ վերջին շրջանում տարվող աշխատանքներին՝ մասնավորապես նկատի ունենալով Արցախյան վերջին պատերազմն ու դրա հետևանքները: Տեղյակ ենք, որ տարբեր խնդիրների շուրջ Դուք ամենօրյա գործակցության մեջ եք երկրի իշխանությունների հետ: Ինչ առաջնահերթություններ կան այսօր այս աշխատանքների ծիրում, ինչ է հաջողվել անել, և ինչ անելիքներ կան մոտ ապագայում:

– Ինչ վերաբերում է Հայ դատի աշխատանքներին, Կանադան միշտ ունեցել է Հայ դատի աշխույժ շրջանային հանձնախումբ, որն իր մասնաճյուղերով, ՀՅԴ երիտասարդական և ուսանողական միությունների անդամների օժանդակությամբ աշխատանքներ է տարել դաշնակցային, ինչպես նաև նահանգային և քաղաքային մակարդակներով: Հանձնախումբը քաղաքական-հարաբերական արդյունավետ աշխատանք իրականացրեց Արցախի պատերազմի օրերին և դրանից հետո՝ բանակցությունների ընդհանուր շրջածիրում: Հետևողական աշխատանքի շնորհիվ Կանադայի կառավարությանը պարտադրվեց կասեցնել թուրքական անօդաչուների բաղադրիչների վաճառքը և ընդհանրապես Թուրքիային ու Ադրբեջանին կանադական զենք-զինամթերքի մատակարարումը: Հայ դատի հանձնախումբը հետապնդեց նաև Արցախի անկախության ճանաչման և անվտանգության հարցերը, ռազմագերիների վերադարձի ապահովումը, մշակութային կենտրոնների պահպանումը, պատերազմից տուժածներին նյութական և այլ տեսակի օժանդակությունների տրամադրման հարցերը, Հայաստանում Կանադայի դեսպանատան հաստատումը, Հայոց ցեղասպանության ճանաչման և հատուցման գծով քայլերի իրականացումը և շատ այլ հարցեր: Ուզում եմ նաև ընդգծել, որ համաճարակի

օրերին Կանադայի մայրաքաղաք Օտտավայում հնարավոր եղավ մի կալվածք ձեռք բերել, որն ապագայում պետք է դառնա Հայ դատի Կանադայի շրջանային հիմնական գրասենյակը: Այս մեկը Կանադայի շրջանի տարիների ծրագիրն էր, և պատեհ առիթն օգտագործվեց, որպեսզի կալվածքը ձեռք բերվի, և Հայ դատի հանձնախումբը մայրաքաղաք Օտտավայում ունենա իր մշտական հասցեն: Վերջապես նշեմ, որ Հայ դատի հանձնախումբն ունի իր լիաժամ աշխատող գործավարը, որն ամեն օր հետապնդում է Հայ դատի այս աշխատանքները՝ գործակցելով Հայ դատի շրջանային և տեղական հանձնախմբերի հետ:

– Մուրիկից հետևելով Դուք իրազեկ եք նաև Հարավային Ամերիկայի և Ավստրալիայի գաղութների կյանքին: Հակիրճ ներկայացրեք, խնդրում եմ, նաև այս համայնքների առջև ծառացած խնդիրները և հատկապես Հայ դատի, Արցախի ու Հայաստանի դիմագրաված դժվարին փորձությունների ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

– Այո՛, գործի բերումով մոտիկից հետևելով Հարավային Ամերիկայի և Ավստրալիայի մեր կազմակերպական օղակների առօրյային՝ կարող եմ հաստատել, որ համաճարակի առումով այս երկրներում ևս կացությունը շատ տարբեր չէր, ինչպես որ էր Կանադայում: Անշուշտ, մոտեցումները և համաճարակի թողած ազդեցությունները կամ վերքերը տարբեր են: Ավստրալիայի իշխանությունները առաջին օրերից շատ ավելի խստապահանջ ձևով մոտեցան կացությանը, և արդեն ամիսներ ի վեր կացությունը այնտեղ բարելավված է, և ժողովուրդն ազատ է՝ դուրս գալու, հանդիպելու, ժողովներ գումարելու: Այդ իմաստով Ավստրալիան որոշ չափով վերադարձել է բնականոն կյանքին: Դժբախտաբար, Հարավային Ամերիկայում պարագան նույնը չէ. վիճակն այնտեղ մնում է մտահոգիչ, զարգացումները վատ են: Նշեմ, որ երբ խոսում ենք Հարավային Ամերիկայի մասին, գաղութային առումով նկատի ունենք առաջին հերթին

Արգենտինան, Ուրուգվայը, Բրազիլիան: Համաճարակի առումով այնտեղ խնդիրը լուրջ է: Սակայն երկու դեպքում էլ, ինչպես Կանադայի պարագայում, մեր օղակները, մեր պատասխանատու մարմինները կարողացան աշխատանքները շարունակել առցանց, հեռավար կարգով՝ կազմակերպելով գաղութային զանազան միջոցառումներ՝ տոներ ու ոգեկոչումներ, հանգանակություններ, շարունակեցին Հայ դատի աշխատանքները: Հատկապես 44-օրյա պատերազմի ընթացքում թե՛ Ավստրալիայում և թե՛ Հարավային Ամերիկայում լուրջ աշխատանքներ կազմակերպվեցին ի նպաստ Արցախի ժողովրդի իրավունքների, Արցախի անկախության ճանաչման: Աշխատանք, որպեսզի դատապարտվեին Ադրբեջանն ու Թուրքիան իրենց որդեգրած քաղաքականության և սանձազերծած պատերազմի համար: Աշխատանք է տարվում ռազմագերիների ազատ արձակման, ինչպես նաև Հայոց ցեղասպանության ճանաչման և հատուցման ուղղությամբ: Հայ դատի աշխատանքները տարվում են առցանց, սակայն լավ արդյունքներ են գրանցվում: Այս երկու շրջանների աշխատանքը ամբողջացնում է Հայ դատի գծով համահայկական առումով տարած աշխատանքը:

– Այս ոչ դյուրին ժամանակներում Հայաստանի իշխանությունների կողմից մեզ պարտադրվեցին ընտրություններ, որոնց չմասնակցելը կնշանակի վերարտադրվելու կանաչ ճանապարհ թողնել իշխանությունների առջև: Դաշնակցությունը նորանկախ Հայաստանում առաջին անգամ ընտրությունների պետք է մասնակցի դաշինքային ձևաչափով: Ինչ կարծիքի եք այս իրողության մասին, ինչ անելիքներ ու ակնկալիքներ պետք է ունենանք:

– Ասել, թե ընտրությունները կարևոր են, հավանաբար կարգախոսային կինչի, սակայն այս պարագայում պետք է նշել, որ հունիսի 20-ին կայանալիք ընտրությունները պատմական ընտրություններ են լինելու Հայաստանի ու Արցախի և, կարելի է ասել, ողջ հայության համար: Մենք՝ որպես ազգ, հարյուր տարի է՝ այսպիսի խաչմերուկի, այսպիսի խնդիրների առջև չէինք հայտնվել, երբ հստակ ընտրանք գոյություն ունի: Իրավունք չունենք արտոնելու, որ այս իշխանություններն իրենք իրենց վերարտադրեն և շարունակեն նույն այդ պարտվողական քաղաքականությունը, ուր որ ենք այսօր որպես 44-օրյա պատերազմի հետևանք: Նկատի ունեմ նաև վերջին շաբաթների անցուդարձը՝ կապված ադրբեջանական ներթափանցման հետ Սյունիք և Գեղարքունիք: Ես կարծում եմ, որ Հայաստանի մեր շրջանը իր Գերագույն ժողովում ընտրեց շիտակ ճանապարհ՝ այժմ արդեն դաշինքով ներկայանալով ընտրություններին: Կարծում եմ, որ, դաշինք կազմելով, ժողովրդին ներկայացվեց հստակ այլընտրանք, և հուսամ, որ այդ այլընտրանքը գրավիչ կդառնա մեր ժողովրդի համար և կշահի ընտրողների մեծամասնության համակրանքը: Լուրջ ծրագրեր կան մեր առջև, որոնց ցանկանում եմ շատ հակիրճ անդրադառնալ: Գալիք իշխանությունները նախ և առաջ պետք է կարողանան ապահովել 44-օրյա պատերազմի հետևանքների հաղթահարումը և խաղաղությունը, որը պիտի դարձնել արժանապատիվ խաղաղություն: Դրան պիտի հաջորդի կայունացման աշխատանքը, այսինքն՝ պետությունը պետք է կայունացնել և անվտանգությունն ապահովել, որպեսզի ժողովուրդն իրեն ապահով զգա: Վերջապես համահայկական ներուժի մեկտեղումով պետք է կարողանալ ապահովել Հայաստանի ապագան, որպեսզի Հայաստանը զարգանա, զարգանա առանց զիջելու, ունենա հզոր տնտեսություն, ունենա հզոր բանակ: Հայաստանը պետք է լինի արդար երկիր, որտեղ ժողովուրդը կկարողանա աշխատել և ազատ ապրել, կապահովվի հաջորդ սերունդների գոյությունը, կկասեցվի արտագաղթը: Սրանք են հիմնական կարևոր հարցերը, որոնք հաջորդ իշխանության օրակարգում պետք է լինեն, և կարծում եմ՝ «Հայաստան» դաշինքն իր ղեկավարությամբ, իր դեմքերով, իր փորձառությամբ կկարողանա բոլոր խնդիրները հաղթահարել և ժողովրդին առաջնորդել դեպի փայլուն ապագա:

– Առհասարակ ինչ անելիքներ եք տեսնում հայության համար ներկա փորձություններին հանդիման:

– Համահայկական առումով այսօրվա մեր առաջնահերթ հարցը մնում է Արցախի հարցը: Արցախի հարցով անելիքները շատ են, պատերազմից հետո հարցերն ավելի բարդ են: Անհրաժեշտ է նախ և առաջ ապահովել Արցախի ժողովրդի ֆիզիկական և տնտեսական անվտանգությունը: Արցախի ժողովրդի ինքնորոշման և անվտանգության իրավունքը պետք է պաշտպանել ամենուրեք. լինի Հայաստանում, թե Սփյուռքում, մեր հիմնական աշխատանքը սա պետք է լինի: Հայ դատի գծով պետք է շարունակվի Հայոց ցեղասպանության ճանաչման և հատուցման խնդիրների հետապնդումը, որպեսզի մեր դատը ի վերջո իր լուծումին հասնի, այլևս նման եղեռն չկրկնվի ոչ միայն հայ ժողովրդի հանդեպ, այլև ընդհանրապես: Ինչ վերաբերում է Հայաստանի ապագային, իսկապես, տնտեսական հզորացումը և ընկերային արդարությունը այն երկու կարևոր հարցերն են, որոնց ապահովմամբ արտագաղթը կկասեցվի, հայը իրեն ապահով կզգա իր երկրում և այնտեղ ապագա կտեսնի, իր զավակներին Սփյուռք չի ուղարկի, ընդհակառակը՝ մեծ թվով հայեր կվերադառնան և ավելի շատ կզարգացնեն տնտեսությունը, մշակույթը՝ այդպիսով ապահովելով երկրի անվտանգությունը: Մեր անելիքները շատ են, սակայն չպետք է հուսահատվենք, պետք է հույսը վերադարձնենք մեր ժողովրդին թե՛ Հայաստանում, թե՛ Արցախում և թե՛ այլուր, որպեսզի բոլորս միասին ոտքի կանգնենք և գնանք դեպի փայլուն ապագա: ■

Պատմության դասերը և 2020 թ. աշնան աղետի պատճառներն ու պատասխանատուն (մաս 1-ին)

Արմեն Ասրյան
Պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ

Հայոց բազմահազարամյա պատմությունը հարուստ է հերոսական, ոգեշնչող իրադարձություններով, նշանակալի ձեռքբերումներով, ցավոք, նաև դավաճանություններով, թևաթափ անող անցքերով ու ցավալի կորուստներով: Դրական թե բացասական՝ դրանք մեր պատմության էջերն են և պարունակում են մեզ համար չափազանց կարևոր դասեր: Այս առումով առանցքային ժամանակաշրջաններ են հատկապես 20-րդ և 21-րդ դարասկզբների զույգ տասնամյակները: Խոսքը վերաբերում է ամենից առաջ Վանի 1915 թ. ապրիլյան և 1918 թ. Մայիսյան հերոսամարտերին ու 2020 թ. աշնան պատերազմին: Առաջին հայացքից կարծեք թե 20-րդ դարասկզբի հաղթական իրադարձությունները այնքան էլ համեմատելի չեն 2020 թ. աշնան ողբերգական և աղետալի պատերազմի հետ, սակայն միայն առաջին հայացքից: Դրանց համեմատությունը հնարավորություն է տալիս ողջ խորությամբ ընկալելու 2020 թ. աշնան աղետի պատճառները, գնահատելու դրա պատասխանատուների մեղավորության աստիճանը, մյուս կողմից՝ հերթական անգամ համոզվելու, որ պատմության այդ դասերի հետ հաշվի նստելն ու դրանք գործնականում կիրառելը կօգնի մեզ ամենածանր իրավիճակներից իսկ հաղթանակած դուրս գալու:

Որքան էլ մեր երկրում ոմանք միամտորեն կամ գիտակցաբար թուրքին համարեն ընդունելի, անվտանգ, նրա հետ խաղաղ համակեցության կոչ անեն, թուրքը մեզ մշտապես վերաբերվել է որպես թշնամու և ձգտել տեր դառնալու մեր հայրենիքին ու մեր ժողովրդի ունեցվածքին: Դա թուրքի, նաև ադրբեջանցի կոչվող թուրքի էությունն է:

Անցնենք մեր խնդրի ներկայացմանը: Վանի 1915 թ. ապրիլյան ինքնապաշտպանությունը և հատկապես Սարդարապատի հերոսամարտը վճռորոշ ազդեցություն են ունեցել հայ ժողովրդի պատմական ճակատագրի վրա: Ինչո՞ւ ենք այդպես ասում և արդյոք չենք չափազանցնում: Երբեմն փորձ է արվել անհեթեթ հիմնավորումներով մերժելու պատմության դասերը՝ ամենայն հավանականությամբ հայ ժողովրդի դիմադրական ոգին թուլացնելու և Հայաստանը ճիշտ ուղուց շեղելու հետին մտքով:

Ինչպես գիտենք, թուրքական պետությունը, օգտվելով 1914 թ. բռնկված Առաջին համաշխարհային պատերազմի թոհուբոհից, ձեռնամուխ եղավ իր տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանում հայության ցեղասպանությանը:

Մի շարք վայրերում, որտեղ ունեին կազմակերպական ուժեղ կառույցներ, արևմտահայերը համախմբվեցին, դիմեցին ինքնապաշտպանության և փրկվեցին: Այդ շարքում առանձնահատուկ տեղ ունի Վան քաղաքի 1915 թ. ապրիլյան ինքնապաշտպանությունը:

Ինքնապաշտպանության նախօրյակին թուրքերը Վանի դեմ կենտրոնացրել էին, տարբեր տվյալներով, 6-12 հազարանոց կանոնավոր բանակ, քրդական հրոսակախմբեր և 12 թնդանոթ: Նրանք ունեին զինուժի համալրման հնարավորություններ, զենք-զինամթերքի ու պարենամթերքի անսպառ պաշարներ: Դրա դիմաց ինքնապաշտպանության դիմող Վանի հայությունն ուներ մոտ 1.000 մարտիկ՝ պայմանավորված զենքի քանակությամբ, և սահմանափակ թվով փամփուշտներ: Հայությունը զրկված էր օգնություն ստանալու հնարավորությունից, ուներ պարենամթերքի սուղ պաշարներ, շրջապատված էր թուրք-քրդական օվկիանոսով: Այնուամենայնիվ, 1915 թ. ապրիլի 7-ին Վան քաղաքի երկու թաղամասերի՝ Այգեստանի և Քաղաքամեջի հայությունը դիմեց ինքնապաշտպանության և մինչև մայիսի 4-ը տևած արյունահեղ, երբեմն օրհասական, բայց միշտ անզիջում կռիվների շնորհիվ հաղթեց թշնամուն:

Միանգամից նշենք, որ դժվարությունները հաղթահարվեցին, և հաղթանակը կերտվեց ինքնապաշտպանության ճիշտ կազմակերպման, վճռականության ու հայրենապաշտության շնորհիվ: Դեռևս ամիսներ առաջ զգալով վտանգը՝ հայության առաջնորդները Վանում ոչ թե շփոթության էին մատնվել ու փորձել հանձնվել ամեն ինչ ոչնչացնող թրքությանը, այլ հաստատակամորեն որոշել էին դիմադրել նրան: Ահա թե ինչ է գրել 1914 թ. աշնանը Վանի նահանգում տիրող իրավիճակի մասին տեղի հայության առաջնորդներից Արամ Մանուկյանը. «Մեր կացութիւնը յուսահատական էր այն ատեն: Ընտրելու մէկ բան միայն կը մնար մեզի համար. կամ անձնատուր ըլլալ և թողուլ, որ խողխողեն մեզ իբր ոչխար, կամ մեռնիլ զէն ի ձեռին կռուելով: Այս վերջինը նախընտրեցինք» [1]:

Վանի նահանգապետ Ջևդեթը 1915 թ. մարտին՝ թուրքերի մի փակ ժողովում, հայտարարել էր, որ

պետք է ոչնչացնել Վանի հայությանը [2]:

Ահագնացող վտանգի պայմաններում Վանի նահանգի հայության առաջնորդները ձեռնամուխ էին եղել հայության ուժերի կազմակերպմանն ու միասնական դիրքորոշման մշակմանը: 1915 թ. հունվարին հայ գործիչները ստեղծել էին «Համերաշխական ազգային մարմին»՝ բաղկացած Վանի քաղաքական կուսակցությունների, Հայ առաքելական եկեղեցու և չեզոքների ներկայացուցիչներից: Այդ մարմնի նախաձեռնությամբ կազմակերպվել էր 1.000 ոսկու հանգանակություն, որով ձեռք էր բերվել 60.000 փամփուշտ[3]: Բացի այդ՝ անընդհատ բանակցությունների միջոցով հայ առաջնորդները հասել էին թուրքական բանակ Վանի նահանգի հայ երիտասարդության զորակոչի ձգձգմանը: Դրա շնորհիվ վերջիններս ոչ միայն փրկվեցին կոտորածից, որին 1915 թ. փետրվարից ենթարկվեցին Արևմտյան Հայաստանի մյուս շրջաններից թուրքական բանակ զորակոչված 100.000-ավոր հայ երիտասարդներ, այլև կերտեցին Վանի ինքնապաշտպանությունը:

1915 թ. ապրիլի 5-ին, երբ թուրքական հարձակումն ամեն րոպե սպասելի էր, և հապաղումը կարող էր կործանարար լինել, Արամի նախաձեռնությամբ (առաջնորդներից Վանա Իշխանը՝ դավադրաբար սպանվել, իսկ Արշակ Վռամյանը ձերբակալվել էր և օրեր անց նույնպես սպանվելու էր) ստեղծվեց Վանի Հայ ինքնապաշտպանության զինվորական մարմինը: Դրանում ընդգրկվեցին փորձառու զինվորականներ ու կուսակցական և անկուսակցական հեղինակավոր գործիչներ՝ ռամկավար Արմենակ Եկարյանը, դաշնակցականներ Բուլղարացի Գրիգորը և Կայծակ Առաքելը, հնչակյան Հրանտ Գալիկյանը, անկուսակցական Փանոս Թերլեմեզյանը և ուրիշներ: Շուտով Արամը նույնպես մտավ այդ մարմնի մեջ և ղեկավարեց Վան-Այգեստանի ինքնապաշտպանությունը[4]: Ընդգծենք՝ քաղաքական ուժերն ու անհատներն ամբողջությամբ մի կողմ էին թողել նախկինում եղած հակասություններն ու տարակարծությունները: Ստեղծվեցին Զինվորական մարմնին ենթակա մի շարք մարմիններ՝ Ամրաշենների խումբ, որը պետք է զբաղվեր ինքնապաշտպանական բնագծերի ու կետերի ամրացմամբ, Զինաբաշխ մարմին, որը պետք է իրականացներ զենք-զինամթերքի պահեստավորումն ու բաշխումը, Հայթայթիչ մարմին, որը պետք է հոգար ինքնապաշտպանների և նրանց օժանդակող բանվորների պարենամթերքի կարիքները, Տեղեկատու մարմին, որը պետք է թռուցիկներ հրապարակեր և այլն: Արձանագրենք՝ այս բոլոր մարմիններն ինքնապաշտպանության ողջ ընթացքում աշխատեցին ժամացույցի նման:

Միաժամանակ Արամը՝ որպես ինքնապաշտպանության գլխավոր ղեկավար, Վանի Քաղաքամեջ թաղամասի, որտեղ ևս ստեղծվել էր ինքնապաշտպանության զինվորական մարմին, և գավառների գործիչներին հրահանգեց պատրաստ լինել Վանի վրա հարձակման դեպքում թուրքերին զինված դիմադրություն ցույց տալու համար:

Վանի ինքնապաշտպանությունը սկսվեց 1915 թ.

Վանի ինքնապաշտպանության մարտիկները 1915 թ.

ապրիլի 7-ին [5]:

Հզոր բռունցք դարձած հայությունը մեկ ամիս շարունակ հետ մղեց ռազմական գերակշռություն ունեցող թուրքական զորքերի բոլոր հարձակումները և նույնիսկ նրանցից գրավեց մի շարք ռազմական հենակետեր: Ամենամեծ հաղթանակը 650 զինվոր ունեցող Համուդ աղայի զորանոցի գրավումն էր: Թե՛ այս և թե՛ մյուս գործողություններին անմիջական մասնակցություն էին ունենում ինքնապաշտպանության բոլոր ղեկավարները:

Քաղաքամեջում հայ ինքնապաշտպանները հրդեհեցին կամ պայթեցրին թուրքական ոստիկանատունը, փոստ-հեռագրատունը, օսմանյան բանկի Վանի մասնաճյուղը, զինվորական պահեստը, կուսակալի նստավայրը և այլն:

Վանի հայությունը տվեց կազմակերպվածության, անձնազոհության ու հնարամտության հրաշալի օրինակներ: Վանի զինագործ-արհեստավորները նույնիսկ երեք թնդանոթ ձուլեցին, որոնք թեև ռազմական նշանակություն չունեցան, բայց դրանցից արձակված կրակի ձայնը խուճապի մատնեց թուրքերին:

Թուրքերը փորձում էին ինքնապաշտպաններին ընկճել նաև նրանց սովի մատնելու միջոցով, որի համար անընդհատ գավառներից Վան էին ուղղում իրենց գյուղերից քշվող հայերի հոսքը: Այս առումով ևս Արամն ու Զինվորական մարմինը ցուցաբերել էին հեռատեսություն: Մի կողմից՝ Վանի լիակատար շրջափակումը թույլ չտալու և ռազմական դրությունն ավելի չբարդացնելու, մյուս կողմից՝ պարենային կացության հետագա բարդացումը բացառելու նպատակով դիմադրություն էր կազմակերպվել նաև Շուշանց գյուղ-Վարագա լեռ հատվածում: Դրա շնորհիվ մինչև ապրիլի 22-ը հաջողվել էր խուսափել լիակատար շրջափակումից և սննդամթերք ներկրել քաղաք: Բացի այդ, որպեսզի չորս կողմից շրջափակված Վանի հայությունը սովի չմատնվեր, Զինվորական մարմինը համայնացրեց բնակչության մոտ մնացած մթերքի մի մասը, արգելեց առանց համապատասխան մարմինների գիտության մսացու կենդանիների մորթը, ճշգրտվեց զինվորների ու բանվորների թիվը,

և սահմանվեց նրանց տրվող սննդի նոր՝ որոշակիորեն կրճատված չափաբաժին: Հայերի խիզախությունն ու կազմակերպվածությունը փաստել է նույնիսկ Վանի վրա թուրքական գրոհները ղեկավարող գերմանական բանակի սպա Ռաֆայել դը Նոգալեսը: Նա գրել է, որ հարձակվող թուրքերն ամենուր հանդիպում էին հուժկու և դիպուկ կրակի, և հայկական յուրաքանչյուր տուն արագորեն վերածվում էր ամրոցի: Նույն Նոգալեսը, հայերի հաջող դիմադրությունից հուսահատված, գլխիկոր հեռացավ Վանից: Արտաքին աշխարհից կտրված վանեցիները պարբերաբար սուրհանդակներ էին ուղարկում հայկական կամավորական ջոկատների և ռուսական բանակի ուղղությամբ՝ քաղաքի օրհասական վիճակի մասին տեղեկացնելու և օգնություն խնդրելու նպատակով: 1915 թ. մայիսի 3-ին հայ ինքնապաշտպանները հետ մղեցին թուրքերի վերջին գրոհը, որից հետո թշնամին հեռացավ Բիթլիս: Մայիսի 4-ին Վանի երկու թաղամասերի ինքնապաշտպանները հանդիպեցին իրար և Վանա բերդի գագաթին ամրացրին ազատության դրոշակը: Մայիսի 5-6-ը Վան հասան հայկական կամավորական գնդերը և ռուսական զորքերը: Ինքնապաշտպանության ղեկավար Արամ Մանուկյանը նշանակվեց նահանգապետ: Այսպիսով՝ Վանի ինքնապաշտպանության հաղթանակի շնորհիվ ավելի քան հարյուր հիսուն հազար հայեր փրկվեցին ցեղասպանությունից և ձեռնամուխ եղան Վանի հայկական նահանգապետության շենացմանը, որը դարձավ հայոց նորագույն պետականության նախատիպը: Վանի ինքնապաշտպանության և նահանգապետության փորձն անփոխարինելի նպաստ բերեց հայության 1918 թ. մայիսյան հաղթանակների և անկախ պետականության կերտման գործին:

1918 թ. մայիս: Օգտվելով Ռուսական կայսրության անկումից և ռուս-թուրքական Կովկասյան ռազմաճակատից ռուսական բանակի հեռացումից՝ 1918 թ. հունվարի 30-ին թուրքական 50 հազարանոց բանակը, խախտելով նախորդ տարվա դեկտեմբերին կնքված զինադադարը, հարձակման էր անցել Կովկասյան ճակատում: Հաղթահարելով կազմավորման փուլում գտնվող հայկական զորամասերի դիմադրությունը և գրավելով Արևմտյան Հայաստանն ու Արևելյան Հայաստանի մի մասը՝ թուրքական զորքերը 1918 թ. մայիսի 19-ին ներխուժել էին Արարատյան դաշտ, իսկ մայիսի 21-ին գտնվում էին Երևանից 30, Էջմիածնից՝ 20 կմ հեռավորության վրա՝ Սարդարապատում:

Երևանը և թուրքերի կողմից դեռևս չնվաճված Արևելյան Հայաստանի մյուս շրջանները շրջապատված ու լցված էին Թուրքիայի կողմից ուղղորդվող թուրք-թաթարական տասնյակ հազարների հասնող թշնամական զանգվածով ու զինված հրասակախմբերով: Հեռավոր տափաստաններից հայոց հայրենիքում ոչ վաղ անցյալում բնակություն հաստատած այդ վայրենի զանգվածները տոգորված էին հայությանը սպանելու և թալանելու անզուսպ ցանկությամբ:

Հայոց զինուժը թշնամուն մի քանի անգամ զիջում էր թե՛ քանակապես, թե՛ զինվածությամբ: Այսպես՝ Սարդարապատում թուրքերն ունեին, տարբեր տվյալներով, 6.000-9.000 կանոնավոր զորք և 1.500-3.000 քրդական հեծելազոր, իսկ հայկական կողմը՝ 5.500-7.000 կանոնավոր զորք և աշխարհազորային[6]: Թշնամին ուներ օգնական դիվիզիաներով համալրվելու հնարավորություն, որից հայկական զորքը զրկված էր: Վիճակն ավելի անմխիթար էր մյուս ուղղություններում՝ Ապարանում ու Ղարաքիլիսայում: Արևելյան Հայաստանի զգալի մասն ընդգրկող Երևանի նահանգում սոցիալ-տնտեսական, պարենային դրությունը ծանր էր, կար դեղորայքի սուր պակաս:

Հայ ժողովուրդը բացարձակապես միայնակ էր թուրքական մահասփյուռ հարձակման դեմ: Աշխարհի մեծ ու փոքր երկրները, ինչպես միշտ, զբաղված էին իրենց խնդիրներով և ամենևին մտահոգված չէին (բնականաբար պարտավոր էլ չէին մտահոգվել, պարզապես չպետք է սուտ խոստումներ տային) հայոց ճակատագրով, իսկ թշնամի չհամարվող վրացիները տոգորված էին հայկական տարածքները զավթելու ցանկությամբ:

Այսպիսով՝ բոլոր հանգամանքները դասավորվել էին հօգուտ թուրքերի և ի վնաս հայության: **Հայ ժողովուրդը 1918 թ. մայիսին գտնվում էր կործանման, իսկ Հայաստանը՝ աշխարհագրական հասկացության վերածվելու վտանգի եզրին: Սակայն կատարվեց հրաշքը: Հայ ժողովուրդը 1918 թ. մայիսի երրորդ տասնօրյակում Սարդարապատում, Ապարանում ջախջախիչ պարտության մատնեց, իսկ Ղարաքիլիսայում ծանր, հարգանք պարտադրող հարվածներ հասցրեց թուրքական զորքերին ու վերականգնեց դարեր առաջ կորցրած իր անկախ պետականությունը: Ստեղծվեց Հայաստանի առաջին հանրապետությունը:** Այնուհետև հայ ժողովուրդը բռնեց պետականաշինության, վերածննդի ու զարգացման ուղին: Առաջին հանրապետության հիմքի վրա բարձրացավ Խորհրդային, ապա՝ Երրորդ հանրապետությունը: 1990-ական թթ. ազատագրվեց 1920-ական թթ. բոլշևիկյան Ռուսաստանի կողմից Ադրբեջանին բռնակցված հայկական պատմական տարածքների մի զգալի մասը (մինչ այդ նույնն էր փորձել անել Անգլիան): Այսպիսով՝ Մայիսյան հերոսամարտերը շրջադարձային նշանակություն ունեցան հայոց պատմության հետագա ողջ ընթացքի համար:

Ինչպես հնարավոր դարձավ դեռևս չգերազանցված այդ հրաշքը:

Նախ ընդգծենք՝ 1918 թ. մայիսին նույնպես դժվարությունները հաղթահարվեցին, և հայ ժողովրդի գլխին կախված մահասփյուռ վտանգը չեզոքացվեց հետևողական աշխատանքի, ժամանակի գործիչների պատասխանատվության, խելամիտ ղեկավարման, անձնվիրության, հայրենապաշտության, վճռականության, արդարամտության ու համախմբվածության շնորհիվ:

Մայիսյան բախտորոշ օրերից դեռևս ամիսներ առաջ Արևելյան Հայաստանի զգալի մասն ընդգրկող Երևանի նահանգում իրականացվել էին հետևողական, հաշվենկատ աշխատանքներ՝ թուրքական հավանական հարձակումից հայրենիքն ու ժողովրդին պաշտպանելու համար: 1917 թ. դեկտեմբերին Թիֆլիսի

Հայոց կենտրոնական ազգային խորհրդի, Հայ զինվորական միության, Արևմտահայ ապահովության խորհրդի կողմից Երևան էր գործուղվել Վանի հերոսամարտի կազմակերպիչ ու ղեկավար Արամ Մանուկյանը, որն օժտված էր ծայրահեղ ծանր պայմաններում արդյունավետորեն գործելու կարողությամբ: Այս որոշումը, հիրավի, պատմական էր, միակ ճիշտը: Պետական ինստիտուտների բացակայության պայմաններում միայն Արամի մակարդակի գործիչը կարող էր իրավիճակ շտկել:

1917 թ. դեկտեմբերին, երբ թուրքական հարձակման վտանգը նոր-նոր էր ուրվագծվում, Երևանի փաստացի ղեկավար նշանակված Արամն առաջադրել էր ժողովրդի պաշտպանությանն ու ազատությանը միտված քաղաքական հստակ և իրատեսական ուղեգիծ, ըստ որի՝ հայ ժողովուրդը սեփական ուժերով պետք է լուծեր իր առջև ծառացած խնդիրները: Նա հայտարարել էր. «Ամէն ոք իր մասին է մտածում: Իր երկրի սահմաններից այն կողմ եթէ նայող կայ, նայում է միայն յանուն իր շահերի… Հայերով ո՛չ ոք չի հետաքրքրւում, շօշափելի օգնութիւն հասցնելու մտքով: Դրա հակառակը, կայ դաւադրական վերաբերմունք: Մենակ ենք և պէտք է ապաւինենք միայն մեր ուժերին՝ թէ՛ ճակատը պաշտպանելու և թէ՛ երկրի ներսը կարգ հաստատելու համար»[7]: Այս քաղաքական ուղեգծի ոգով կազմվել էր գործողությունների հստակ ծրագիր, որի քայլ առ քայլ կենսագործմամբ էլ 1918 թ. մայիսին հայ ժողովուրդը փրկվելու էր նոր աղետից[8]:

Թերևս առաջնայինը Երևանի նահանգում իշխանության ուժեղ, պատասխանատու և կենսունակ մարմինների ստեղծումն էր: Մյուս խնդիրների հաջող լուծումը կախված էր դրանից:

Արամը՝ որպես հասուն քաղաքական-պետական գործիչ, գիտակցելով, որ միայն բարի կամքը, հոգեցունց կոչերը, գեղեցիկ հայտարարությունները, ինչպես նաև մեկ մարդու կամ մի խումբ մարդկանց ուժերը բավարար չեն հայության առջև ծառացած հսկայածավալ խնդիրները լուծելու համար, անմիջապես ձեռնամուխ էր եղել երկրամասի իշխանության իրապես գործող մարմինների ստեղծմանը: Կարճ ժամանակում ստեղծվել էր Երևանի Հայոց ազգային խորհրդի լիազորություններով օժտված Հատուկ կոմիտե, որը փոքր կազմով և արագ գործող մարմին էր: Կենսունակություն էր հաղորդվել նախկին իշխանության՝ անգործության մատնված նահանգային, գավառային և գյուղական մարմիններին: Կարելի է վստահորեն ասել՝ պետականության բացակայության պայմաններում ծավալվել էր պետական շինարարություն: Արդեն այդ ժամանակ դրվում էին անկախ պետության հիմքերը: Երևանի իշխանությունը ոչ թե հետևում էր իրադարձությունների ընթացքին, այլ փորձում էր դրանցից առաջ ընկնել և ուղղորդել դրանք: Նրան խորթ էր սպասողականությունը:

Երկրամասում հաստատվել էր պատասխանատվության ու վստահության, համախմբվածության ու համերաշխության մթնոլորտ, որը մեծապես նպաստում էր նույնիսկ ամենաբարդ խնդիրների հաջող լուծմանը: Դա արդյունք էր ամենից

Արամ Մանուկյան

առաջ այն բանի, որ, լինելով կուսակցական, այն էլ՝ ժամանակի հայ իրականության ամենահզոր ու հեղինակավոր ուժի՝ ՀՅ Դաշնակցության ղեկավար գործիչներից, բացառիկ դիրք ու լիազորություններ ունեցող Արամը երկրամասը ղեկավարելու առաջին իսկ օրից դրսևորել էր վերկուսակցական ու հավասարակշիռ դիրքորոշում, անկեղծ և անվերապահ հարգանք քաղաքական բոլոր ուժերի, հասարակության յուրաքանչյուր անդամի նկատմամբ: Այդ առումով թերևս ամենից կարևորը և ուսանելին այն է, որ իշխանության կազմում ընդգրկվում էին ներկայացուցիչներ բոլոր կուսակցություններից, ինչպես նաև անկուսակցականներից՝ հիմք ընդունելով բացառապես նրանց բանիմացությունը, ընդհանուր գործին նրանց օգտակար լինելու կարողությունը: Արամի ու նրա ստեղծած թիմի ապակուսակցական ոգու, արդարամիտ ու հավասարակշիռ գործունեության շնորհիվ Երևանի իշխանություններն արժանացել էին ժողովրդական լայն զանգվածների վստահությանը և ստացել իրական ու հզոր աջակցություն: Երկրամասում հաստատվել էր խոսքի ու գործի ներդաշնակություն, ինչը, բնականաբար, չէր կարող անարձագանք մնալ ժողովրդի կողմից: Դա, ինչպես կտեսնենք, լավագույնս դրսևորվելու էր հայկական զորքի կազմավորման ժամանակ:

Հայրենիքի փրկության գաղափարով համակվել և անդուլ աշխատանքի էին լծվել շատ շատերը՝ անկախ իրենց քաղաքական հայացքներից, սոցիալական դիրքից ու ֆինանսա-տնտեսական կարողությունից:

Ստեղծվել էր հայկական կանոնավոր բանակ: 1918 թ. մարտին հիմնականում ավարտվել էր կանոնավոր բանակի՝ Հայկական կորպուսի Երևանյան դիվիզիայի

կազմավորումը, որը վճռորոշ դեր էր ունենալու Սարդարապատի և Ապարանի հերոսամարտերում: Որոշ չափով հոգացել էին նաև զորքի զենք-զինամթերքի մասին: Ռազմաճակատից՝ Կարսից և այլ վայրերից, Երևան էր փոխադրվել զգալի քանակությամբ զենք-զինամթերք, որը մայիսին օդի պես անհրաժեշտ եղավ հայոց բանակին:

Ինչպե՞ս էր հաջողվել այդքան կարճ ժամանակում ստեղծել կանոնավոր զորք, որի թիվը հասնում էր 12.000-ի: Սա ևս ուսանելի է:

1917 թ. դեկտեմբերի 23-ին Հատուկ կոմիտեն հրապարակել էր «Կոչ հայ զինվորներին» շրջաբերականը, որում ներկայացրել էր իրավիճակի ողջ լրջությունը և բոլորից պահանջել կանգնել հայրենիքի պաշտպանության դիրքերում: Որպեսզի զորակոչը հաջող անցներ, բնականաբար, այն պետք է կազմակերպվեր արդարամտորեն. պետք է զորակոչվեին բոլորը: Այդպես էլ արվել էր: Զորակոչվել էին նաև նախկինում զորակոչից ինչ-ինչ պատճառներով ազատվածները, իսկ զորակոչից խուսափողների և դասալքության դեմ ծավալվել էր անզիջում պայքար:

Երևանի իշխանությունների ցուցաբերած պատասխանատվությունն ու արդարամտությունը այդ և այլ հարցերում անպատասխան չէին մնացել ժողովրդի կողմից: Երբ Երևանի իշխանությունները, պարտադիր զորակոչին զուգահեռ, ժողովրդին կոչ էին արել կամավորագրվելու հայրենիքի պաշտպանության գործին, արձագանքը սպասվածից մեծ էր եղել: Խմբեր կազմած՝ շրջաններից Երևան էին շտապել մեծ թվով զինված քաղաքացիներ՝ «ազգային երգեր երգելով ու դրոշակներով՝ վրան մակագրուած «Մահ կամ Ազատութիւն»»[9] : Ժողովրդի ակտիվությունն ուրախացնում և միաժամանակ մտահոգում էր Արամին: Այդ առիթով Արամը նշել է. «...Վախենում եմ՝ մենք սևերես դուրս գանք մեր ժողովրդի առջև, չկարողանանք կազմակերպել գործը և կորցնենք նրա հաւատն ու վստահութիւնը»[10]: Նկատենք՝ այս խոսքերն ասում էր մի մարդ, որն իր ամենօրյա աշխատանքով ոչ միայն արդարացրել էր ժողովրդի վստահությունը, այլև հիացրել ժողովրդին իր նվիրվածությամբ, արդարամտությամբ, խոսքի ու գործի կատարյալ ներդաշնակությամբ, աշխատանք կազմակերպելու կարողությամբ այնքան, որ երբ որևէ դժվարին խնդիր էր լինում, ժողովուրդն իր հայացքն ուղղում էր դեպի Արամը: Օրինակները բազմաթիվ են և ժամանակի իշխանություններին խորհրդանշող Արամի նկատմամբ խոր հարգանք պարտադրող: Թերևս ամենախոսունն այն է, որ իր համար օրհասական պահին, երբ թեկուզ աննշան սխալը կարող էր մահացու լինել, ժողովուրդը միակամ Արամին ընտրեց «դիկտատոր»՝ օժտելով նրան բացառիկ ու անսահմանափակ լիազորություններով: Պատկերացնո՞ւմ եք՝ եթե չլինեին իշխանության կազմակերպված մարմիններ, կամ Արամը լիներ անպատասխանատու, թուլամորթ, մորթապաշտ ու ստախոս... Անկասկած, այդ պարագայում 1918 թ. մայիսին նույնիսկ ամենամեծ ցանկության դեպքում անհնար կլիներ կազմակերպվել ու դիմադրել հայության ոչնչացմանը ձգտող ցեղասպան թուրքերին:

Ճնշվել էին Թուրքիայի կողմից ուղղորդվող կովկասյան թաթարների (այժմ՝ ադրբեջանցիներ) հակահայկական-հակապետական խռովությունների տասնյակ օջախներ, ինչի շնորհիվ Մայիսյան հերոսամարտերի ժամանակ հայկական զորքի թիկունքն ապահով էր անակնկալներից:

Որոշակի քայլեր էին կատարվել երկրամասում առկա ֆինանսական և պարենային խնդիրները մեղմելու համար: Այդ ուղղությամբ կատարված կարևոր քայլերից մեկը ազգային տուրքի սահմանումն էր, ըստ որի՝ յուրաքանչյուր բնակիչ, ըստ իր կարողության, պետք է որոշակի տուրք մուծեր երկրամասի գանձարան:

Վճռական պայքար էր ծավալվել նաև հայ ավազակային տարրերի դեմ, որոնք թալանում և սպանում էին հայ բնակչությանը: Երկրամասում հաստատվել էր օրինականություն ու կարգուկանոն:Բնականաբար, դա բարձրացնում էր իշխանության հեղինակությունը ժողովրդի շրջանում: Ծրագրված պայքար էր տարվում կեղծ լուրերի տարածումը կանխելու, խառնաշփոթի հրահրումը բացառելու համար:

Իրականացված համալիր քայլերի շնորհիվ 1918 թ. առաջին կեսին, հատկապես մայիսյան ծանր օրերին, հաջողվեց երկրամասում պահպանել հարաբերական կայունություն: Այնուամենայնիվ, թուրքերի հայտնվելը Արարատյան դաշտում մի պահ մեծ իրարանցում առաջացրեց հայ ազգաբնակչության, նույնիսկ քաղաքական շրջանակների, զորքի ու զորահրամանատարության շրջանում: Նույնիսկ Երևանից նահանջելու հարց բարձրացվեց: Հայկական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Թ. Նազարբեկյանը Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդին հորդորում էր դադարեցնել կռիվները թուրքերի դեմ և հաշտություն կնքել՝ միամտորեն կարծելով, թե այդպես հնարավոր կլիներ փրկել զորքի մի մասը և բնակչությանը, մոռանալով, որ թուրքերն իրենց ճանապարհին հայտնված հայերին անխնա կոտորում էին:

Ճակատագրական այդ ժամանակաշրջանում Արամ Մանուկյանը թշնամուն հակահարված հասցնելու անսասան վճռականություն, երկաթյա կամք ու մեծագույն եռանդ ցուցաբերեց: Նա դեռևս Ալեքսանդրապոլի անկումից (մայիսի 15) առաջ հայտարարել էր. «Եթե երբևէ մեր ճակատի վրա թուրքերը սկսեն առաջխաղացումը, մենք անպայման պետք է դիմադրենք զենքով, թնդանոթով և ոչ թե ստրկորեն անձնատուր լինենք և կոտորվենք» [11]:

Մայիսի 19-ին Երևանի Ազգային խորհրդում Արամը վճռականորեն բացառեց Երևանից նահանջը՝ հայտարարելով. «….ոչ մի նահանջ ոչ մի գծի վրա: Նահանջել Երևանից կնշանակի խաչ քաշել մեր ամբողջ գործունեության և մեր ապագա քաղաքական երազանքների վրա, բոլորդ պետք է մնաք և մեռնեք» [12]: Նույն օրը Արամը Երևանյան դիվիզիայի հրամանատար գեներալ Մովսես Սիլիկյանին հանձնարարեց Սարդարապատում թշնամուն վճռական ճակատամարտ տալ՝ խոստանալով համակողմանի աջակցություն ցուցաբերել բանակին:

Ժամանակակիցների վկայությամբ՝ Արամն անդադար շարժման մեջ էր և իր կեցվածքով ոգևորում ու գործողության էր մղում բոլորին. ոչ ոք ոչինչ չէր խնայում հայրենիքի փրկության համար: Ռազմաճակատի հետ մշտական կապ պահպանող և բանակին օժանդակող Արամը երբևէ չմիջամտեց զինվորականության գործին:

Երկրամասի ղեկավարների սառնասիրտ, հաշվենկատ ու հետևողական քայլերի, քաջության ու նվիրվածության շնորհիվ ժողովրդի շրջանում տիրող խուճապը փոխարինվեց ոգևորությամբ:

1918 թ. մայիսյան ճակատագրական օրերին հայկական զորքը կարճ ժամանակում համալրվեց մեծ թվով կամավորներով, որոնք, ի դեպ, ռազմաճակատ էին ուղարկվում կազմակերպված ձևով, այլ ոչ թե քաոսայնորեն, ինչպես դա տեղի ունեցավ 2020 թ. աշնան պատերազմի ժամանակ: Զորքն ապահովվեց նաև զենք-զինամթերքով ու պարենով: Խստագույնս արգելվեց քաղաքից հեռանալը: Ի դեպ, այդ օրերին Արամի հրամանով վճռականորեն ճնշվեց ամենայն հավանականությամբ Թուրքիայի կողմից ուղղորդվող մի խումբ դասալիքների կողմից Երևանում նախապատրաստվող հակապետական խռովությունը, որի նպատակն էր անձնատուր լինել թուրքերին:

1918 թ. մայիսի 22-ին հայկական զորքերը, խնամքով մշակված պլանի համաձայն, Սարդարապատի ճակատում վճռական հակահարձակման անցան և մինչև մայիսի 29-ը տևած ծանր ու արյունահեղ կռիվներում ջախջախիչ պարտության մատնեցին թուրքական գերակշիռ բանակին:

Տալով 3.500 զոհ՝ թուրքերը նահանջեցին դեպի Ալեքսանդրապոլ: Չափազանց կարևոր մի հանգամանք. նախքան հակահարձակման անցնելը ձեռնարկվել էին անհրաժեշտ քայլեր՝ հայկական զորքի վրա Նախիջևանի կողմից և Արաքսի աջ ափից թշնամու անակնկալ հարվածները բացառելու նպատակով, ինչը մենք դարձյալ չտեսանք 2020 թ. աշնանը: Անխափան էր գործում նաև թիկունքը, որտեղ աշխատանքի մեջ հիմնականում ներգրավվել էին կանայք ու երեխաները: Նրանք անտրտունջ բանակի համար հավաքում էին ջուր, հաց, ծխախոտ, փամփուշտներ:

Ոգևորվելով Սարդարապատի ճակատում հայկական զորքերի առաջին հաղթանակից և ստանալով այնտեղից ուղարկված ռազմական համալրումը՝ Ապարանում լեգենդար Դրոյի գլխավորությամբ հայկական զորքերը նույնպես հակահարձակման անցան և ջախջախեցին թուրքերին՝ վերացնելով Երևանը շրջափակելու վտանգը: Պարտված թշնամին նահանջեց նույնիսկ Սպիտակից:

Մայիսի 23-ին ստանալով Սարդարապատում հայոց առաջին հաղթանակի լուրն ավետող Արամի հեռագիրը՝ մինչ այդ Ղարաքիլիսայից խուճապահար Դիլիջան նահանջող հայկական զորամասերն ու ժողովրդական զանգվածները հետ դարձան և, կազմելով միացյալ զորք (հայ կռվողների ընդհանուր թիվը 7.000 էր), թշնամու 10.000-անոց կանոնավոր բանակին հասցրին ծանր ու հարգանք պարտադրող հակահարված: Պարտված թշնամին ընկրկեց և միաժամանակ հրաժարվեց Երևանը գրավելու մտքից:

Մայիսյան հերոսամարտերի շնորհիվ հայ ժողովուրդը կանխեց նոր ցեղասպանությունը, Արևելյան Հայաստանի ամբողջական բռնազավթումը Թուրքիայի կողմից և վերականգնեց իր անկախ պետականությունը: Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը 1918 թ. մայիսի 28-ին վճռեց հռչակել Հայաստանի Հանրապետության անկախությունը: Մինչև Մայիսյան հերոսամարտերը թուրքերը դեմ էին ինքնուրույն Հայաստանի ստեղծման ցանկացած գաղափարի և անշեղորեն ընթանում էին հայությանը ոչնչացնելու ուղիով:

Արձանագրենք ևս մի չափազանց կարևոր իրողություն. թե՛ 1915 թ. և թե՛ 1918 թ. հաղթանակների կերտումն ամենևին չի սահմանափակվում մի քանի օրով կամ նույնիսկ մի քանի ամսով: Այս երկու իրադարձություններին նախորդել էր թուրքական բռնապետության դեմ ծավալված ավելի քան 30-ամյա ազգային-ազատագրական պայքարը, որի ընթացքում ժողովրդական լայն զանգվածների շրջանում կարծրացել էր ազատագրական պայքարի անխուսափելիության և անհրաժեշտության գաղափարը, թրծվել էին հայրենիքի հազարավոր նվիրյալներ, ազատասիրության ու արժանապատվության ոգով կրթվել ու դաստիարակվել սերունդներ:

Թվում է, թե այս և պատմական մյուս դասերը պետք է օգնեին Հայաստանի երրորդ հանրապետությանը չեզոքացնելու հնարավոր վտանգները և արձանագրելու նոր ձեռքբերումներ: Սակայն այդպես չեղավ:

Աղետի վերածված 2020 թ. աշնան պատերազմը:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը Թուրքիայի մեծածավալ աջակցությամբ ու միջազգային ահաբեկչական խմբավորումների ներգրավումով լայնածավալ պատերազմ սկսեց Արցախի Հանրապետության, հետևաբար նաև Հայաստանի Հանրապետության դեմ: Պատերազմը հայ ժողովրդի համար վերածվեց աղետի:

Ինչո՞ւ թշնամին համարձակվեց պատերազմ սանձազերծել, և ինչպե՞ս եղավ, որ այն հայ ժողովրդի,

Հայաստանի և Արցախի հանրապետությունների (այսուհետ՝ Հայաստան) համար ունեցավ ողբերգական վախճան: Եվ ո՞վ է պատասխանատու մեզ պատուհասած աղետի համար: Չէ՞ որ ինքնորոշման ուղին բռնած արցախահայությունը և նրան օգնության հասած համայն հայությունը 1992-1994 թթ. ջախջախիչ պարտության էին մատնել ադրբեջանցի ջարդարարներին և ազատագրել Արցախ-Ղարաբաղից 1920-1930-ական թթ. զավթված ու Ադրբեջանին տրված տարածքները՝ թշնամուն պարտադրելով զինադադար: Չէ՞ որ Հայաստանի երրորդ հանրապետությունը (նաև Արցախի Հանրապետությունը) 30-ամյա կազմակերպված պետություն էր, միատարր երկիր, ուներ պետականությանը հատուկ բոլոր ինստիտուտները՝ բանակ՝ իր ենթակառուցվածքներով, զորատեսակներով ու բավական արդիական սպառազինությամբ, անվտանգության համակարգ, իշխանության օրենսդիր ու գործադիր մարմիններ և այլն (իհարկե, թվարկված ոլորտներում, առհասարակ երկրի սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքում կային նաև լուրջ թերացումներ, բացթողումներ, բացասական երևույթներ, թույլ էին տրվել կոպիտ սխալներ, որոնք էլ հենց 2018 թ. իշխանափոխության կարևոր պատճառներից էին): Չէ՞ որ թշնամին ընդամենը 4 տարի առաջ՝ 2016 թ. ապրիլին, գլխիկոր դադարեցրել էր Արցախի Հանրապետության դեմ սանձազերծած պատերազմը:

Նախ ընդգծենք՝ 2020 թ. աշնան պատերազմում Հայաստանի կրած անհաջողության պատճառն ու գլխավոր, եթե ոչ միակ մեղավորը երկրի քաղաքական ղեկավարությունն է՝ վարչապետի պաշտոնը զբաղեցնող Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, որը, ըստ էության, կամ գործեց դավաճանություն, կամ էլ դրսևորեց բացարձակ անգործունակություն ու անհոգություն: Տվյալ պարագայում անգամ անգործունակությունն ու անհոգությունը չեն կարող մեղմել նրանց մեղքը, քանի որ խոսքը մի ողջ պետության և ժողովրդի պատուհասած ողբերգության մասին է:

2018 թ. ապրիլին Հայաստանում արտաքին ուժերի ու նրանց կողմից առնվազն հովանավորվող և աջակցություն ստացող ներքին ուժերի իրականացրած իշխանափոխությամբ, ավելի ճիշտ՝ թավշյա հեղաշրջմամբ Հայաստանում իշխանության անցավ մի խմբակ, որն իր առաջնորդ **Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ սկզբից ևեթ ցուցաբերեց անպատասխանատու վերաբերմունք Հայաստանի ու հայ ժողովրդի նկատմամբ**: Նոր իշխանություններն անտեսեցին Հայաստանի անվտանգության ապահովման, սոցիալ-տնտեսական զարգացման ու ներքաղաքական կայունության խնդիրները, չներկայացրին երկրի ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր ու հայեցակարգեր՝ ո՛չ հեռակա, ո՛չ էլ նույնիսկ մոտակա: Փոխարենը նրանք ժողովրդին շարունակ ծանրաբեռնում էին երկրորդական, կեղծ, ստահոդ և շինծու օրակարգերով, խնդիրներով ու ձևական, ոչնչով չամրագրվող հայտարարություններով: Օրինակ՝ հայտարարվեց, որ մինչև 2050 թ. Հայաստանի բնակչությունը պետք է հասցնել 5 մլն-ի, բացվելու է 1.5 մլն աշխատատեղ և այլն [13]: Օրակարգ էին մտցվում գերազանցապես մեր ժողովրդի ազգային նկարագրին ու շահերին հակասող կոնվենցիաներ: Հարց էր բարձրացվել նույնիսկ պետական օրհներգի, զինանշանի և դրոշի փոփոխության մասին: Իշխանությունների թողտվությամբ, հովանավորչությամբ ու հրահրմամբ սկսվեց «հներին» հայհոյելու, անհիմն մեղադրանքներ ներկայացնելու արշավ:

21-րդ դարում, երբ օրեցօր բարդացող աշխարհում պետությունները շարունակ հզորացնում, կատարելագործում, ավելի կենսունակ և արդյունավետ են դարձնում իրենց կառավարման համակարգերը, Հայաստանում իշխանության եկած խմբակը, ըստ էության, խարխլեց, կազմալուծեց և անկենսունակ դարձրեց պետական կառավարման համակարգը: Բարձրագույն գործադիր իշխանությունը ենթարկվեց անհեթեթ ձևափոխությունների՝ կրճատումների և միավորումների: Այսպես՝ վերացվեցին երկրի համար ռազմավարական նշանակություն ունեցող գյուղատնտեսության և էներգետիկայի նախարարությունները, համահայկական նշանակություն ունեցող սփյուռքի նախարարությունը: Մեկ նախարարության մեջ միավորվեցին կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտները, ինչը հավասարազոր էր այդ ոլորտների կառավարումը կազմալուծելուն: Սակայն, ինչպես նշում են փորձագետները, իրականում պետական ապարատում աշխատողների թիվը ոչ միայն չկրճատվեց, այլև զգալիորեն ավելացավ: ■

Հղումներ

1. Լեփսիուս Յ., Գաղտնի տեղեկագիր տոքթ. Եօհաննէս Լեփսիուսի, Հայաստանի ջարդերը, թարգմ.՝ Մ. Շամտանճյան, Կ. Պոլիս, 1919, էջ 106:
2. Տես Ôèðáþõâð Ã., Àðìåíèÿ 1915. Óíè÷òîæåíèå Òóðöèåé êóëüòóðíîãî íà¬ðî¬äà. Îòâ. Ðåäàêòîð Â. Ìèêàåëÿí, Åðåâàí, 1991, ñ. 59:
3. Տես Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 242, ց. 1, գ. 74, թթ. 28, 29:
4. Տես ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 74, թ. 39-40:
5. Տես Սահակյան Ռ., Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը (1914 թ. հուլիս – 1917 թ. փետրվար), Երևան, 2015, էջ 149:
6. Տես Աֆանասյան Ս., Սարդարապատի հաղթանակը (Հայաստան, մայիս 1918), թարգմանությունը և վերջաբանը՝ Ռ. Գ. Սահակյանի, Երևան, 1991, էջ 37-38, Փափազեան Վ., Սարդարապատի հերոսամարտը, «Դրօշակ», Աթենք, 1988, 25 մայիս-8 հունիս, № 3-4, էջ 51, Արզումանյան Մ., Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973, էջ 144:
7. Աստուածատրեան Ա., Արամը, «Հայրենիք», Պոսթրն, 1964, ապրիլ, № 4, էջ 70:
8. Տես Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը (ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Երևան, 2009, էջ 162-218:
9. Բժ. Յովակիմ Մելիքեան, Արեան ճանապարհով, «Հայրենիք», Պոսթրն, 1924, № 2, էջ 94:
10. Աստուածատրեան Ա., նշվ. աշխ., էջ 72:
11. Կոսոյեան Հ , Հայկական Թերմոպիլէ, «Դրօշակ», 1928, մայիս, № 5, էջ 137:
12. Շահխաթունի Ա., Արամը. Յիշողութիւններ, «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1921, հունվարի 30, № 670.249:
13. Տես https://www.primeminister.am/u_files/file/Haytararutyunner/Armenia2050_7_5.pdf:

Ինչո՞ւ «Պողոսը» չեկավ հրապարակ (հետպատերազմյան պայքարի 7-ամսյա շրջանի մասին)

Վահե Սարգսյան
Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող

Մեկնարկած քարոզարշավով ավարտվեց Նիկոլին «փողոցի» միջոցով, այն է՝ հանրային լայն ճնշմամբ հեռացնելուն ուղղված պայքարի փուլը: Այն տևեց ուղիղ 7 ամիս՝ 2020 թ. նոյեմբերի 9-ից մինչև 2021 թ. հունիսի 9-ը:

Պայքարեց ընտրախավը

Կարծում ենք՝ կարիք չկա ներկայացնելու անցած 7 ամիսներին տեղի ունեցածի ժամանակագրությունը: Հիշեցնենք միայն, որ այդ փուլում պայքարի ողջ ծանրությունն իր ուսերին էր վերցրել մի շարք քաղաքական և հասարակական շրջանակներից ձևավորված Հայրենիքի փրկության շարժումը: Նիկոլը չհեռացվեց, սակայն հենց շարժման ճնշմամբ նշանակվեցին արտահերթ ընտրություններ, որոնք ևս, թեև ոչ այնքան ցանկալի, այդուհանդերձ, Նիկոլին հեռացնելու ճանապարհներից են:

Ով ներկա է գտնվել գոնե մեկ հանրահավաքի, վստահորեն կվկայի, որ հայրենիքի վաճառքով զբաղվող Նիկոլին և իր խունտային հեռացնելու գործին անցած 7 ամիսներին, հիմնականում լծվեց հայ ազգի ընտրախավը (էլիտան) այն է՝ հասարակության գրագետ, պատվախնդիր, հայրենիքի ապագայով մտահոգված և իր արժանապատիվ ապագան հայրենիքում տեսնող հատվածը: Այն հիմնականում ձևավորվում և դևորվելու հնարավորություն է ունենում գլխավորաբար քաղաքներում և հատկապես Երևանում: Որպես արդյունք՝ պայքարը ծավալվեց գերազանցապես Երևանում և, որոշ բացառություններով, մարզային մի քանի այնպիսի քաղաքներում, որոնք ակնհայտորեն վտանգվել էին Նիկոլի դավաճանական քայլերի պատճառով:

Պայքարին չմիացան քողարկված և բացահայտ գործող դավաճանները

Պարզորոշ է՝ պայքարին չմիացան նախևառաջ ՀՀ-ում բացահայտ գործող գործակալական ցանցի, հայրենիք, բանակ և ազգային ամեն բան մերժող աղանդավորների ներկայացուցիչները, իշխանության՝ Արցախի վաճառքին մասնակցող հատվածը, դավաճանությանը մասնակից գործարար շրջանակները և նրանց պատվերով հասարակությանը մոլորեցնելու գործին լծված անձինք (համացանցի կամ այլ հարթակների «հաչան շները»), Նիկոլին պաշտպանելու գործում անձնական ինչ-ինչ շահեր հետապնդող կամ վախի ազդեցության տակ գործող գրագետ սրիկաները: Այս խմբում ներառենք նաև «նախկինների» դեմ այս կամ այն պատճառով ատելությամբ կամ վրիժառությամբ լցված անհատներին կամ շրջանակներին: Այդ մարդիկ այդպես էլ չհաղթահարեցին իրենց այդ բարդույթը, չգիտակցեցին պետությանն ու իրենց սպառնացող վտանգի չափն ու աստիճանը և դուրս չեկան պայքարի: Փաստենք նաև, որ մի մասի մոտ ատելությունը պարզապես վերածվել է հիվանդության այն աստիճան, որ նրանք օրը ցերեկով կարող են հայտարարել՝ ավելի լավ է երկիրը թուրքին

հանձնվի, քան թե «հներին»: Եվ վերոհիշյալ շրջանակները կամ տներում քաշված լռեցին, կամ բացահայտորեն դեմ դուրս եկան հայրենիքի փրկության պայքարին՝ սատարելով Նիկոլին: Գտնվեցին նաև այնպիսիք, որոնք դիմեցին մանր և պարզունակ խորամանկության՝ հայտարարելով, թե իբր պայքարի դուրս եկած բազմահազար մարդկանց մեջ կան ոմանք, որոնց իրենք չեն ընդունում (նման ճոճիմ պահվածքի պարագայում անգամ ավելորդ ենք համարում հռետորական հարց տալ վերջիններիս՝ վաճառվող հայրենիքը և կործանվող երկիրը մի՞թե նաև իրենցը չէ):

Ինչո՞ւ «Պողոսը» չեկավ հրապարակ:

Հայ հասարակության՝ ազգային ինքնագիտակցությունից տկար հատվածը, որին այստեղ պայմանականորեն կկոչենք «Պողոս», ևս չմասնակցեց պայքարին: Թե ինչու պայքարին չմիացան քողարկված և բացահայտ գործող դավաճանները, կարծում ենք՝ կարիք չկա պարզաբանելու, և այստեղ ամեն ինչ «օրինաչափ է»: Վերևում որոշ հանգամանքներ արդեն ներկայացրել ենք դրա առնչությամբ:

Ինչո՞ւ հրապարակ չեկավ նաև «Պողոսը» և չմիացավ պայքարող ընտրախավին, ինչի հետևանքով չհաջողվեց հեռացնել Նիկոլին, և հնարավորություն տրվեց նրան շարունակելու ՀՀ-ի դեմ ուղղված դավադիր ծրագիրը: Առանձնացնենք մի քանի գլխավոր պատճառներ.

- Արցախի հանձնումը և ՀՀ կազմաքանդման գործընթացը տարիների աշխատանքի հետևանք էին, և 2020 թ. տեղի ունեցածը դրա գագաթնակետն էր: Բնականաբար, արևմտյան ծագում ունեցող կազմաքանդիչ ուժերը լավագույնս աշխատել են «Պողոսի» հետ՝ վերջինիս պարզ ու խոպան գիտակցությունը դնելով փորձված տեխնոլոգիաների մամլիչի տակ:
- Հայրենիքի փրկության շարժումը պայքարի հենքում դրել էր ազնվությունը: Հավատ ընծայելով հայ ժողովրդի՝ վճռական պահերին պայքարի դուրս գալու հատկությանը, հույս դնելով հայ տեսակի՝ հայրենի

հողի, Արցախի հանդեպ անսահման սիրո և «հող հանձնողին հողին հանձնելու» կարգախոսի ամրության վրա՝ Հայրենիքի փրկության շարժման գործիչները զերծ մնացին գունավոր հեղափոխությունների ժամանակ կիրառվող, աշխարհում փորձված և զանգվածների վրա հզոր ներգործություն ունեցող մեթոդների ու տեխնոլոգիաների կիրառումից:

• Շարժումը որպես հասարակությանը փողոց դուրս բերելու եղանակ ընտրել էր ազգային հարցերի արծարծումը: Շարժման՝ ամիսներ տևող հանրահավաքների ելույթները, չնչին բացառություններով, նվիրված էին Արցախի դավաճանական հանձնմանը, դիտավորությամբ 5000 զոհեր տալուն, հանձնված շրջաններում ապրած ազգաբնակչությանը տնավեր և գաղթական դարձնելուն, Շուշի բերդաքաղաքի վաճառքին, Արցախի հայոց բազմահազարամյա մշակույթի, գանձերի հանձնմանը, «բանավոր ըմբռնումներով», իսկ իրականում գաղտնի պահված դավադիր համաձայնագրերով Սյունիքի ռազմավարական դիրքերի հանձնմանը և այլն, և այլն: Այդպիսով շարժման քարոզչական հիմնական գործիքակազմում տեղ էին գտել այնպիսիք, որոնք արթնացնելու էին մարդկանց ներսում «հայրենիքը», «Արցախը», «Շուշին», «Հադրութը», «Դադիվանքը», «Ծիծեռնավանքը» և «Կովսականը», «արժանապատվությունը», «հայրենատերը» և այլն: Բավարար էր դա արդյոք, որպեսզի «Պողոսը» դուրս գար փողոց: Պարզվեց՝ ոչ:

• Շարժման ներկայացուցիչների ելույթներում գրեթե բացակայում էր սոցիալական բաղադրիչը: Կրկին տուրք տալով ազնիվ և ոչ ամբոխավար մոտեցումներին՝ Հայրենիքի փրկության շարժման ներկայացուցիչները «Պողոսին» հրապարակ բերելու համար չխաբեցին նրան և չհայտարարեցին, որ եթե «Պողոսը» դուրս գա և քշի Նիկոլին, կապրի կուշտ ու երջանիկ: Առաջնային համարելով հայրենիքի կորստին, պետականության խարխլմանն ու ազգային անվտանգությանն առնչվող խնդիրները՝ շարժման ներկայացուցիչները «ստամոքսի» խնդիրը մղեցին հետին պլան: Եվ երբ ազգի և հայրենիքի ճակատագրով մտահոգ մարդիկ Ազատության և Հանրապետության հրապարակներում, Բաղրամյան և Դեմիրճյան փողոցներում ահազանգ էին հնչեցնում՝ գիտակցելով աղետի մեծությունն ու հետևանքները, նույն այդ ժամին «Պողոսը» ըմբոշխնում էր իր բորշչը, դիտում Հանրային հեռուստաընկերության կամ «Ազատություն» ռադիոկայանի մոլորեցնող հաղորդումները, փնթփնթում փողոցում պայքարողների հասցեին և, մոլորեցնող լուրերից հիպնոսացած, խռմփացնում ննջարանում: Եվ քանի դեռ «Պողոսի» բորշչը և ննջարանը տաք են, իսկ հիպնոսացնող լուրերի և քարոզչության պաշարը՝ առատ, «Պողոսը» կմնա կույր՝ որևէ կերպ չտեսնելով հայրենիքին և իրեն սպառնացող աղետը:

• Նիկոլը փայլուն կերպով խաղաց մոլորեցնողի իր դերը և շարունակեց հենվել իր գլխավոր հենասյան՝ «Պողոսի» վրա: Հայրենիքի փրկության համար պայքարը՝ ազգային պայքարը ներկայացնելով որպես «պարզ աթոռակռիվ», «հների վերադարձ», «մտացածին սադրանքներ խաղաղություն բերած իշխանությունների դեմ»՝ Նիկոլ Փաշինյանը, կիրառելով հանրությանը մոլորեցնելու փորձված մեթոդներ, արագորեն իր կողմը գրավեց «Պողոսին»: Ավելին, քաջատեղյակ լինելով «պատերազմ» կոչված բեմադրության ժամանակ դավադիր գործողություններից արնաքամ եղած, պաշտպանական համակարգի դիտավորյալ կազմալուծման պայմաններում բազմահազար զոհեր ու վիրավորներ, տասնյակ հազարավոր անօթևան ընտանիքներ, հարյուրավոր գերիներ ունեցող հասարակության բարոյահոգեբանական վիճակին ու հուզական ապրումներին, Փաշինյանը, պարզ հայրենավաճառի իր դեմքը ծածկելով փրկչի դիմակով, շտապեց հայտարարելու, որ ինքը ոչ ավել, ոչ պակաս հերոս է: Որպես արդյունք՝ իրերի տրամաբանությունը գլխիվայր շրջվեց. նա, ով դավադրաբար հանձնել էր հայրենիքը և սպանդի ենթարկել հայ ժողովրդին, դարձավ «պատերազմը կանգնեցնող», «կյանքեր փրկող», «խաղաղություն բերող» «փրկիչ», իսկ Հայրենիքի փրկության շարժմանը միացողները՝ «դավաճաններ», «պատերազմ ուզողներ», «երեխաներին թուրքի բերան տալ ցանկացողներ» և այլն: Եվ «Պողոսը», որը սարսափած էր պատերազմից, վերստին դարձավ Նիկոլ-Նեռի իշխանության զոհը:

«Մենք աշխատանքային մակարդակում քննարկումներում իմ հրաժարականի պահանջը ձևակերպում ենք «էլիտար բունտ»». Նիկոլի՝ Հայրենիքի փրկության շարժման պայքարի օրերին արված այս արտահայտությունը կարելի է համարել նրա՝ երկուսուկես տարվա իշխանական կյանքի ընթացքում արած ամենաանկեղծ խոստովանանքը: Փաշինյանն անգամ չերկմտեց բարձրաձայնելու, որ ինքը կապ չունի երկրի էլիտայի հետ և տիպիկ գավառականության մարմնացում է: Բայց մենք հակված ենք այն մտքին, որ այդ ամոթալի իրողությունն ամենևին էլ գավառական միամտությամբ չէ, որ հրապարակավ հայտարարեց նա: Փաշինյանը լավագույնս գիտակցում է, որ իր քաղաքական և սոցիալական հենարանն ամենևին էլ էլիտան չէ: Նա մշտապես իր իշխանության հենարանն է համարել նախորդիվ հիշատակված ուղղակիորեն կամ անուղղակիորեն գործող դավաճաններին և մոլորյալ «Պողոսին»:

Այսպիսով՝ այս գործընթացների և իրողությունների պայմաններում անցած 7 ամիսներին Փաշինյանի իշխանությունն անցավ թուրք-ադրբեջանական տանդեմի հետ ունեցած դավադիր պայմանավորվածություններով նախատեսված գործողությունների հերթական (հետպատերազմյան) փուլի իրագործմանը: Այդ պայմաններում ՀՀ-ն և հայ ժողովուրդը թևակոխեցին հունիսյան ընտրական շրջափուլ:

Ահա և վճռական խոսք ասելու հերթը ժողովրդինն է, որն, իրականության թելադրած բազմաթիվ դրդապատճառներով հիմնականում կողքից հետևեց տեղի ունեցողին, բայց ի վերջո միշտ ոտքի է կանգնել, երբ վերջին պահին շոշափելիորեն զգացել է, որ իր դիրքորոշմամբ է պայմանավորված երկրի լինել չլինելու պատմական երկընտրանքի լուծումը: Այս աստեղային ժամին է, որ ուղենիշները կորցրած ժողովուրդը վերածվում է ազգի:

Մտորումներ՝ քուէի ու քուէարկութեան մասին

Վիգէն Աբրահամեան

«— Չեմ ըսեր, կնիկ, թաղականին գործն ալ այսօր լմնցուցինք. կիրակի օրը քուէարկութիւնը պիտի կատարուի, և բոլոր անդամները պատուաւոր մարդիկ պիտի ըլլան: Թորոս աղան ինծի քանի մը օրի խմցունելով եւրեւէս ինկաւ որ իւր ուզած մարդոցը քուէ տամ, բայց ես իմ մարդոցս տուի, վասն զի իմ մարդիկս ինծի ամեն գիշեր օրի կը խմցունեն և շատ բարի ու պատուաւոր մարդիկ են...»

Յակոբ Պարոնեան
(«Մեծապատիւ մուրացկաններ», Գ. տպագրութիւն, Թիֆլիս, 1895: էջ 28)

Արդի ժողովրդավարութեան հիմնական սիւնը յայտարարուած է քուէն, որպէս անհատ քաղաքացիի և, հետևաբար, ժողովուրդի կամքի արտայայտութեան գլխաւոր միջոցը և անառարկելի չափանիշը որևէ իշխանութեան օրինականութեան: Արևմուտքը մեծ աղմուկով դիտորդներ կ'ուղարկէ աջ ու ձախ, այս կամ այն քուէարկութեան արդարացիութիւնը՝ հետևաբար անոր հիմամբ ընտրուած իշխանութեան օրինականութիւնը հաստատելու համար, անշուշտ պայմանաւ որ այդ իշխանութիւնը իր սրտով ըլլայ, այլապէս... Օրինակի համար, Եգիպտոսի պատմութեան ամենաազատ քուէարկութիւնը՝ 2012ին նախագահի աթոռին հասցուց Մոհամմատ Մուրսին, սակայն Արևմուտքը ծպտուն չհանեց երբ հազիւ տարի մը ետք բանակը պետական հարուածով զայն տապալեց, խորհրդարանը արձակեց, 800 ցուցարարներ սպանեց ու երկիրը վերադարձուց 1952 էն ի վեր տիրող բռնատիրութեան: Մինչդեռ գրեթէ նոյնանման կացութիւն մը այս տարի Միանմարի մէջ տեղի տուաւ ահռելի աղմուկ-աղաղակի, պատժամիջոցներու և այլն:

Սակայն եթէ երթանք ժողովրդավարութեան ակունքներուն, մինչև Աթէնք, պիտի տեսնենք թէ քուէարկութիւնը միշտ չէ, որ համարուած է ժողովրդավարութեան կիրարկման լաւագոյն տարբերակը: Քանի որ քուէարկութեան նպատակը լաւագոյն կամ առնուազն յարմարագոյն տարբերակի մը ընտրութիւնն է երկու կամ աւելի հնարաւորութիւններու ցանկէ մը, — ըլլան անոնք անձինք ինչ-որ պաշտօնի մը կամ որոշումներ հաւաքականութեան առջև ցցուող խնդրի մը լուծման համար, ժողովրդավարութեան ռահվիրաները միշտ ալ վերապահութեամբ մօտեցած են քուէարկութեան, և յաճախ նախընտրած այլ տարբերակներ, մասնաւորաբար վիճակաձգութիւնը: Աթէնքի մէջ նոյնիսկ ընդունուած էր, թէ վիճակաձգութիւնը ժողովրդավարական է, իսկ քուէարկութիւնը կը նոյնացուէր սակաւապետութեան (օլիգարխիա) հետ, որովհետև քուէարկութիւնը կը թոյլատրէ, որ մեծ կարողութիւններու տէր անձինք իրենց կարողութիւնները օգտագործեն քուէարկութիւնը իրենց ի նպաստ շեղելու համար:

Ժողովրդավարութիւնը բաւական երկար ճամբայ կտրած է Աթէնքէն ի վեր, ոչ միշտ հեզասահ: Աթէնքը նուաճած հռոմէացիները կը հաւատային քուէարկութեան, որովհետև ունէին սակաւապետական հակումներ և ի վերջոյ իրենց ժողովրդական փորձը յանգեցաւ Յուլիոս Կեսարի ամբոխապետութեան և Հռոմի հանրապետութիւնը դարձաւ Հռոմէական կայսրութիւն, որուն «ձևաչափ»ը այս կամ այն պատկերով հասաւ մինչև մեր օրերը:

Հռոմի հանրապետութեան ժողովրդավարական փորձը երբ քիչ մը մօտէն ուսումնասիրենք, բազմաթիւ զուգահեռներ կարելի է գտնել այսօրուան քաղաքական բեմերուն հետ, մանաւանդ եթէ ուսումնասիրենք քաղաքական պայքարներու ընթացքին օգտագործուած մեքենականութիւնները՝ քուէարկութիւններու խարդախութիւններէն մինչև որևէ թեկնածուի թեր կամ դէմ հանրային կարծիք ձևաւորելու միտող բամբասանքային արշաւները՝ վճարովի գործակալներու ցանցերով հանդերձ, որոնք իրենց մասնագիտականութեամբ չէին զիջեր մերօրեայ ֆէյսպուքային արշաւներուն:

Այսօր ժողովրդավարութիւն հասկացութիւնը նոյնացած կը թուի քուէարկութեան հետ, մինչդեռ քուէարկութիւնը պարզապէս ձև մըն է հաւաքական որոշում կայացնելու որոշ խնդրի մը մասին, ընտրելու հարցի մը լուծման տարբերակներէն մէկը, կամ որոշ պաշտօնի մը համար յարմարագոյն անձը: Այս ձևով դրուած, քուէն պարզապէս անհատ քուէարկողի կարծիքն է տուեալ խնդրին մասին, որոնց համադրուած արդիւնքով կ'որոշուի հաւաքականութեան ընելիքը: Ու երբ հաւաքականութեան անդամը կը փորձէ առարկել այս կամ այն որոշման դէմ, անմիջապէս իր դէմ կը դրուի պարզագոյն փաստարկը, թէ որոշման հեղինակը ի՞նքն է՝ իր քուէով:

Եւ հոս է որ կը սկսի ժողովրդավարութեան ողբերգութիւնը: Քուէարկութեամբ է, որ Իտալիան ու Գերմանիան ունեցան Մուսոլինի ու Հիթլեր, Թուրքիան ունեցաւ Էրտողան, իսկ մենք, ետ չմնալու համար համաշխարհային ալիքներէն, ունեցանք քայլառածներ:

* * *

Ինչպէս ըսինք, քուէն անհատ քուէարկողի կարծիքն է տուեալ խնդրին կամ անձին մասին, եթէ հարցումը կը վերաբերի պարզապէս պաշտօնի մը համար այս կամ այն թեկնածուի յարմարութեան: Օրինակ, քուէարկողէն կը պահանջուի հաստատել երկրի նոր սահմանադրութիւնը, կամ որոշել թէ ո՞վ պիտի ըլլայ երկրի ղեկավարը: Քուէն, ուրեմն, տուեալ քաղաքացիի կարծիքն է սահմանադրութեան մասին, կամ առ այն, թէ ո՞վ աւելի յարմար է երկրի մեծ կամ փոքր խնդիրները լուծելու համար:

Առաջին հարցումին բարեխղճօրէն պատասխանելու

համար պէտք է քաղաքացին գոնէ կարդացած և հասկցած ըլլայ առաջարկուած սահմանադրութիւնը: Իսկ երկրորդին համար, ան պէտք է նախ իմանայ և ըմբռնէ, թէ երկրին առջև ինչ խնդիրներ կան ծառացած, պէտք է ճանչնայ թեկնածուները և իրենց կարողութիւնները, ապա նստի և որոշէ, թէ ներկայացուած թեկնածուներէն ո՞վ է յարմարագոյնը՝ այդ խնդիրները լուծելու համար:

Եկէք ձեր ձեռքերը ձեր խիղճերուն վրայ դրէք և ինծի վստահեցուցէք, թէ միջին քաղաքացին ի վիճակի է ըմբռնելու և հասկնալու սահմանադրութեան այն տարբերակը, որուն օգտին կամ ընդդէմ քուէարկել կը պահանջուի իրմէ, և իր որոշումը իսկապէս մտածուած ու կշռադատուած է, կամ թէ նոյն այդ միջին քաղաքացին խորապէս քննած է երկրին առջև ծառացող մօտաւոր և հեռաւոր մարտահրաւէրները, կը ճանչնայ հրապարակ իջած թեկնածուները և կրնայ յստակօրէն կողմնորոշուիլ, թէ անոնցմէ ո՞վ կրնայ ըլլալ լաւագոյն անձը տուեալ մարտահրաւէրներուն ընդառաջ, եթէ յաջողիք աչքերուս մէջ անթարթ նայելով ինծի այդ վստահութիւնը տալ, ձեր անունը անձամբ կը ներկայացնեմ յաջորդ «Օսկար»ի մրցանակաբաշխութեան՝ որպէս լաւագոյն դերասանի:

Անհեթեթութիւն է միջին քաղաքացիէն պահանջել նման կարողութիւններ: Ան ստիպուած պիտի ըլլայ կողմնորոշուելու ոչ թէ առարկայական տուեալներու վրայ հիմնուած իր սեփական կարծիքին հիմամբ, այլ այս կամ այն կողմի կարծիքները համեմատելով, երբեմն պարզապէս այս կամ այն կողմին նկատմամբ իր նախասիրութենէն դրդուած, առանց մտածելու:

Շատեր այս երևոյթը կը բացատրեն քաղաքական մշակոյթի բացակայութեամբ: Շատ հակուած չեմ այդ բացատրութեամբ բաւարարուելու և համակերպելու ներկայ դրութեան հետ, որովհետև «քաղաքական մշակոյթ»ը պէտք չէ փնտռել միջին քաղաքացիին մօտ, այլ քաղաքական վերնախաւին՝ անոնց մօտ, որոնք պէտք է ունենան այդ մշակոյթը և ընդհանրապէս չունին: Պարզապէս երբ միջին քաղաքացին կը դնենք իր կարծիքը յայտնելու պարտադրանքին տակ, ան, չունենալով հնարաւորութիւնը կամ կարողութիւնը խորքային վերլուծում կատարելու և ըստ այնմ իր կարծիքը բանաձևելու, պիտի բաւարարուի դիմելու իր նախազգացումներուն և այլ զգացական բացատրութիւններու, իր կարծիքը պարզեցնելով մինչև խնդրոյ առարկայ թեկնածուն սիրելու կամ չսիրելու մակարդակին: Իսկ զանգուածային լրատուամիջոցներու չափազանցեցուած պարզեցումները, զանգուածային հաւաքներն ու կարգախօսային ժխորը, որոնք անխուսափելի ընկերակիցներն են ժողովրդավարութեան մերօրեայ տարբերակներուն, քաղաքացիին չեն օգներ, որ կարենայ հասկնալ խնդիրները, սառնասրտօրէն գնահատէ թեկնածուները, «թացն ու չորը» զանազանէ (չըսելու համար սուտն ու ճիշտը) և ըստ այնմ քուէարկէ: Ամբողջ աշխարհի լուսարձակներուն տակ, ամերիկեան ժողովրդավարութիւնը 2016ին կատարեց վերոնշեալի գիտական ապացուցումը՝ Թրամփը հասցնելով նախագահի աթոռին:

Ենթադրուած է, որ քաղաքական կուսակցութիւնները, որոնց նախատիպարները նոյնպէս կը գտնենք հին Հռոմի մէջ, գուցէ աւելի հեռուն, պիտի կատարեն զտիչ, բիւրեղացուցիչ դեր և միջին քաղաքացիին համար յստակ գաղափարներով հանդէս գան, որպէսզի վերջինս կարենայ լաւագոյնս պատասխանել իր առջև դրուած հարցումներուն, ինչպէս աշակերտը կը դիմէ համացանցային աղբիւրներու իր քննութեան հարցարանը լրացնելու համար, սակայն միշտ չէ, որ կուսակցութիւնները իրենցմէ ակնկալուած բարձրութեան վրայ կ՚ըլլան: Ընդհանրապէս անոնք չեն խորշիր սուտ խօսելէ, որովհետև նախընտրական խոստումները հակում ունին մոռցուելու ընտրութեան յաջորդ օրն իսկ, ուստի նախընտրական խոստումները ընդհանրապէս կ՚ըլլան մեծադղորդ, շողշողուն և ծայրայեղ լաւատեսական՝ նոյնիսկ երևակայածին: Բացառութիւնները միշտ յարգելի են, սակայն մարդկային ականջները աւելի հակուած են հեքիաթ լսելու վարդագոյն ապագայի մասին, քան լուրջ խօսքեր գալիք ծանր օրերուն մասին: Հազուագիւտ բացառութիւններէն է Բ. աշխարհամարտի սկզբնական շրջանին, նորանշանակ վարչապետ Չըրչիլ 13 մայիս 1940ին խորհրդարանի ամբիոնէն կը յայտարարէր. «Խոստանալիք ոչինչ ունիմ բացի արիւնէ, տքնանքէ, արցունքէ ու քրտինքէ» ("I have nothing to offer but blood, toil, tears and sweat."). Եւ այդ խոստումով ստացաւ խորհրդարանի վստահութեան քուէն: Հարցական կը մնայ, թէ արդեօք այդ կարգախօսով կրնար շահիլ նաև համաժողովրդական քուէն...

* * *

Արդար չէ միջին քաղաքացին պատասխանատու համարել իր քուէարկութեան արդիւնքով իշխանութեան հասած այս կամ այն խեղկատակի ձախաւերութիւններուն: Լաւագոյն պարագային, միջին քաղաքացին կրնայ յստակ կարծիք ունենալ իր անմիջական շրջապատին մասին, — թէ ինչ են իր գիւղի կամ թաղի անմիջական և ապագայ կարիքները, գիտնալ թէ ո՞վ ինչ կարողութիւններ ունի, իր համագիւղացին է, կամ թաղեցին, որուն հետ անմիջական ծանօթութիւն ունի, որուն կենսագրութեան քիչ թէ շատ ծանօթ է, — և ըստ այնմ կողմնորոշուիլ, թէ որուն տայ իր քուէն՝ բնակավայրային իշխանութիւն կազմելու համար: Մնացեալ բոլոր հարցերուն համար, ան ոչ կարողութիւնը, ոչ ալ ժամանակը ունի նստելու, երկար ու բարակ քննելու, ապա միայն իր կարծիքը տալու:

Միակ բանը, որ քաղաքացին կրնայ ընել ճիշտ կողմնորոշուելու համար, ընտրապայքարի մէջ նետուած ուժերու ծրագիրներուն ու կարգախօսներուն մօտէն հետևիլն է: Սակայն ամենափայլուն ծրագիրներն ու կարգախօսները ընդհանրապէս հակուած են մնալու թուղթի վրայ. անոնք պարզապէս առևտրական գովազդներու կատարելագործուած ձևեր են և ընդհանրապէս չեն ցոլացներ զիրենք կրողի իսկական նպատակները, յատկապէս երբ վերջինս նորաթուխ կազմակերպութիւն մը է, գոյացած բացառապէս ընտրական նպատակներով, և շատ հաւանաբար չդիմանայ իսկ մինչև յաջորդ ընտրութիւնները:

Արդեօք կա՞յ ձև մը ժողովրդավարութեան Գորդեան հանգոյցը լուծելու, թէ տակաւին ի զօրու է Չըրչիլի թեւաւոր խօսքը, որ «ժողովրդավարութիւնը կառավարման վատագոյն ձևն է, բացի բոլոր այն ձևերէն, որոնք ատեն-ատեն փորձուած են» ("democracy is the worst form of Government except for all those other forms that have been tried from time to time"): Այդ մասին կը փորձենք ծաւալիլ յառաջիկային:

Ինչպիսի՞ն են լինելու ապագայում պատերազմները (Արցախյան պատերազմի արձագանքները)

Թաթուլ Հարությունյան

Արցախյան վերջին պատերազմի զուտ ռազմական արդյունքները խորհելու, մտորելու առիթ, ինչու չէ, նաև դասեր են՝ ուղղված ապագային: Այս պատերազմը կարելի է դասել տևողությամբ կարճ, բայց ժամանակակից հզոր պատերազմների շարքին: Դժվար է հիշել վերջին տասնամյակներում տեղի ունեցած մի պատերազմ, որն ընթացել է այդքան նորարարական տեխնոլոգիաներով հագեցած սպառազինության կիրառմամբ՝ միաժամանակ բացահայտելով արդեն եղած պաշտպանական համակարգերի, ինչպես նաև ավանդական զինատեսակների համեմատաբար ցածր արդյունավետությունը:

Վեց շաբաթ տևած Արցախյան պատերազմի բուռն ընթացքը ուսումնասիրության ու վերլուծության առումով շատ ավելի երկար ժամանակ և աշխատանք է պահանջելու: Արդեն իսկ համաշխարհային փորձագիտական տարբեր կենտրոններ տեղի ունեցածին արձագանքել են հոդվածներով, ակնարկներով և վերլուծական ուսումնասիրություններով:

Կարելի է ասել, որ Արցախյան պատերազմը հնարավորություն ընձեռեց, այսպես ասած, «բանալու անցքից» նայելու ապագայի պատերազմներին, քանի որ մասնակից կողմերը կիրառեցին պատերազմ վարելու բազմաթիվ նորարարական մեթոդներ, նոր տեխնոլոգիաներով հագեցած սպառազինություն և զինատեսակներ: Թեև Արցախյան պատերազմը արևմտյան լրատվամիջոցներով բնորոշվել է որպես միկրոպատերազմ, այդուհանդերձ, այն «ազդարարում» և ուրվագծում է այն նորագույն չափորոշիչներն ու ուղղությունները, որոնք նախանշելու են ապագայի ռազմական բախումների բնույթը՝ անկախ դրանց ծավալներից, ընդ որում, դրանք կկանխորոշեն այդ մարտական գործողությունների արդյունավետությունը:

Վերոնշյալի ապացույցներից է փորձագիտական-վերլուծական հոդվածների քանակը, որոնք վերջին ժամանակներում լույս են տեսնում Եվրոպայում: Ուշագրավ է Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարարության, Միացյալ Թագավորության պաշտպանության և անվտանգության վերլուծական անկախ ինստիտուտի (RUSI–Royal United institute) պատրաստած ծավալուն զեկույցը: Ի դեպ, բրիտանացիները մի քանի պատճառ ունեին մանրամասն վերլուծելու շատերի համար ոչ այնքան կարևոր փոքր պատերազմը:

Նշենք, որ Արցախյան պատերազմում օգտագործվել են ռուսական արտադրության հրթիռա-հրետանային համակարգեր, որոնց դիմակայել են արևմտյան, թուրքական և իսրայելական նորագույն զինատեսակներ: Հենց Արցախյան պատերազմում են զանգվածաբար կիրառվել ԱԹՍ-ներ, տեղորոշող-

հետախուզական և հարվածային անօդաչու թռչող սարքեր, ինքնաթիռներ: Միանշանակ է այն, որ այդ միջոցներն առանցքային դեր են ունեցել ինչպես պատերազմի կարևորագույն դրվագներում, այնպես էլ առհասարակ պատերազմի ելքի հարցում: Հենց այս տվյալներից ելնելով են բրիտանացիները գնահատում ապագա ռազմական ներդրումները և դրանց առաջնահերթությունները: «RUSI»-ի կարծիքով. «Անդրկովկասյան փորձադաշտը ստիպում է վերանայել ու վերարժևորել հատկապես ցամաքային ռազմական ուժերի դերն ու նշանակությունը, ինչպես նաև դրանց արդիականացման հարցը մոտ ժամանակներում»:

Ամերիկացիները, ֆրանսիացիները, չինացիները, հնդիկներն ու ռուսները հետ չեն մնում բրիտանացիներից՝ հասկանալով, որ հայ-ադրբեջանական լոկալ պատերազմի ռազմական արդյունքները նախանշելու են ռազմական ոլորտի ռազմատեխնոլոգիական հեղափոխության հեռանկարները: Նույնիսկ ռազմական գործողությունները դեռ չավարտված՝ ֆրանսիական ու գերմանական մամուլում հայտնվեցին հեղինակավոր փորձագետների հոդվածներ, որոնք ոչ ավել, ոչ պակաս ազդարարում էին տանկերի՝ որպես ցամաքային հարվածային զինատեսակի անարդյունավետության ու «մահվան» մասին: Զրահապատ զորքերի ջախջախումը ԱԹՍ-ների դեմ մարտում, հատկապես հայկական ուժերի պարագայում, ցույց է տալիս, որ տանկը դառնում է «պատմական» զինանոցի նմուշ: Օրինակ՝«RUSI»-ի վերլուծաբան Զաք Վայթլինգի կարծիքով՝ Ադրբեջանի կիրառած ԱԹՍ-ները ոչնչացրել են հայկական տանկերի 80 տոկոսը, որը 3 անգամ ավելի է, քան հայկական հակատանկային հրետանու և կառավարվող հրթիռների կողմից խոցված ադրբեջանական տանկերի, զրահապատ տեխնիկայի քանակը: Ընդ որում, հատուկ նշվում է, որ հայկական կողմը իր խոցումների մեծ մասը կատարել է մոտ տարածության վրա մղվող մարտերի

ընթացքում, հաճախ՝ լավ պատրաստված, լեռնային տեղանքին քաջածանոթ իր մարտիկների անօրինակ քաջության շնորհիվ: Սրան հակառակ՝ Ադրբեջանի զինված ուժերի համարյա բոլոր խոցումները իրականացվել են հեռու տարածությունից կամ օդից, հաճախ՝ ռազմաճակատի գծից հեռու գտնվող վայրերում: Այս ամենով հանդերձ՝ նույն Վաթլինգը բոլորովին չի ստորադասում տանկերի դերը՝ գրելով. «Չկա մեկ այլ արդյունավետ միջոց՝ տարածքից հակառակորդին դուրս մղելու, քան տանկերը»: Ժամանակակից պատերազմների ինստիտուտից Ուեստ Փոյնթի՝ Ռազմական ակադեմիայի համար պատրաստված զեկույցում գրեթե նույն տեսակետն է հնչում հետևյալ ձևակերպմամբ. «Չկա մինչ այժմ եղած զինատեսակների մեջ մեկը, որն ավելի արդյունավետ կգործի դիրքավորված հետևակին դուրս մղելու գործում, քան տանկերը»: Հարց է, սակայն, թե ինչ միջոցներով և ինչպիսի տեղաշարժով կարելի է հասնել առաջնագիծ՝ պաշտպանվելով միաժամանակ թշնամու հեռահար կամ օդային կրակից:

ԱԹՍ-ների ու տանկերի հակամարտության դեպքում ամեն ինչ պարզ է: Եզրակացությունը՝ հակաօդային պաշտպանությունը ևս չի կարող արդյունավետ միջոց լինել միայն բարձրագույն ու կենտրոնացված համակարգի դեպքում, որը կհայտնվի այս կամ այն տարածքում՝ կոնկրետ տարածքը պաշտպանելու նպատակով: Բացարձակ անհրաժեշտություն է դառնում հակաօդային խորքային և գոտիավորված պաշտպանության կազմակերպումը՝ այլ զորամիավորումների, այդ թվում՝ տանկային շարասյուների անվտանգ տեղաշարժն ապահովելու նպատակով:

Սփռված ու մեծաքանակ ԱԹՍ-ների կառավարման համար պահանջվում է որոշակի մակարդակ, և նման կառավարումը չպետք է իրականացվի մեկ կենտրոնից (ԱԹՍ-ների խոցում կրակային կամ հրթիռային միջոցներով): Այն գլխավորապես պիտի դառնա ռադիոէլեկտրոնային պայքարի ձևերից մեկը, որով պետք է շարքից հանվեն կամ խաթարվեն ԱԹՍ-ների կառավարման, դրանց կապի ու տեղորոշման համակարգերը:

Ինչպես նշում է լեհական «Պոլիտիկա»-ն, հայկական զինված ուժերի աքիլեսյան գարշապարը ռուսական «Կրասուխա-4» նորագույն տեխնիկայի օգտագործման սահմանափակումն էր ՀՀ տարածքից դուրս, քանի որ ռուսական կողմը արգելել էր: Այս պնդմանը կարելի է չհամաձայնել, քանի որ վստահաբար այն օգտագործվել է նաև ԼՂՀ տարածքում: Բոլորովին կասկածի տեղիք չի տալիս այն, որ տանկը, որպես այդպիսին, ապագայում կարող է դառնալ կառավարվող համեմատաբար ոչ մեծ արկի դեմ անպաշտպան ու անզոր: Հակաօդային պաշտպանության ակտիվ միավորները պետք է դառնան թանկարժեք և կարևոր զինտեխնիկայի (տանկեր, զրահապատ մեքենաներ, հետևակի մարտական մեքենաներ և այլն) ուղեկից պաշտպանները:

Արցախյան պատերազմի թերևս ամենազարմանալի երևույթը ռմբակոծիչ ու կործանիչ ավիացիայի կիրառման չափազանց ցածր ցուցանիշն է, կարելի է նույնիսկ ասել՝ այդ կարևոր զինատեսակի իսպառ բացակայությունը: Ինչպես նշում են բրիտանացի ռազմական փորձագետները, Արցախյան պատերազմի «գլխավոր պարտվածը» ոչ թե տանկն է, այլ կործանիչ ավիացիան: Մարտական ինքնաթիռը կամ ուղղաթիռը վերածվել է «մետաղի ջարդոնի», որը տեղաշարժվում է մեծ արագությամբ, հրեշավոր աղմուկով և թողնում է այնպիսի ջերմային «հետք», որի հետևանքով դրա հայտնաբերումն ու թիրախավորումը դառնում է բոպեների հարց, նույնիսկ հին սերնդի հակաօդային պաշտպանության համակարգերի համար: Ի տարբերություն դասական մարտական ավիացիայի՝ ԱԹՍ-ների հայտնաբերումը դժվար է. դրանք կառուցված են հիմնականում պլաստիկատից, թեթև են, անաղմուկ, ոչ ծխասատար և, որ ամենակարևորն է, հակաօդային հրթիռային ՀՕՊ-ի համար համարյա ոչ հայտնաբերելի: ԱԹՍ-ների զանգվածային «գրոհները» կարող են ամբողջությամբ կամ մասնակիորեն շարքից հանել ցանկացած երկրի ՀՕՊ համակարգերը: Հենց այդպիսի «գրոհներով» Ադրբեջանին հաջողվեց անպատժելիության աստիճանի հասնել հայկական զորքերի թիկունքում կատարած իր գործողությունների համար: Ի դեպ, ԱԹՍ-ների ամենակարևոր առավելություններից մեկն այն է, որ բավական երկար կարող են սավառնել՝ կատարելով իրենց խափանարար առաքելությունը՝ «seek and destroy», ի տարբերություն բազմաֆունկցիոնալ, վառելիք «խժռող» կործանիչ ինքնաթիռների: Հասկանալի է, որ ԱԹՍ-ները ինքնաթիռների հետ համեմատության եզր անգամ չունեն արագության, սպառազինության պաշարի հարցում, սակայն առանձին առաջադրանքներ կատարելու պարագայում ինքնաթիռները կորցնում են վերը նշված առավելությունները՝ ասպարեզը զիջելով ԱԹՍ-ներին:

Ըստ արևմտյան ռազմական դոկտրինների օդում գերիշխանության սկզբունքը եղել է տիրապետող Սառը պատերազմի ողջ ընթացքում. դրանք չեն փոխվել նաև ոչ վաղ անցյալի մերձավորարևելյան հակամարտությունների ժամանակ:

Հարկ է նշել, որ Արցախյան պատերազմը առանձնանում է ժամանակակից միջոցներով մղվող պատերազմների նորագույն պատմության մեջ, քանի որ այն չսկսվեց պատերազմի դասական օրինակով, այն է՝ հասնել օդում գերիշխանության: Եվ դա այն պարզ պատճառով, որ Ադրբեջանը վճռել էր, որ բոլոր դեպքերում ինքը առավելություն ունի ԱԹՍ-ների շնորհիվ, որոնք ապահով կարող են գործել ցածր բարձրություններում և խոցել թիկունքային ցանկացած նշանակետ:

Պետք է նշել, որ այս պատերազմում հայկական կողմին նյութական ու մարդկային ամենամեծ կորուստները հասցրին անմիջականորեն ԱԹՍ-ները՝ անուղղակիորեն «օգնելով» նաև ցամաքային հրթիռահրետանային միջոցներին, «Երկիր-երկիր» հրթիռներին տեղորոշման, թիրախների ճշգրտման

համար: Դիպուկ նշանառության հրետանային հարվածները դառնում են որոշիչ հակառակորդի ջախջախման գործում:

Արևմուտքի համար հսկայական նշանակություն ունեն հատկապես Արցախի ու Դոնբասի դասերը, երբ իրենց «ողջ հմայքով» դրսևորվեցին ռուսական «հետախուզահարվածային» համալիրները, որոնք ներկայացնում էին ԱԹՍ + հրթիռային հրետանի համադրում: Այնուամենայնիվ, Արցախում վճռորոշ եղավ ԱԹՍ-ների կրակային ուժը՝ իր արդյունավետությամբ և խտությամբ:

Հետաքրքիր է, որ մանրամասն անդրադարձ է կատարվել Բերձորի՝ Արցախը Հայաստանին կապող կամրջի վրա իսրայելական «ԼՈՐԱ» բալիստիկ հրթիռ-արկով «գրոհին»: «ԼՈՐԱ»-ին հատուկ է բարձր ճշգրտությունը: Ըստ արտադրող ընկերության տվյալների՝ շեղումը թիրախից կազմում է առավելագույնը 10 մետր, ընդ որում, հարվածի վերջին հատվածում հրթիռ-արկի վրա միանում է տեսախցիկը՝ վկայելով խոցման արդյունավետությունը:Այս և նման զինատեսակները թույլ են տալիս խոցել առանձնակի կարևորություն ունեցող նպատակակետերը (կես տոննա կշռող արկով մինչև 400 կմ շառավիղ ունեցող տարածքում): Ըստ արևմտյան վերլուծաբանների՝ Շուշիի անկման հիմնական պատճառներից մեկը հենց Բերձորի կամրջի վնասվելու հետևանքով համապատասխան համալրում չստանալն ու հոգեբանական ազդեցությունն էր, որ թողել էր «ԼՈՐԱ»-ի հարվածը: Բավական վիճելի, բայց «կյանքի» իրավունք ունեցող հաստատումից զատ՝ արևմտյան փորձագիտությունը ուշադրություն է դարձրել «հայերի կողմից հին սերնդի «Տոչկա» և «Սկադ» տիպի հրթիռների կիրառման» հանգամանքի վրա, ինչը, սակայն, հակառակ ազդեցություն ունեցավ բոլոր տեսանկյուններից, «որովհետև հրթիռային ոչ ճշգրիտ հարվածները, որոնք ընկան Գյանջայի բնակելի թաղամասերի շրջանում, պատճառ դարձան, որ յուղ լցվեր ադրբեջանական քարոզչամեքենայի մեջ, ըստ որի՝ հայկական ուժերը մեղադրվում էին պատերազմական հանցագործության մեջ» (Մարեկ Շվերչինսկի, Wlas'nie zobaczyliszmie…, «Պոլիտիկա» շաբաթաթերթ, 20 դեկտեմբեր 2020, էջ 18):

Վերլուծաբանների ուշադրության կենտրոնում է բալիստիկ հրթիռաարկային միջոցների օգտագործումը ոչ մեծ մասշտաբի լոկալ պատերազմում, որն այլևս բացառում է միայն ավանդական զինատեսակներով պատերազմ վարելու հնարավորությունը:

Նախորդ սերնդի բալիստիկ հրթիռները մինչ Արցախյան պատերազմը կիրառվել էին Եմենի քաղաքացիական պատերազմի ժամանակ Իրանի կողմից ԱՄՆ-ի բազաների դեմ Իրաքում: Սակայն Արցախյան պատերազմը ապացուցեց բոլորովին այլ բան…Այլևս պարզ է դառնում նաև այն իրողությունը, որ բարձր տեխնոլոգիաներն ու դրանցով հագեցած զինատեսակները հասանելի են աշխարհի գրեթե բոլոր պետությունների համար: Ճշգրիտ խոցելիությամբ զինատեսակները դադարել են տեխնոլոգիապես

զարգացած երկրների մենաշնորհը լինելուց. դրանք արդեն կիրառվում են լոկալ պատերազմներում, և այդ միտումը տիրապետող է դառնալու ապագայում:

Մեզ արդեն ծանոթ Ջաք Վայթլինգը ուշադրություն է հրավիրում ժամանակակից սուբբալեստիկ հրթիռային համակարգերի վրա հետևյալ տեսանկյունից.«Ի հակադրություն ավանդական հրթիռային արկերի, որոնք «տեղ են հասնում» բարձր և չշեղվող հետագծով՝ դուրս գալով մթնոլորտային առաջին շերտից, ժամանակակից հրթիռները և տվյալ դեպքում «ԼՈՐԱ»-ները թռչում են ցածր և կարող են խուսանավել: Հակահրթիռային պաշտպանությունը նպատակաուղղված է մթնոլորտային շերտից դուրս մարտագլխիկներ խոցելուն: Հետևաբար անհնար է դառնում կառավարվող հրթիռների հայտնաբերումն ու ոչնչացումը:Մյուս կողմից էլ՝ հակաօդային պաշտպանական համակարգերի համար, որոնք նախատեսված են ինքնաթիռներ խոցելու համար. վերջիններս դառնում են անխոցելի, քանի որ ավելի արագընթաց են և թռչում են բավական բարձր»:

Հայաստանն իր տրամադրության տակ ունեցել է ռուսական հակահրթիռային հին համակարգեր, որոնք եթե նույնիսկ ԱԹՍ-ի գրոհներից հետո անվնաս էին մնացել, անզոր են եղել իսրայելական դրոնների ու հրթիռների դեմ:

Աչքերն ու ականջները կարևոր են «մետաղից»

Հիմնվելով բոլոր փորձագետների հաստատումների վրա՝ ամփոփենք:

Որպեսզի հակառակորդի նկատմամբ ձեռք բերվի որակական առավելություն, այլևս պարտադիր չէ հետևակի զրահամեքենաների և ինքնագնաց հրետանու մեծաքանակ լինելը, այլ որոշիչ է հետախուզող, տեղորոշող ու նպատակաուղղող սենսորների քանակը:

Երկար ժամանակ է արդեն, որ ժամանակային մրցակցությունը, որը չափվում էր զինվորական կրկնակոշիկի ու տանկային թրթռուի հետ համեմատությամբ, հասել է այնպիսի մակարդակի, որտեղ որոշիչ է էկրանի սեղմակոճակը: Եվ, որ ամենակարևորն է, գործնականում հնարավոր է ցուցամատով դիպչելով էկրանին հակառակորդին և նրա զինտեխնիկային հասցնել շոշափելի կորուստներ:

Եվ այս ամենը կարելի է դիտել էկրանին ուղիղ միացումով: Ցամաքում առավելության հասնելու գրավականը հակառակորդի դիտարկման ու հետախուզական-ճշգրտող համակարգերը խաթարելն ու անպիտան դարձնելն է՝ միաժամանակ մարտի դաշտ դուրս բերելով սեփական էլեկտրոնային համակարգը: Դա թույլ կտա ձեռք բերել տեղեկատվական-հետախուզական գերիշխանություն, որն էլ իր հերթին խոցման միջոցների ընտրության և դրանց արդյունավետ կիրառման հնարավորություն կընձեռի:

Կրակային դիրք դուրս եկած տանկը կարող է խոցվել անմիջապես, իսկ դաշտային ամրություններում զորամիավորումները «կարող են սպասել»:

Պարզորոշ տեսնելով և գնահատելով սեփական ուժերը, ինչպես և հակառակորդին, նրա հնարավորությունները՝ ձևավորվում է իրադրության ճիշտ պատկերը: Երկարատև, անընդհատ մշտադիտարկումը՝ համադրված խոցելու հնարավորությունների հետ, կնեծացնի հակառակորդի շրջանում վտանգի զգացումն ու խուճապը, թույլ կտա ընտրել խոցման միջոցները, ինչն էլ վերջնարդյունքում կհանգեցնի մարտի դաշտում մարտավարության ու դրության փոփոխության:

Ամենակարևոր քայլերից մեկը, որը, ցավոք, չարվեց, Արցախյան պատերազմի ժամանակ հայկական ռազմական գերատեսչությունների կողմից գաղտնապահության տարրական կանոնների պահպանումն էր (Մարեկ Շվերչինսկի, ռազմական տեսաբան, Լեհաստան): Մեր ժամանակներում պետք է ընդունել, որ մշտապես ինչ-որ մեկը կամ ինչ-որ բան մեզ հետևում է: Հետևաբար անհրաժեշտ է, որ այլ մոտեցում ցուցաբերվի քողարկման և ռադիոլռության առումով: Հայտնաբերման դեպքում ձեզ չի հաջողվի խույս տալ, որովհետև հակառակորդի ԱԹՍ-ն հայտնաբերելու համար ստիպված եք միացնել ռադարներ, ինչն էլ իր հերթին հնարավորություն է ընձեռում հակառակորդի էլեկտրոնային հետախուզությանը տեղորոշելու ձեզ: Այստեղ ավելի կարևորվում է, թե ինչքանով են ձեր ռադարների միացումը և խոցվելու վտանգը հակակշռվում թշնամու թիրախների կարևորությամբ ու թանկարժեքությամբ: Իրական ու զգալի ռեսուրսները խնայելու ցանկությամբ հանդերձ պետք է հիշել, որ կիրառելի են բոլոր հնարավոր միջոցները, որոնք թույլ կտան խաբել ու ապակողմնորոշել թշնամուն:

Արցախի պատերազմը ցույց տվեց ամբողջ աշխարհին, կարելի է ասել՝ դաս եղավ, որ հնարավոր նոր՝ ավելի լայնամասշտաբ պատերազմների դեպքում ռազմական փոքր ներուժ ունեցող երկրները կարող են ճակատ կազմել և հասնել հաջողության ավելի մեծ ու հարուստ երկրների հետ անմիջական ռազմական հակամարտություններում, եթե, բացի ավանդական զենքերից, կարողանում են ստեղծել և ըստ նշանակության կիրառել նորագույն տեխնոլոգիաները:

Հարկ է, որ ունենանք ինքնավար ռեժիմով աշխատող և օտար ռադիոթափանցումների նկատմամբ դիմադրական իմունիտետ ունեցող հակաօդային համակարգեր և ԱԹՍ-ների սեփական արտադրություն:

Հրամայական են դառնում զգալի ներդրումները ռազմարդյունաբերական ոլորտում, այլապես ամեն ուշացած օրն անգամ կարող է անդառնալիորեն հանգեցնել ժամանակային կորստի՝ ունենալով նաև լրջագույն հետևանքներ երկրի անվտանգային հարցերում: Հակառակորդ կամ թշնամի երկրների հետ ռազմական ներուժի հավասարեցումը հնարավոր է ոչ թե առաջնահերթությունների մասին խոսելով, այլ գործով, օրինակ՝ ամբողջությամբ նորացնելով ռադիոէլեկտրոնային միջոցների զինանոցը: Մեր ՀՕՊ համակարգը իր տեսակով կենսունակ է: Այլ հարց է, որ պետք է ուշադրություն դարձնել հակաԱԹՍական միջոցների հայտնաբերման դրանց գործունեության խափանման հնարավորություններին, ինչպես հրետանային, այնպես էլ լազերային զենքերի ձեռքբերմանն ու ստեղծմանը: Գաղտնապահության կանոնների համատարած պահպանումն ու քողարկումը պիտի կրեն իրական, այլ ոչ թե ձևական բնույթ:

Հայտնաբերումը խոչընդոտող ու ջերմային ազդակը (թերմիկ էֆեկտ) թուլացնող քողարկումը պիտի լինի բոլոր շարժական միջոցների անբաժան ուղեկիցը: Հարձակողական գործողությունների պարագայում խոցման շառավիղը և ճշգրտությունը ունեցել են և հետագա պատերազմներում ունենալու են վճռորոշ դերակատարություն պատերազմի ելքի հարցում:

Հ.գ. Մարեկ Շվերչինսկու (անվտանգության հարցերով ավագ վերլուծաբան) հոդվածում արտահայտված է մի կարևոր միտք: Սակավ ռեսուրսներով, սահմանափակ տարածքով ու փոքրաթիվ բնակչությամբ երկրները ամենևին էլ դատապարտված չեն ավելի խոշորների կողմից հոշոտվելու, եթե ունեն քաղաքական հստակ ծրագիր, ազգային պետություն կերտելու կամք, նվազագույն միջոցներ՝ տեխնոլոգիաներ ձեռք բերելու և ներդրումներ անելու գիտության ոչ ծախսատար ճյուղերում՝ կայուն ու հզոր տնտեսություն ստեղծելու հեռանկարով: ■

Եվրասիական տնտեսական ինտեգրումը ՌԴ արտաքին քաղաքականության համակարգում

Արփի Աբրահամյան
ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության վարչության ներկայացուցիչ, ԵՊՀ միջազգային հարաբերությունների ազգային անվտանգության բաժնի ուսանող

21-րդ դարի առաջին տասնամյակից հետո Ռուսաստանին հաջողվեց դուրս գալ տնտեսական ճգնաժամից, վերականգնել ռազմական հզորությունը և իրագործել արտաքին քաղաքականության ոլորտում որդեգրած հիմնական նպատակները: 2016 թ. նոյեմբերի 30-ին Կրեմլը հրապարակեց նախագահ Վլադիմիր Պուտինի կողմից ստորագրված «Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության հայեցակարգը»[1]: Այս հայեցակարգը ՌԴ արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքների, գերակա ոլորտների, նպատակների և խնդիրների վերաբերյալ տեսակետների համակարգ է: Դրա իրավական հիմքը ՌԴ Սահմանադրությունն է, միջազգային իրավունքի ընդհանուր ճանաչված սկզբունքներն ու նորմերը, ՌԴ միջազգային պայմանագրերը, դաշնային օրենքները, ՌԴ նախագահի 2012 թ. մայիսի 7-ի թիվ 605 հրամանագիրը ՌԴ արտաքին քաղաքականության իրականացման միջոցառումների մասին, ՌԴ ազգային անվտանգության ռազմավարությունը, ՌԴ ռազմական դոկտրինը, ՌԴ իրավական ակտերը, որոնք կարգավորում են պետական իշխանության դաշնային մարմինների գործունեությունը, արտաքին քաղաքականությունը, ինչպես նաև ՌԴ այլ նորմատիվ իրավական ակտեր:

ՌԴ ազգային շահերն ապահովելու և ազգային ռազմավարական գերակայությունները կյանքի կոչելու համար պետության արտաքին քաղաքականությունն ուղղված է հետևյալ հիմնական խնդիրների լուծմանը.

երկրի անվտանգության, ինքնիշխանության և տարածքային ամբողջականության ապահովում, օրենքի գերակայության և ժողովրդավարական ինստիտուտների դիրքի ամրապնդում, կայուն աճի և արտաքին բարենպաստ պայմանների ստեղծում՝ ՌԴ տնտեսության կայունության և մրցունակության բարձրացման, տեխնոլոգիական նորացման, բնակչության կյանքի մակարդակի և որակի բարելավման համար, ՌԴ դիրքի ամրապնդում՝ որպես ժամանակակից աշխարհի ազդեցիկ կենտրոններից մեկի, համաշխարհային տնտեսական հարաբերությունների համակարգում ՌԴ դիրքի ամրապնդում, ռուսական ապրանքների, ծառայությունների, ներդրումների հարցում խտրականության կանխարգելում, այդ նպատակների իրականացման համար միջազգային և տարածաշրջանային տնտեսական և ֆինանսական կազմակերպությունների հնարավորությունների օգտագործում, հարևան պետությունների հետ բարիդրացիական հարաբերությունների ձևավորում, նրանց տարածքներում առկա լարվածության օջախների վերացմանը և բախումների առաջացման

կանխարգելմանն աջակցում, երկկողմ և բազմակողմ փոխշահավետ և հավասար գործընկերային հարաբերությունների զարգացում օտարերկրյա պետությունների, միջպետական ասոցիացիաների, միջազգային կազմակերպությունների շրջանակներում՝ հիմնված անկախության և ինքնիշխանության, թափանցիկության, բազմավեկտորության և կանխատեսելիության սկզբունքների, պրագմատիզմի, հարգանքի վրա, ՌԴ քաղաքացիների և արտերկրում բնակվող հայրենակիցների իրավունքների և օրինական շահերի համապարփակ արդյունավետ պաշտպանություն, աշխարհում ռուսաց լեզվի գործածության շրջանակների ընդլայնում և դիրքի ամրապնդում, ազգային մշակույթի, ազգային պատմական ժառանգության և ՌԴ ժողովուրդների կրթության և գիտության ձեռքբերումների մաս-սայականացում, ռուսական սփյուռքի համախմբում, համաշխարհային տեղեկատվական տիրույթում ռուսական զանգվածային հաղորդակցությունների ամրապնդում, կառուցողական երկխոսության, գործընկերության զարգացում, միջազգային գործընթացների վերաբերյալ ռուսական տեսակետի տարածում համաշխարհային հանրության լայն շրջանակներում:

Համաշխարհային ակտիվ քաղաքականություն վերադառնալու նպատակների իրագործման առումով ՌԴ-ն պատրաստ է օգտագործելու իր հնարավոր հզոր լծակները[2]:

ՌԴ-ն Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի (ԱԽ) 5 մշտական անդամներից է: Մշտական անդամակցությունը տալիս է վետոյի իրավունք, այսինքն՝ առանց նրա վերջնական համաձայնության՝ ՄԱԿ-ի ԱԽ մյուս գործընկերները չեն կարող բանաձևեր ընդունել, ինչը հնարավորություն է՝ պահպանելու իր տեղը համաշխարհային կարևոր խաղացողների ցանկում: Հենց սա է պատճառը, որ արտաքին քաղաքականությանը վերաբերող նոր հայեցակարգում նշված է, որ ՌԴ-ն հետամուտ է ՄԱԿ-ի

դերի բարձրացմանն ու ամրապնդմանը:

ԽՍՀՄ փլուզումից հետո էլ Ռուսաստանը շարունակում է տիրապետել աշխարհի՝ հզորությամբ երկրորդ ռազմական զինանոցին, որն աչքի է ընկնում արդիականացված միջուկային սպառազինությամբ:

ՌԴ-ն տիրապետում է նավթի ու գազի, բնական հանածոների հսկայական պաշարների, որոնք նույնպես նրան զարգանալու մեծ հնարավորություններ են ընձեռում: Այս գործոնը դեռևս շարունակում է կարևոր դեր խաղալ ՌԴ արտաքին քաղաքականության մեջ, քանի որ էներգակիրների մատակարարումների շնորհիվ ՌԴ-ն տնտեսական և քաղաքական որոշակի ազդեցություն է ձեռք բերում:

Աշխարհագրական դիրքը ևս մեծ դեր է խաղում, քանի որ ռուսական ցամաքային, ռազմածովային և ռազմաօդային ուժերը մանևրելու մեծ հնարավորություններ են ստանում: Արևելքից արևմուտք ձգվող սահմանները ՌԴ-ին ընձեռում են տնտեսական լայն հնարավորություններ. դրանք Եվրոպան Ասիային կապող կամուրջ են:

Հայեցակարգի՝ արտաքին քաղաքականության տարածաշրջանային առաջնահերթությունների բաժնում առանձնակի նշվում է, որ «տարածաշրջանային տնտեսական և ֆինանսական կազմակերպությունների հնարավորություններն ուղղված են ազգային տնտեսության զարգացմանը, կառույցների գործունեությանը, որոնք նպաստում են Եվրասիայում ինտեգրացիոն գործընթացների ամրապնդմանը»[3]:

ՌԴ հիմնական նպատակն է զարգացնել բազմակողմ և երկկողմ հարաբերություններ ԱՊՀ երկրների հետ, նպաստել ՌԴ-ի մասնակցությամբ ինտեգրացիոն ծրագրերի իրագործմանը:

Միավորելով նախկին ԽՍՀՄ երկրները մեկ տնտեսական ու քաղաքական միավորի մեջ՝ Ռուսաստանը կարող է ինքնուրույն, հզոր կենտրոն դառնալ, որն այլընտրանք կդառնա Արևմուտքի և Արևելքի (չինական) մոդելներին: Կիրառվող գաղափարախոսությունը՝ Եվրասիականությունը ևս հետաքրքիր է ընտրված. այն հնարավորություն կտա հետագայում ԵԱՏՄ դռները բաց պահելու նաև Եվրասիա մայրցամաքի մյուս ժողովուրդների համար, որոնք հետաքրքրված կլինեն ԵԱՏՄ-ի հետ համագործակցությամբ կամ ինտեգրմամբ[4]:

ԵԱՏՄ-ն ստեղծվել է ազգային տնտեսությունների բազմակողմանի արդիականացման, համագործակցության, մրցունակության բարձրացման և անդամ պետությունների բնակչության կենսամակարդակի բարձրացմանն ուղղված կայուն զարգացման համար պայմաններ ստեղծելու նպատակով:

«ՌԴ սոցիալ-տնտեսական զարգացման 2008-2020 թթ. հայեցակարգը» ներառում է դրույթներ, որոնք միտված են եվրասիական ինտեգրման գործընթացներում ՌԴ դերի ամրապնդմանը և երկրի վերափոխմանը համաշխարհային տնտեսական հարաբերությունների կենտրոնի[5]:

ԵԱՏՄ փաստաթղթերի շրջանակներում ինտեգրման խորացումն ու ընդլայնումը դիտարկվում է որպես

ՌԴ նախագահի հրամանագիրը Ռուսաստանի արտաքին քաղաքականության հայեցակարգի հաստատման մասին 2016 թ.

կայուն զարգացման, տեխնոլոգիական նորացման, համագործակցության, ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսությունների մրցունակության բարձրացման և նրանց բնակչության կենսամակարդակի բարելավման միջոց: ԵԱՏՄ-ն տնտեսական ճգնաժամը հաղթահարելու հնարավոր մեխանիզմներից մեկն է, որը ներգրավում է նոր ռեսուրսներ և տնտեսական զարգացում ապահովող մեխանիզմներ:

Ըստ ռուս փորձագետների՝ հարևան երկրները ՌԴ բնական գործընկերներն են, և այն պայմաններում, երբ ռուսական ապրանքների վաճառքի շուկաներն այնքան էլ մեծ չեն, անհեռատեսություն կլինի անտեսել դրանց ընդլայնման հնարավորությունները[6]:

ՌԴ միջնաժամկետ հեռանկարում եվրասիական ինտեգրման գործընթացների արդյունավետության գնահատման առումով նշվում են հետևյալ գործոնները՝ ներքին արտադրության ապրանքների շուկաների ընդլայնումը, առևտրատնտեսական հարաբերությունների դիվերսիֆիկացումը, միասնական ֆինանսական շուկայի ձևավորումը և ՌԴ-ի վերածումը աշխարհի ֆինանսական կենտրոններից մեկի, արտաքին առևտրի հնարավորությունների ընդլայնումը, երկրի տրանսպորտային ներուժի իրացման աստիճանը և տրանսպորտային ու նյութա-տեխնիկական ենթակառուցվածքների զարգացումը, Միության անդամ պետությունների աշխատուժի հասանելիության և մարդկային ռեսուրսների զարգացման հնարավորությունների ընդլայնումը, էլեկտրաէներգիայի ընդհանուր շուկայի ստեղծումը:

ԵԱՏՄ կարողությունը՝ խթանելու հայրենական արտադրողների շուկաների ընդլայնումը, արտադրական և համագործակցության շղթաների ձևավորումը և առևտրատնտեսական հարաբերությունների բազմազանեցումը:

ՌԴ-ն մեծապես շահագրգռված է ընդլայնելու ԵԱՏՄ միասնական շուկայի արտահանման ծավալները, ապահովելու ներքին արտադրողների ապրանքների անարգել ներթափանցումը անդամ երկրներ:

Ըստ մաքսային վիճակագրական տվյալների՝ 2020 թ. ՌԴ արտաքին առևտրի շրջանառությունը կազմել է 571.9 մլրդ դոլար և 2019 թ. համեմատ նվազել է 15.2 %-ով:

2019 թ. ՌԴ արտահանման ծավալը կազմել է 424.6 մլրդ դոլար և 2018 թ. համեմատ նվազել է 6.0 %-ով: Ոչ ԱՊՀ երկրների մասնաբաժինը կազմել է 87.4%, ԱՊՀ երկրներինը՝ 12.6%: 2020 թ. ՌԴ արտահանման ծավալը կազմել է 338.2 մլրդ դոլար և 2019 թ. համեմատ նվազել է 20.7 %-ով: Ոչ ԱՊՀ երկրների մասնաբաժինը կազմել է 85.6%, ԱՊՀ երկրներինը՝ 14.4%7:

2019 թ. և 2020 թ. ՌԴ արտահանման հիմքը ավանդական վառելիքաէներգետիկ արտադրատեսակներն են, որոնց մասնաբաժինը արտահանման ապրանքային կառուցվածքում 2019 թ. կազմել է 62.1%, 2020 թ.՝ 49.6%[8]:

2020 թ. տվյալներով՝ ՌԴ ներմուծումը կազմել է 233.7 մլրդ դոլար և 2019 թ. համեմատ կրճատվել է 5.7 %-ով: Ոչ ԱՊՀ երկրներին բաժին է ընկել 89.3%, ԱՊՀ երկրներին՝ 10.7%: Ներմուծման ապրանքային կառուցվածքում ամենամեծը մեքենաների ու սարքավորումների մասնաբաժինն է՝ 47.6% (2019 թ.՝ 46.1%)[9]:

Արտաքին տնտեսական դրության և արևմտյան պետությունների հետ հակամարտության հետևանքով տեղի է ունենում ՌԴ արտահանման հոսքերի աստիճանական վերակողմնորոշում. 2016 թ. ԵՄ-ի մասնաբաժինը 44.8%-ից նվազել է 42.8%, իսկ Չինաստանինը 28.1%-ից աճել է մինչև 30%[10]: Ապրանքաշրջանառությունը երկու առանցքային գործընկերների՝ ԵԱՏՄ-ի և ԵՄ-ի միջև 2019 թ. 166 մլրդ դոլարով պակաս է 2013 թ. համեմատ, իսկ 2020 թ. առաջին կիսամյակի արդյունքներով գրեթե հավասարվել է (ԵՄ՝ 37.7%, ԵԱՏՄ՝ 37.02%)[11]: Միաժամանակ աճում է ԵԱՏՄ-ի առևտուրը Չինաստանի հետ. առևտրի ծավալը կազմել է Միության ամբողջ արտաքին առևտրի 20.1%-ը, որը համադրելի է եվրոպական չորս առանցքային գործընկերներների՝ Գերմանիա, Նիդերլանդներ, Իտալիա և Լեհաստան, ցուցանիշների հետ:

ՌԴ 2020 թ. արտաքին առևտրի կառուցվածքում ԵՄ մասնաբաժինը կազմել է ՌԴ առևտրի 38.5%-ը (2019 թ.՝ 41.6%), ԱՊՀ երկրներինը՝ 12.9%-ը (2019 թ.՝ 12.2%), ԵԱՏՄ երկրներինը՝ 9.1%-ը (2019 թ.՝ 8.7%), ԱԽՏԽ երկրներինը՝ 33.8%-ը (2019 թ.՝ 31.8%)[12]:

Միասնական ֆինանսական շուկայի ձևավորում և ՌԴ-ի վերածում աշխարհի ֆինանսական կենտրոններից մեկի և եվրասիական տարածքի առաջատար ֆինանսական կենտրոնի:

Համաշխարհային տնտեսության աճող ճգնաժամի համատեքստում ԵԱՏՄ երկրների կողմից քննարկվում են տնտեսական և ֆինանսական ոլորտներում համաձայնեցված և համակարգված քաղաքականություն վարելու հարցերը: Այս առումով քննարկվում է Ֆինանսական կայունության խորհրդի ստեղծման հարցը, որի հիմնական նպատակը պետք է լինի ֆինանսատնտեսական ոլորտում հիմնական քաղաքականությունների (ներառյալ մակրոտնտեսական, արժութային, դրամավարկային, հարկային և բյուջետային քաղաքականությունները) համակարգումը:

Հայեցակարգում նախանշված են միջազգային ֆինանսական կենտրոն ստեղծելու, ռուբլին տարածաշրջանային պահուստային արժույթ դարձնելու, արտաքին առևտրաշրջանառության մեջ ռուբլու օգտագործումն ընդլայնելու և եվրասիական տարածքի պետությունների ֆինանսական շուկաներում ՌԴ առաջատար դիրքն ապահովելու խնդիրները:

Միության պետությունների ինտեգրացիոն փոխգործակցության կարևորագույն գերակայությունը ընդհանուր ֆինանսական շուկայի ձևավորումն է[13]: Այս խնդրի լուծումը թույլ կտա ապահովել կապիտալի արդյունավետ բաշխումը, դիվերսիֆիկացնել ռիսկերը, մեծացնել մրցակցությունը ֆինանսական ծառայությունների շուկայում և վերացնել փոխադարձ ընդունման խոչընդոտները: Տնտեսական ճգնաժամի և ֆինանսավորման արտաքին աղբյուրների հասանելիության սահմանափակումների պայմաններում ֆինանսական ծառայությունների միասնական շուկայի ձևավորումը կդառնա լրացուցիչ խթան ԵԱՏՄ պետությունների տնտեսական աճի համար: Այդ նպատակին հասնելու համար երկրները աստիճանաբար կխորացնեն տնտեսական ինտեգրումը և կներդաշնակեցնեն օրենսդրությունը ֆինանսական շուկայում: Ի սկզբանե Միության պետությունները պետք է համաձայնության գան ֆինանսական շուկաների մասնակիցներին ներկայացվող միասնական պահանջների շուրջ:

Միատեսակ պահանջները և վերահսկողության ընդհանուր մոտեցումները որակապես նոր մակարդակի հասցնելու համար անհրաժեշտ քայլեր են ինտեգրում՝ ֆինանսական շուկայի մասնակիցների լիցենզիաների փոխադարձ ճանաչում, ԵԱՏՄ ողջ տարածքում ֆինանսական գործունեություն ծավալելու հնարավորություն[14]:

Ընդհանուր ֆինանսական շուկայի ձևավորման առանցքային ուղղություններից մեկը ԵԱՏՄ ընդհանուր բորսային տարածքի ստեղծումն է: Այն թույլ կտա էապես ընդլայնել ԵԱՏՄ պետությունների առևտրային և ներդրումային համագործակցությունը, մեծացնել ներդրումների և խնայողությունների հնարավորությունները:

Համաձայնագրով ազգային բորսաներին իրավունք է տրվում ճանաչելու բրոքերների և դիլերների՝ Միության պետությունների լիազորված մարմինների կողմից տրամադրված լիցենզիաները և ապահովելու դրանց հնարավորությունը՝ ուղղակիորեն մասնակցելու աճուրդներին՝ արժեթղթերի և ածանցյալ ֆինանսական գործիքների առքուվաճառքի պայմանագրեր կնքելու համար[15]:

Արտաքին առևտրի հնարավորությունների ընդլայնում:

ՌԴ-ն շահագրգռված է եվրասիական տարածքում հարևան երկրների, ինչպես նաև ԱՊՀ-ին ոչ անդամ երկրների հետ ազատ առևտրի գոտիների (ԱԱԳ) ստեղծմամբ: Ազատ առևտրի գոտին ոչ միայն ընդլայնում է ՌԴ-ից արտահանումների

հնարավորությունները, այլ նաև թույլ է տալիս դիվերսիֆիկացնել ներմուծումը ռուսական շուկա, ինչը կարևոր է տնտեսական պատժամիջոցների և պարենային արգելքների համատեքստում:

2015 թ. մայիսի 29-ին ազատ առևտրի գոտու շրջանակներում ստորագրվել է համաձայնագիր Վիետնամի հետ: Որպես արդյունք՝ ԵԱՏՄ ապրանքաշրջանառությունը 2017 թ. աճել է 36%-ով՝ 2016 թ. 4.3 մլրդ դոլարից հասնելով 5.9 մլրդ դոլարի: Ներմուծումն աճել է 34.7%-ով, իսկ արտահանումը՝ 39.5%-ով[16]:

2018 թ. մայիսի 14-ին Սոչիում կայացել է ԵԱՏՄ անդամ պետությունների ղեկավարների հանդիպումը՝ տնտեսական համագործակցության, ինտեգրման գործընթացների հետագա խորացման նպատակով:

2018 թ. մայիսի 24-ին կնքվել է փոխըմբռնման հուշագիր եվրասիական և լատինամերիկյան տարածաշրջաններում տնտեսական կազմակերպությունների փոխհարաբերության շուրջ:

2018 թ. մայիսի 28-ին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Կամբոջայի Թագավորության միջև կնքվել է փոխգործակցության հուշագիր, Կուբայի Հանրապետության և ԵՏՀ-ի միջև՝ փոխըմբռնման հուշագիր:

2017 թ. ԵԱՏՄ երկրների արտահանումը դեպի Եգիպտոս աճել է 63.1%-ով և կազմել 6.3 մլրդ դոլար, իսկ ներմուծումն աճել է 41.5%-ով և կազմել 589.9 մլն դոլար[17]:

ԵԱՏՄ-ի և Հնդկաստանի միջև ապրանքաշրջանառությունը 2017 թ., 2016 թ. համեմատությամբ, աճել է 23%-ով՝ 8.8 մլրդ դոլարից հասնելով 10.8 մլրդ դոլարի:

ԵԱՏՄ-ի և ՉԺՀ-ի միջև առևտրատնտեսական համագործակցության համաձայնագիր է ստորագրվել 2018 թ. մայիսի 17-ին: Միաժամանակ ազատ առևտրային գոտու շուրջ ստորագրվել է ժամանակավոր համաձայնագիր ԵԱՏՄ-ի և Իրանի Իսլամական Հանրապետության միջև:

Երկրի տրանսպորտային ներուժի իրացման և տրանսպորտային ու նյութատեխնիկական ենթակառուցվածքների զարգացման հնարավորությունների ընդլայնում:

Ինչպես 2011 թ. «Известия» թերթում հրապարակված իր հոդվածում նշել է Ռուսաստանի նախագահ Վ. Վ. Պուտինը, «մենք առաջարկում ենք հզոր վերազգային միավորման մոդել, որն ի զորու է ժամանակակից աշխարհի բևեռներից մեկը դառնալու և միաժամանակ հանդես գալու Եվրոպայի և Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի միջև արդյունավետ «կապի» հաղորդակցական ուղու դերակատարմամբ»[18]:

Ռուսաստանի Դաշնությունը, բացի սեփական տարածքները զարգացնելուց, շահագրգռված է նաև ԵԱՏՄ և Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու (ՄՃՏԳ) հաղորդակցական նախագծերի իրագործմամբ ԵԱՏՄ անդամ երկրներում և ձգտում է նրանց համար դառնալու աճի և սոցիալ-տնտեսական

զարգացման լրացուցիչ գործոն:

ՌԴ տարանցիկ ներուժի իրացման գաղափարը հնչել է ԵԱՏՄ և ՄՃՏԳ համատեղ հայտարարությամբ. 2014 թ. հոկտեմբերի 13-ին ՌԴ տրանսպորտի նախարարությունը, «Ռուսական երկաթուղիներ»-ը, ՉԺՀ զարգացման և բարեփոխումների պետական կոմիտեն և «Չինական երկաթուղիներ» կորպորացիան ստորագրել են համագործակցության հուշագիր արագընթաց երթևեկության ոլորտում՝ Մոսկվա-Պեկին եվրասիական արագընթաց տրանսպորտային միջանցքի վերաբերյալ, տրանսսիբիրյաներ երկաթուղու գործող («Гродеково-Суйфэньхэ», «Забайкальск-Маньчжоули») և հեռանկարային («Нижнеленинское-Тунцзян», «Благовещенск-Хэйхэ»)[19] հատվածներ: Այս երթուղու նյութատեխնիկական հնարավորությունների արդիականացումը դրական ազդեցություն կունենա ՌԴ հեռավորարևելքի սոցիալ-տնտեսական դրության վրա, Վլադիվոստոկի ազատ նավահանգիստը նոր խթան կհաղորդի զարգացմանը, Չինաստանի և Հարավարևելյան Ասիայի երկրների հետ հարաբերություններին:

2017 թ. մարտին ԵՏՀ-ն հայտարարում է, որ կազմվել է առաջնահերթ նախագծերի ցուցակ, որոնք իրականացվելու են ԵԱՏՄ երկրների կողմից և աջակցելու են ՄՃՏԳ ձևավորմանը: Դրանցից 39-ը վերաբերում են նոր ճանապարհների կառուցմանը և եղած ճանապարհների արդիականացմանը, տրանսպորտային և նյութատեխնիկական կենտրոնների ստեղծմանը, տրանսպորտային առանցքային հանգույցների զարգացմանը[20]:

Նախատեսվում է կառուցել «Մոսկվա-Կազան» արագընթաց երկաթուղին (ճանապարհի արագությունը՝ մինչև 400 կմ/ժամ, ճանապարհի ժամանակը՝ 3.5 ժամ), Չինաստան-Ղրղզստան-Ուզբեկստան երկաթգիծը և արդիականացնել Հայաստան-Իրան երկաթգիծը՝ թույլ տալով Հայաստանին Իրանի տարածքով անցնել Ղազախստան, Չինաստան և այլ երկրներ: Սակայն 2020 թ. նոյեմբերի 9-ի «եռակողմ հայտարարության» 9-րդ կետը անհավանական է դարձնում Հայաստան-Իրան երկաթգծի կառուցման հնարավորությունը,

քանի որ նախատեսվում է Նախիջևանի Ինքնավար Հանրապետության և Ադրբեջանի արևմտյան շրջանները կապող տրանսպորտային նոր ուղիների շինարարություն:

Ըստ «Ռուսական երկաթուղիներ» ՓԲԸ (ОАО «РЖД») տվյալների՝ 2016 թ. արևելասիբիրյան ենթակառուցվածքի (ВСЖД) զարգացման մեջ ներդրումների ծավալը կազմել է 34 մլրդ ռուբլի: Ներդրումների ընդհանուր ծավալը 2017 թ. կազմել է 42.3 մլրդ ռուբլի, որից շուրջ 35.6 մլրդ ռուբլին նախատեսվել է ԲԱՄ-ի (БАМ) և «Տրանսսիբ»-ի (Транссиба) ենթակառուցվածքների արդիականացման ու զարգացման համար[21]:

Ներկայումս «Տրանսսիբ»-ը 10 հազար կմ երկարությամբ երկկողմանի էլեկտրաֆիկացված երկաթուղագիծ է՝ հագեցած տեղեկատվության և հաղորդակցության ժամանակակից միջոցներով, որը կապվում է Բայկալ-Ամուր (БАМ) մայրուղու հետ: Մինչև 2024-2025 թթ. նախատեսված է իրականացնել այս տրանսպորտային ենթակառուցվածքների արդիականացման և ընդլայնման համապարփակ ծրագիր՝ թողունակությունը մեծացնելով 1.5 անգամ՝ 180-210 մլն տոննա[22]:

Ըստ փորձագիտական տվյալների՝ Չինաստան-Եվրոպա ցամաքային կամրջի ստեղծման հարցում գերիշխում է Կենտրոնական Ասիայի տրանսպորտային ուղղությունը զարգացնելու գաղափարը, այսինքն՝ ՌԴ տարանցիկ ներուժը դիտարկվում է միայն նրա կենտրոնական շրջանի օգտագործման առումով՝ Օրենբուրգ-Կազան-Մոսկվա-Սանկտ Պետերբուրգ-Եվրոպա կամ հեռանկարային տրանսպորտային միջանցք կառուցելու նպատակով՝ Չինաստան-Մոնղոլիա-Ռուսաստան[23]:

2021 թ. փետրվարի 19-ին համաձայնեցվել է 2021-2023 թթ. Տրանսպորտային քաղաքականության իրագործման «ճանապարհային քարտեզը»[24]: Քննարկվել են բեռների միջազգային ավտոմոբիլային փոխադրումների ազատականացման, երկաթուղային տրանսպորտի ոլորտում կոնվենցիոն արգելքների ներմուծման և կիրառման, ինչպես նաև ավիաընկերություններին Միության երկրների միջև թռիչքների հավասար պայմանների տրամադրման հարցերը: Այդ բոլոր հարցերը կարևոր նշանակություն ունեն տրանսպորտի ոլորտում ճյուղային շուկաների ձևավորման և ինտեգրացիոն գործընթացների խորացման համար:

«Ճանապարհային քարտեզ»-ում ներառված միջոցառումները զարգացնում են Եվրասիական տնտեսական միության պայմանագրի՝ տրանսպորտին և ենթակառուցվածքին վերաբերող դրույթները, հաշվի են առնվում ավտոմոբիլային, երկաթուղային և ջրային տրանսպորտի զարգացման առանձնահատկությունները, ապահովվում է տրանսպորտային քաղաքականության խնդիրների և գերակայությունների իրականացումը[25]:

Փաստաթուղթը նախատեսում է ԵԱՏՄ երկրների օրենսդրությունների ներդաշնակեցում, Միությունում տրանսպորտային էլեկտրոնային փաստաթղթերի ներդրում, խառը և բեռնարկղային փոխադրումների, ինչպես նաև եվրասիական տրանսպորտային միջանցքների, այդ թվում՝ տրանսպորտային լոգիստիկ կենտրոնների զարգացում: Ենթադրվում է խոշոր չափերի և ծանր տրանսպորտային միջոցների տեղաշարժի վերահսկողության մեխանիզմի կատարելագործում, վտանգավոր բեռների փոխադրման համար անհրաժեշտ ընթացակարգերի սահմանում:

Ջրային տրանսպորտի ոլորտում շեշտը դրվելու է ներքին ջրային ուղիներով նավարկման կարգի կատարելագործման վրա: Քաղաքացիական ավիացիայի ոլորտում ԵԱՏՄ երկրները կշարունակեն մինչև 2025 թ. ուղևորների և բեռների ավիափոխադրումների ժամանակ սահմանափակումների վերացմանն ուղղված աշխատանքը[26]:

Աշխատողների տեղաշարժի խոչընդոտների վերացում և մարդկային ռեսուրսների զարգացում:

Բնակչության արագ ծերացման պայմաններում ազգային աշխատուժի անկումը կարող է արգելակել ՌԴ տնտեսության զարգացումը: Այս առումով միգրացիոն ռեսուրսը ձեռք է բերում կարևոր դեր: ՌԴ-ն շահագրգռված է հարևան երկրներից աշխատուժի ներհոսքով: Միևնույն ժամանակ երկրի արդիականացման և նորարարական տնտեսության ստեղծման անհրաժեշտությունը աշխատանքի որակի առումով որոշակի պահանջներ է ներկայացնում միգրանտներին, ուստի մարդկային ռեսուրսների զարգացման խնդիրը դառնում է ոչ պակաս սուր, քան աշխատանքային ռեսուրսների ներգրավման խնդիրը: Այդ առումով ամրագրվել են մի շարք համաձայնագրեր, համաձայն որոնց՝ Միության երկրների քաղաքացիներն իրավունք ունեն աշխատանքային գործունեություն իրականացնելու Եվրասիական տնտեսական միության պայմանագրի ցանկացած անդամ պետությունում[27]:

ԵԱՏՄ շրջանակներում աշխատատեղերի միասնական շուկան մի շարք հնարավորություններ է բացում.

Առկա ընդհանուր աշխատանքային ռեսուրսների ավելի ռացիոնալ բաշխման հնարավորություն՝ կախված անդամ երկրների տնտեսությունների կարիքներից:

ԵԱՏՄ անդամ պետությունների քաղաքացիների զբաղվածության և սոցիալական տեղաշարժերի ավելի մեծ հնարավորություններ:

Հյուրընկալող երկրում սոցիալական ապահովության համակարգի առկայություն, աշխատանքային միգրանտների մուտքի հնարավորություն:

Միգրանտների մասնագիտական ներուժի իրացման հնարավորություն (կրթական փաստաթղթերի փոխադարձ ճանաչում):

Ընդունող երկրների աշխատանքային շուկաներում քաղաքացիների և միգրանտների միջև զբաղվածության առումով խտրականության վերացում:

Առաջին անգամ սահմանվել է կանոն, համաձայն որի՝

Միության անդամ պետությունների քաղաքացիները պետությունների սահմաններն անցնելիս իրենց արտասահմանյան անձնագրերում չեն լրացնում միգրացիոն քարտեր՝ պայմանով, որ տվյալ վայրում նրանց գտնվելու ժամկետը չգերազանցի մուտքի օրվանից հաշված 30 օրը:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովը մշակել է կենսաթոշակային ապահովման ոլորտում համագործակցության միջազգային համաձայնագիր, որի հիմնական նպատակը կենսաթոշակային ապահովման ոլորտում հավասար իրավունքների և երաշխիքների ապահովումն է, կենսաթոշակը պաշտպանելը, ԵԱՏՄ անդամ պետությունների աշխատողների և նրանց ընտանիքների իրավունքների պաշտպանությունը Միության ողջ տարածքում: Համաձայնություն է ձեռք բերվել կրթական բնույթի փաստաթղթերի ուղղակի ճանաչման շուրջ. Առանց որևէ ընթացակարգի սահմանվել են աշխատանքի շուկա ընդունվելը և գիտական կոչումների ճանաչման կարգը:

Էլեկտրաէներգիայի ընդհանուր շուկայի ստեղծում:

ՌԴ-ն շահագրգռված է ավելցուկային[28] էլեկտրաէներգիայի արտահանմամբ ինչպես ԵԱՏՄ երկրներ, այնպես էլ՝ արտաքին շուկա: ԵԱՏՄ երկրների և ՌԴ ընդհանուր շահերից է բխում էլեկտրաէներգիայի միասնական շուկայի ստեղծումը, որպեսզի կարողանան ավելորդ էլեկտրաէներգիան արտահանել երրորդ երկրներ, ինչպես նաև բավարարել սեփական կարիքները: 2015 թ. մայիսի 8-ին Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստում ընդունվել է ԵԱՏՄ էլեկտրաէներգիայի ընդհանուր շուկայի ձևավորման հայեցակարգը: Նախատեսվել է մինչև 2025 թվականը ստեղծել ածխաջրածնային հումքի ընդհանուր շուկա, գազի մատակարարման միասնական համակարգ, որին հավասար հասանելիություն կունենան Միության բոլոր երկրները:

Եվրասիական ինտեգրման ամենակարևոր խնդիրը ծառայությունների միասնական շուկայի ձևավորումն է[29]:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշմամբ հաստատվել է ծառայությունների ցանկը, որոնք կգործեն մեկ շուկայի սկզբունքների համաձայն. Շինարարական ծառայություններ, ինժեներական ծառայություններ, գյուղատնտեսությանը վերաբերող ծառայություններ, մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտում ծառայություններ, հյուրանոցային և հասարակական սննդի ծառայություններ և այլն:

ԵԱՏՄ շրջանակներում ստեղծվում է պետական գնումների միասնական շուկա, ուր հավասար պայմաններով մուտք կունենան բոլոր երեք երկրների գործարարները: Սա կընդլայնի միմյանց պետական գնումների շուկաներ մուտք գործելու և մրցակցությունը մեծացնելու հնարավորությունները: Բացի այդ՝ ԵԱՏՄ պայմանագիրը Եվրասիական տնտեսական հանձնաժողովին լիազորություն է տալիս աջակցություն տրամադրելու Միության անդամ պետությունների գործարար կառույցներին երրորդ երկրների շուկաներ մուտք գործելու հարցում: Այն սահմանում է տնտեսության կարևոր ոլորտներում՝ տրանսպորտ, էներգետիկա, մակրոտնտեսություն, արդյունաբերություն և գյուղատնտեսություն, համակարգված քաղաքականություն վարելու անհրաժեշտությունը: Միության շրջանակներում իրականացվում է համակարգված ագրոարդյունաբերական քաղաքականություն, որի հիմնական նպատակն է բարձրացնել ագրոարդյունաբերական հատվածի մրցունակությունը, ծածկել գյուղատնտեսական ընդհանուր շուկայի կարիքները և արտահանման ներուժի զարգացումը:

Ըստ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տվյալների՝ 2014 թ. պարենային ապրանքների ու գյուղատնտեսական հումքի փոխադարձ առևտրի մասնաբաժինը աճել է 12.7%-ից 14%, մեքենաների, սարքավորումների և տրանսպորտային միջոցների մասնաբաժինը՝ 20.4%-ից մինչև 20.7%, միաժամանակ նվազել է հանքային արտադրանքի, վառելիքի և էներգիայի մասնաբաժինը՝ 32.6%-ից 30.7%[30]:

2015 թվականից մինչև 2019 թվականը արդյունաբերական արտադրությունը ԵԱՏՄ-ում աճել է 12.2%-ով, այդ թվում՝ 13.8%-ով մշակող արդյունաբերությունում: Ընդ որում, դեղագործական արտադրանքի արտադրությունն ավելացել է 20.1%-ով, էլեկտրոնայինինը և օպտիկականինը՝ 12.7%-ով31:

ԵԱՏՄ պետությունների ղեկավարները 2020 թ. դեկտեմբերի 11-ին Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստում հաստատել են մինչև 2025 թվականը եվրասիական տնտեսական ինտեգրացիայի զարգացման ռազմավարական ուղղությունները[32]: Այդ առումով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդին տրվել են հետևյալ հանձնարարականները.

2021 թ. 1-ին եռամսյակում հաստատել ռազմավարական ուղղությունների իրագործմանն ուղղված միջոցառումների պլանը:

Եվրասիականտն տեսական միության գազի ընդհանուր շուկայի ձևավորման վերաբերյալ միջազգային պայմանագրի շրջանակներում մշակել ԵԱՏՄ գազի ընդհանուր շուկայում փոխադրման ծառայությունների գնագոյացման և սակագնագոյացման հարցը:

Կյանքի կոչել ինտեգրացիայի հետագա զարգացման «ճանապարհային քարտեզը», որը նախատեսում է 13 միջազգային պայմանագրերի, ԵԱՏՄ 60-ից ավելի նորմատիվային իրավական ակտերի մշակում և ստորագրում, Միության մասին պայմանագրում շուրջ 25 փոփոխություններ և լրացումներ, ինչպես նաև փոփոխություններ ԵԱՏՄ պետությունների ազգային օրենսդրություններում:

2020 թ. հունվարի 22-ին Ռուսաստանի ԱԳՆ-ում կայացած հանդիպման ժամանակ ամփոփվել են ԵԱՏՄ-ի, ԱՊՀ-ի, ՀԱՊԿ-ի շրջանակներում համատեղ աշխատանքի արդյունքները[33]: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ Միխայիլ Մյասնիկովիչը հունվարի 21-ին մասնակցել է Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) անդամ պետությունների դեսպանների հետ

ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի՝ Մոսկվայում կայացած հանդիպմանը: Հանդիպմանը մասնակցել են նաև ԱՊՀ գործադիր կոմիտեի նախագահ-գործադիր քարտուղար Սերգեյ Լեբեդևը և ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Ստանիսլավ Զասը: Հանդիպման ընթացքում ամփոփվել են 2020 թվականին իրականացված համատեղ աշխատանքի արդյունքները, և նախանշվել են համագործակցության զարգացմանն ուղղված հետագա քայլերը: Ընդգծվել է հետխորհրդային տարածքում ինտեգրացիոն բազմամակարդակ գործընթացների համադրման կարևորությունը: ■

Օգտագործված աղբյուրներ և գրականության ցանկ

1- «Концепция внешней политики Российской Федерации. Утверждена Президентом Российской Федерации В.В.Путиным 30 ноября 2016 г.» // Официальный сайт Министерства иностранных дел Российской Федерации, URL: https://www.mid.ru/foreign_policy/official_documents/-/asset_publisher/CptICkB6BZ29/content/id/2542248.

2- Տես Սահակյան Մ., Ռուսաստանը վերադառնում է համաշխարհային մեծ քաղաքականություն, «21-րդ ԴԱՐ», 2017, թիվ 2 (72), https://www.researchgate.net/publication/315787456_RUSASTAN_VERADARNUM_E_HAMASXARHAYIN_MEC_KAGAKAKANUTYUN:

3- «Концепция внешней политики Российской Федерации. Утверждена Президентом Российской Федерации В.В.Путиным 30 ноября 2016 г.» // Официальный сайт Министерства иностранных дел Российской Федерации, URL: https://www.mid.ru/foreign_policy/official_documents/-/asset_publisher/CptICkB6BZ29/content/id/2542248.

4- Տես Սահակյան Մ.,նշվ. աշխ.:

5- Տես Алексеенкова Е.С., ЕАЭС к 2025 г.: приоритеты и ожидания государств-членов / Е.С.Алексеенкова // Перспективы развития проекта ЕАЭС к 2025 году. Рабочая тетрадь. Спецвыпуск /2017/ [Е.С.Алексеенкова, И.С.Глотова, А.В.Девятков и др.]; [гл. ред. И.С.Иванов]; Российский совет по международным делам (РСМД), М.: НП РСМД, 2017, էջ 6-37, https://mgimo.ru/upload/iblock/679/alekseenkova.pdf.

6- Տես նույն տեղում:

7- Տես «ВНЕШНЯЯ ТОРГОВЛЯ РФ. ДАННЫЕ ФТС РОССИИ 2020 ГОД»,https://gipp.ru/news/poligrafiya-rynok-bumagi/vneshnyaya-torgovlya-rf-dannye-fts-rossii-2020-god/.

8- Տես նույն տեղում:

9- Տես նույն տեղում:

10- Տես Алексеенкова Е.С., նշվ. աշխ., էջ 6-37:

11- Տես «ԵԱՏՄ-ի առաքելությունը. Մեծ Եվրասիայի տնտեսական զարգացման տարածաշրջանային կենտրոն և հիմնասյուն /Դրոշմանիշ/», http://www.eurasiancommission.org/hy/nae/news/Pages/23-03-2021-00.aspx:

12- Տես «ВНЕШНЯЯ ТОРГОВЛЯ РФ. ДАННЫЕ ФТС РОССИИ 2020 ГОД»,https://gipp.ru/news/poligrafiya-rynok-bumagi/vneshnyaya-torgovlya-rf-dannye-fts-rossii-2020-god/.

13- Տես Интервью Министра по экономике и финансовой политике Евразийской экономической комиссии Т. М. Сулейменова, http://www.eurasiancommission.org/ru/nae/news/Pages/17-02-2016-1.aspx.

14- Տես Сулейменов Т.М.,Приоритеты евразийской интеграции. ЕВРАЗИЙСКАЯ ИНТЕГРАЦИЯ: экономика, право, политика,2015;(2):7-13, https://www.eijournal.ru/jour/article/viewFile/28/13.

15- Տես նույն տեղում:

16- Տես «Եվրասիական տնտեսական միության իրավական կարգավիճակը և ընդլայնման քաղաքականությունը», http://www.kargavorum.nkr.am/static/3844:

17- Տես նույն տեղում:

18- «ԵԱՏՄ-ի առաքելությունը. Մեծ Եվրասիայի տնտեսական զարգացման տարածաշրջանային կենտրոն և հիմնասյուն /Դրոշմանիշ/», http://www.eurasiancommission.org/hy/nae/news/Pages/23-03-2021-00.aspx

19- Տես Тимофеев О., Центральноазиатский и транссибирский маршруты ЭПШП не конкуренты // РСМД. —25 января 2016, URL: https://russiancouncil.ru/analytics-and-comments/analytics/tsentralnoaziatskiy-i-transsibirskiy-marshruty-epshp-ne-konk/.

20- Տես «Сопряжение ЕАЭС и ЭПШП приобретает реальные очертания: согласован список инфраструктурных проектов» // Евразийская экономическая комиссия, 1 марта 2017 г.,URL: http://www.eurasiancommission.org/ru/nae/news/Pages/2-03-2017-1.aspx.

21- Տես «ОАО «РЖД» в 2017 г. инвестирует в модернизацию БАМа и Транссиба 35,6 млрд рублей»: // Տես Алексеенкова Е.С. ЕАЭС к 2025 г.: приоритеты и ожидания государств-членов / Е.С.Алексеенкова // Перспективы развития проекта ЕАЭС к 2025 году. Рабочая тетрадь. Спецвыпуск / 2017 / [Е.С.Алексеенкова, И.С.Глотова, А.В.Девятков и др.]; [гл. ред. И.С.Иванов]; Российский совет по международным делам (РСМД). — М.: НП РСМД, 2017. — С. 33. https://mgimo.ru/upload/iblock/679/alekseenkova.pdf.

22- Տես «Транссиб и БАМ избавляются от "узких мест"»,https://rg.ru/2020/12/22/transsib-izbavliaetsia-ot-uzkih-mest.html.

23- Տես Фененко А., «Транссиб» — наиболее реалистичный вариант ЭПШП // РСМД,URL: https://russiancouncil.ru/analytics-and-comments/analytics/transsib-naibolee-realistichnyy-variant-epshp/.

24- Տես «Համաձայնեցվել է 2021-2023 թվականների տրանսպորտային քաղաքականության իրագործման «ճանապարհային քարտեզը»», http://www.eurasiancommission.org/hy/nae/news/Pages/19-02-2021-4.aspx:

25- Տես նույն տեղում:

26- Տես նույն տեղում:

27- Տես Интервью Министра по экономике и финансовой политике Евразийской экономической комиссии Т. М. Сулейменова газете «Республика» «Все плюсы общего пространства», URL: http://www.eurasiancommission.org/ru/nae/news/Pages/12-01-2015-2.aspx.

28- Տես Алексеенкова Е.С., նշվ. աշխ., էջ 6-37, https://mgimo.ru/upload/iblock/679/alekseenkova.pdf:

29- Տես Сулейменов Т.М.,նշվ. աշխ., էջ 7-13, https://www.eijournal.ru/jour/article/viewFile/28/13:

30- Տես նույն տեղում:

31- Տես «ԵԱՏՄ-ի առաքելությունը. Մեծ Եվրասիայի տնտեսական զարգացման տարածաշրջանային կենտրոն և հիմնասյուն /Դրոշմանիշ/»,http://www.eurasiancommission.org/hy/nae/news/Pages/23-03-2021-00.aspx:

32- Տես «ԵԱՏՄ պետությունների ղեկավարները քննարկել են մինչև 2025 թվականը եվրասիական տնտեսական ինտեգրացիայի զարգացման ռազմավարական ուղղությունները», http://www.eurasiancommission.org/hy/nae/news/Pages/11-12-2020-02.aspx:

33- Տես «2020 թվականին ԵԱՏՄ-ի, ԱՊՀ-ի, ՀԱՊԿ-ի շրջանակներում համատեղ աշխատանքի արդյունքներն ամփոփվել են Ռուսաստանի ԱԳՆ-ում կայացած հանդիպմանը»,http://www.eurasiancommission.org/hy/nae/news/Pages/22-01-2021-1.aspx:

Պաղեստինա-իսրայելական թնջուկը կրկին մերձավորարևելյան և աշխարհաքաղաքական օրակարգերում

Արմեն Պետրոսյան
Արևելագետ, տարածաշրջանային հարցերով փորձագետ

Մերձավոր Արևելքի «քրոնիկ» հակամարտությունը՝ պաղեստինա-իսրայելական հիմնախնդիրը, ռազմական լարվածության հերթական շրջափուլն արձանագրեց ս.թ. մայիս ամսվա ընթացքում: Ապրիլի կեսերից Իսրայելի տարածքում, հատկապես Արևելյան Երուսաղեմում տարբեր պատճառներով արձանագրված պաղեստինա-իսրայելական բախումներն էսկալացիայի ավելի լայն մասշտաբներ ընդգրկեցին՝ մայիսի 6-ից սկսած, միաժամանակ առավել խարխլելով Իսրայել պետության ներքին կայունությունն, իսկ մայիսի 10-21-ին վերաճելով վերջին 15 տարվա կտրվածքով Իսրայել-Գազայի հատվածում ամենամասշտաբային օդային դիմակայության:

- **Պատմական ակնարկ**

Պաղեստինա-իսրայելական թնջուկը նորագույն պատմության ամենատևական և արյունալի՝ արաբ-իսրայելական հակամարտության առանցքն է, ինչպես նաև՝ առանձին բաղադրիչը: Իրավաքաղաքական առումով հակամարտությունը սկզբնավորվել է ՄԱԿ-ի ԳԱ կողմից 1947 թ. նոյեմբերի 29-ին 181 (II) բանաձևի ընդունումից հետո՝ Պաղեստինում բրիտանական մանդատի դադարեցման և նրա տարածքում հրեական ու արաբական անկախ պետությունների **ստեղծման վերաբերյալ:** Համաշխարհային կրոնական նշանակության Երուսաղեմ ու Բեթղեհեմ քաղաքներն էլ գտնվելու էին միջազգային վերահսկողության ներքո: 1948 թ. մայիսի 14-ին Իսրայել պետության հռչակումից հետո սկսված առաջին արաբ-իսրայելական պատերազմի(պատերազմի երկրորդ փուլը) հետևանքով Պաղեստինում արաբական պետության համար նախատեսված շրջաններից Հորդանան գետի Արևելյան ափն անցավ Տրանսհորդանանի թագավորության վերահսկողության տակ, իսկ Գազայի հատվածը՝ Եգիպտոսի: Այսինքն՝ հատկապես արաբական երկրների հակաիսրայելական ծայրահեղական դիրքորոշումը Պաղեստին պետության ձևավորման գործընթացի տապալման պատճառ դարձավ:

Այս իրավիճակը սկզբունքորեն փոխվեց 1967 թ. արաբ-իսրայելական «Վեցօրյա» պատերազմի հետևանքով, երբ Իսրայելը Հորդանանից և Եգիպտոսից գրավեց Պաղեստին պետության համար նախատեսված տարածքները՝ դառնալով դրա ստեղծման միակ խոչընդոտը:

Իսկ 1973 թ. «Դատաստանի օրվա» պատերազմից հետո ամերիկյան «քայլ առ քայլ» մոտեցման և վճռորոշ միջնորդության արդյունքում 1978-1979 թվականներից արդեն արաբ-իսրայելական հակամարտությունը տրոհվեց առանձին ճյուղերի՝ եգիպտա-իսրայելական, հորդանանա-իսրայելական, սիրիա-իսրայելական, լիբանանա-իսրայելական, պաղեստինա-իսրայելական և այլն: Առաջին

երկու ճյուղերի խնդիրը կարգավորվել է դարձյալ ԱՄՆ-ի առանցքային միջնորդությամբ կայացած Եգիպտոս-Իսրայել, Հորդանան-Իսրայել հաշտության պայմանագրերի շնորհիվ:

Իրենց ակտիվությամբ և պայթյունավտանգ բնույթով հատկապես առանձնանում են հակամարտության միջուկը հանդիսացող Պաղեստինյան հիմնախնդիրը և Երուսաղեմի հիմնահարցը, որոնց առավել սուր ռազմական դրսևորումներն արձանագրվել են 1987 և 2000 թվականների ինթիֆադաների(ապստամբություն) տեսքով: Այս հիմնախնդիրը որակական նոր շրջափուլ թևակոխեց 1994 թվականից՝ Պաղեստինյան Ինքնավարության (այսուհետև՝ ՊԻ) ձևավորմամբ: Իր հերթին պաղեստինա-իսրայելական հիմնախնդիրը բովանդակային առումով 2 ճյուղի բաժանվեց 2007 թվականից, երբ դրանից 1 տարի առաջ տեղի ունեցած համապաղեստինյան խորհրդարանական ընտրություններից հետո ՊԻ տարածքը բաժանվեց պաղեստինյան մրցակից ուժերի կողմից վերահսկվող առանձին գոտիների: Հորդանան գետի Արևմտյան ափում շարունակում է իշխել ՊԻ ղեկավար Մահմուդ Աբասի գլխավորած «ՖԱԹՀ» կազմակերպությունը, Գազայի հատվածում՝ «ՀԱՄԱՍ» շարժումը, որը մի շարք երկրների կողմից ճանաչվել է որպես ահաբեկչական խմբավորում:

2000-ական թվականների վերջից առարկայական, ինչպես և արհեստական դրդապատճառներով պարբերաբար ակտիվացող պաղեստինա-իսրայելական հակամարտությունը հիմնականում դրսևորվել է հետևյալ 2 հարթություններում.

1. Հորդանան գետի Արևմտյան ափում, Իսրայելի՝ արաբներով բնակեցված շրջաններում, Երուսաղեմում մի կողմից՝ պաղեստինցի արաբների, մյուս կողմից՝ հրեաների, իսրայելական իրավապահ մարմինների միջև բախումներով, անհնազանդության տարաբնույթ գործողություններով:

2. Գազայի հատվածից պաղեստինյան խմբավորումների կողմից Իսրայելի տարածքի հրթիռակոծման և հրեական պետության կողմից պատասխան ռազմագործողությունների (հիմնականում օդային) տեսքով:

2007 թվականից պաղեստինա-իսրայելական հակամարտության առավել լայնամասշտաբ ռազմական դրսևորումներն արձանագրվել են նախ՝ 2008-2009 թվականների դեկտեմբեր-հունվար ամիսներին Գազայի հատվածում իսրայելական ՋՈՒ-ի նախաձեռնած «Ձուլածո արճիճ», ապա՝ 2012 թվականի նոյեմբերին՝ «Ամպե սյուն», իսկ 2014 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին «Անսասան ժայռ» օդային և ցամաքային ռազմագործողությունների տեսքով: Դրանցից հետո, արդեն 2018-2019 թվականներին, Դոնալդ Թրամփի վարչակազմի կողմից ամբողջական Երուսաղեմն Իսրայելի մայրաքաղաք ճանաչելու և ԱՄՆ-ի դեսպանատունն այնտեղ տեղափոխելու վերաբերյալ որոշումների պատճառով արձանագրված լարվածությունը, ինչպես և քննարկվող սրացումը դրսևորվել են արդեն հակամարտությանը բնորոշ վերոնշյալ 2 հարթություններում միաժամանակ:

• **Հակամարտության ակտիվացման ներկա շրջափուլի իրավիճակային առիթներն ու դրդապատճառները**

Պաղեստինա-իսրայելական հակամարտության վերջին սրացման առիթ են հանդիսացել դեռևս ս.թ. ապրիլ ամսվա կեսերին Իսրայելի անվտանգության ուժերի և պաղեստինցիների միջև տեղի ունեցած բախումները, երբ իսրայելական ոստիկանությունն արգելել էր արաբներին մուսուլմանների համար սրբազան համարվող Ռամադան ամսվա ընթացքում հավաքվել Երուսաղեմի հին թաղամասում գտնվող Դամասկոսի դարպասի (Տաճարի լեռ) մոտ և Ալ-Ակսա մզկիթում: Ձանգվածային բախումների հետևանքով տուժել էին ավելի քան 700 պաղեստինցի, Իսրայելի անվտանգության 21 աշխատակից:

Բացի նշվածից՝ իրադարձային առումով միմյանց հաջորդեցին Ռամադանի վերջին ուրբաթօրյա (մայիսի 7-ի) աղոթքի ծեսի, ինչպես նաև **Իսրայելում, պաղեստինյան** տարածքներում մայիսի 9-10-ին նշվող «Երուսաղեմի օրվա» միջոցառումները, որոնք բավականաչափ հուզական տրամադրություններ են արթնացնում և՛ արաբների, և՛ հրեաների շրջանում և գրեթե միշտ ուղեկցվում են զանգվածային բախումներով ու անկարգություններով:

Միևնույն ժամանակ հարկ է փաստել, որ լարվածությանը հավելյալ կերպով նպաստել է այդ օրերին Երուսաղեմի շրջանային դատարանի կայացրած որոշումը՝ Արևելյան Երուսաղեմի հյուսիս-արևելյան Շեյխ Ջարահ թաղամասում ապրող պաղեստինցի 8 ընտանիքների՝ իրենց տները լքելու պահանջի վերաբերյալ:

Այս լրջագույն խնդիրն Երուսաղեմի հիմնահարցի կարևոր բաղադրիչներից է: Շեյխ Ջարահում հերթական դատական գործը դարձյալ անշարժ գույքի մասնավոր վեճ է պաղեստինցի ընտանիքների և հրեա վերաբնակիչների գաղտնի խմբի միջև: Դատական վեճի համաձայն՝ հրեաների խումբը Պաղեստինի

Ավերածություններ Գազայում

մանդատային ժամանակահատվածում ձեռք էր բերել ներկայումս արաբ ընտանիքներին պատկանող տարածքները, որոնք արաբ-իսրայելական առաջին պատերազմի ընթացքում լքել էր՝ անվտանգության նկատառումներից ելնելով: Պաղեստինցիներն էլ 1956 թվականին Հորդանանի կառավարությունից գնել էին այդ տարածքների վրա կառուցված տները: Հետագայում, ամբողջական Երուսաղեմում վերահսկողություն սահմանելուց հետո, իսրայելական օրենսդրությամբ հնարավորություն էր ընձեռվել միայն հրեաներին՝ դատական կարգով վերադարձնելու իրենց պատկանող գույքը: Հարկ է նշել, որ նմանատիպ հայցերի հիմքով Արևելյան Երուսաղեմի բնակիչ հանդիսացող պաղեստինցի արաբների ունեզրկման շարունակական գործընթացներն այս հակամարտության ամենազգայուն և պայթյունավտանգ խնդիրներից են: Դրանք պատեհ իրավիճակային առիթ են հատկապես իսրայելական կողմի համար՝ ըստ անհրաժեշտության հակամարտությունը կրկին ակտիվացնելու նպատակով, ինչպես՝ տվյալ դեպքում:

Ի պատասխան Արևելյան Երուսաղեմում Իսրայելի ոստիկանության գործողությունների և ի աջակցություն իսրայելական քաղաքներում արաբների կողմից հակակառավարական ու հակահրեական գործողությունների՝ մայիսի 10-ից պաղեստինյան «ՀԱՄԱՍ» շարժումը Գազայի հատվածից նախաձեռնեց հրեական պետության հրթիռակոծումը՝ սկիզբ դնելով Իսրայել-Գազա հերթական լայնամասշտաբ օդային դիմակայությանը:

Քարոզչական հարթությունում ևս հակամարտ կողմերը ռազմական գործողությունները ներկայացրեցին իրար չգիջող բավականաչափ հնչեղ կոդային անվանումներով. պաղեստինյան «Երուսաղեմյան սուրն»՝ ընդդեմ իսրայելական «Պատերի պահապան» գործողության:

Հակամարտության գոտում ձևավորված մի շարք իրողություններ հիմքեր են ստեղծում պնդելու, որ պաղեստինա-իսրայելական վերջին սրացումներն արհեստական էին, ժամանակային առումով ունեին առավելապես արտաքին և ներքին դրդապատճառներ, որոնք կարելի է դասակարգել հետևյալ պայմանական հաջորդականությամբ:

1. ԱՄՆ-ում տեղի ունեցած իշխանափոխությունից

հետո Ջ. Բայդենի վարչակազմի մերձավորարևելյան քաղաքականության մեջ ուրվագծվում են նաև Իսրայելի անվտանգությանը միտված ուղեգծի էական փոփոխություններ: Վերոնշյալի համատեքստում պաղեստինա-իսրայելական հակամարտության կարգավորման Դ. Թրամփի բացահայտ իսրայելամետ «Դարի գործարք» ծրագրի ձախողումից հետո իսրայելական կողմը խախտել է ամերիկա-իսրայելական պայմանավորվածությունները՝ պաղեստինյան տարածքներում իսրայելական բնակավայրերի ընդլայնման ծրագրերի դադարեցման վերաբերյալ: Իսրայելի կողմից նոր լարվածության հրահրումը կարելի է գնահատել նաև՝ որպես առանց ԱՄՆ-ի հետ համագործակցության, սեփական անվտանգության խնդիրներին ինքնուրույն դիմակայելու նոր մարտավարության ցուցադրություն, որն ամերիկյան նախորդ վարչակազմի կառավարման շրջանում իրականացվում էր Վաշինգտոնի հետ սերտ համակարգմամբ:

2. *Դ. Թրամփի վարչակազմի վարած աննախադեպ իսրայելամետ քաղաքականությունը և, ըստ դրա մեկ արդյունքի, Իսրայելի ու մի շարք կարևոր արաբական երկրների միջև հարաբերությունների կարգավորման գործընթացը, որն ամրագրվեց նաև «Աբրահամյան համաձայնագրերի» ստորագրմամբ, իրենց հերթին հանգեցրեցին Իսրայելի առավել անզիջում և ագրեսիվ վարքին ամբողջ տարածաշրջանում:* Այդ համաձայնագրերի միջոցով փաստացի կոտրվեց 2002 թվականին ԱՊԼ-ի շրջանակում ձևավորված արաբական միասնական դիրքորոշումը Պաղեստինյան հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ, որը հայտնի էր «Արաբական խաղաղ նախաձեռնություն» անվանումով: Այն ենթադրում էր Պաղեստին-Իսրայել թնջուկի հանգուցալուծում և բոլոր արաբական երկրների ու հրեական պետության միջև հաշտության կայացման փոխկապակցված ու համապարփակ գործընթաց:

3. Արտաքին պատճառների շարքում կարելի է նշել նաև Վիեննայում գրեթե 3 ամիս շարունակվող Իրանի միջուկային համաձայնագրի շուրջ բանակցությունները: Դրանք ընթանում են երկու ձևաչափով՝ Իրան-«4+1» (ՄԱԿ-ի ԱԽ 4 հիմնական անդամները, բացի ԱՄՆ-ից, և Գերմանիան) ուղիղ և Թեհրան-Վաշինգտոն միջնորդավորված բանակցությունների տեսքով: Գործընթացի նպատակը համաձայնագրի լիարժեք վերագործարկումն է՝ 2018 թվականից հետո ԱՄՆ-ի լիարժեք «վերադարձի» ապահովմամբ: Հետևաբար, հաշվի առնելով Իրանի սկզբունքային դիրքորոշումը Պաղեստինյան հիմնախնդրում, չի բացառվում, որ հակամարտության ակտիվացման միջոցով Իսրայելը նպատակ էր հետապնդում նաև խոչընդոտել Թեհրան-Վաշինգտոն համաձայնության կայացմանը և հակաիրանական տնտեսական պատժամիջոցների չեղարկմանը, որը մեծ հաշվով չհաջողվեց իրանական կողմի գրագետ դիրքորոշման և ամերիկյան վարչակազմի վճռական քաղաքականության շնորհիվ:

4. Վերջին սրացումները կարելի է դիտարկել նաև Իսրայելում և Պաղեստինում տեղ գտած ներքաղաքական, մասնավորապես ընտրական գործընթացների համատեքստում: Արդեն իսկ հայտնի է, որ Իսրայելում, անցած 2 տարվա ընթացքում տեղի ունեցած չորրորդ ընտրությունների արդյունքներով գործող վարչապետ Բենյամին Նեթանյահուին դարձյալ չհաջողվեց ձևավորել նոր կառավարություն: Դրանից հետո, իսրայելական օրենսդրության համաձայն, կառավարություն կազմելու մանդատը հանձնվել էր ընդդիմադիր «Փոփոխությունների դաշինք»-ի առաջնորդ Յաիր Լապիդին, որը կարող էր լիարժեքորեն հաջողել բացառապես խորհրդարան անցած ինչպես իսրայելական աջ ծայրահեղ պահպանողական, այնպես և արաբական քաղաքական ուժերի աջակցության դեպքում: Հետևաբար, վերոնշյալի համատեքստում, քանի որ Նեթանյահուի համար սկզբունքային կարևորություն ունի վարչապետի պաշտոնում մնալը, չի բացառվում, որ իսրայելական իշխանությունները միտումնավոր էին դրդել իրավիճակի սրմանը, քանի որ կանխատեսելի էր՝ լարվածության հետևանքով հրեա ու արաբ ժողովուրդների միջև կրկին խորացող էթնիկ թշնամանքը հավելյալ կերպով կխոչընդոտեր Իսրայելում նոր կառավարության ձևավորման գործընթացին: Մինչդեռ Նեթանյահուի ծրագիրը տապալվեց Լապիդի մանդատի ժամկետի լրանալուց ընդամենը 35 րոպե առաջ, երբ Իսրայելի ընդդիմության առաջնորդը նախագահին տեղեկացրեց, որ իրեն հաջողվել է ձևավորել կոալիցիոն կառավարություն:

5. Բացի Իսրայելից՝ մայիսի 22-ին նախանշվել էին 2006 թվականից ի վեր մի քանի անգամ հետաձգված խորհրդարանական ընտրությունները Պաղեստինյան Ինքնավարությունում, ինչպես նաև հունիսի 30-ին՝ ՊԻ նախագահի ընտրությունները: Մինչդեռ դրանք հերթական անգամ չեղարկվեցին ապրիլի 30-ին՝ պաղեստինյան խմբավորումների միջև եղած տարաձայնությունների և նրանց շրջանում առկա դիրքային ու ազդեցության փոփոխությունների հնարավորության պատճառով: Հետևաբար՝ ընթացիկ լարվածությունը բավարար պատճառ է Հորդանան գետի Արևմտյան ափում և Գազայի հատվածում կառավարող տարաբնույթ պաղեստինյան մրցակից, անգամ հակամարտ կառույցների համար՝ խորհրդարանական ընտրությունների հերթական չեղարկումը պաղեստինյան արաբ բնակչության շրջանում հիմնավորելու համար:

- ***Հերթական սրացման հանգուցալուծումը և հետևանքները***

Ինչպես և ընդունված է այս հակամարտության դեպքում, մայիսի 21-ին, ժամը 2-ին, դարձյալ Եգիպտոսի ջանքերով հակամարտ կողմերի միջև հաստատվեց հրադադար: Քարոզչական հարթությունում ևս տրամաբանությունը նույնն էր՝ արաբները կրակի դադարեցումն ընկալեցին իբրև պաղեստինյան դիմադրության հաղթանակ, իսկ իսրայելական կողմը հայտարարեց պաղեստինյան խմբավորումների ռազմական ենթակառուցվածքներին «հսկայական» վնաս հասցնելու մասին, ինչը հանգեցնելու է երկարատև հանդարտության:

Ընդհանուր առմամբ, այս հակամարտության բնույթը հաշվի առնելով, դրա մասնակիցների նպատակներն ու խնդիրները տարբեր, ոչ համադրելի հարթություններում են: Հակամարտ կողմերից յուրաքանչյուրն ունի արդյունավետության առավելագույն ցուցանիշների

սեփական սանդղակը: Եթե Իսրայելի դեպքում գլխավոր ռազմավարական նպատակը պաղեստինյան խմբավորումների մարդկային ու ռազմական ներուժի առավելագույն վնասազերծումն է, ապա պաղեստինցիների պարագայում՝ Իսրայել պետության ներքին և արտաքին անվտանգության համակարգերի, հասարակական կարգի առավելագույն խաթարումը, հասարակությանը հոգեբանական շոկի հասցնելը, Թել Ավիվի դեմ հնարավորինս կոշտ միջազգային ճնշման արձանագրումը:

Ինչպես հերթական սրացման ողջ ընթացքը, հանգուցալուծումը, այնպես էլ դրա առնչությամբ միջազգային հանրության դիրքորոշումը ևս միևնույն ուղեգծի շրջանակում էին: Բազմաթիվ երկրներ, կազմակերպություններ հանդես եկան կրակի դադարեցման վերաբերյալ միակողմանի կամ երկկողմ կոչերով, քննադատական հայտարարություններով, տարաբնույթ նախաձեռնություններով: Օրինակ՝ Թուրքիան, ինչպես այս հակամարտության նախկին սրացումների ընթացքում, այս անգամ ևս փորձեց դրանից առավելագույն օգուտ քաղել: Այդ երկրի ղեկավարությունն ամենակտրուկն է քննադատել Իսրայելի իշխանությունների «ահաբեկչական գործելաոճը»՝ կրկին ընդգծելով իսլամական աշխարհն առաջնորդելու հին և նոր հավակնություններն՝ այդ աշխարհի ամենազգայուն հիմնախնդրի հարցում դրսևորած «սկզբունքային» դիրքորոշման միջոցով:

ՄԱԿ-ի ԱԽ-ում մի քանի անգամ նախաձեռնվեցին ռազմական գործողությունների դադարեցմանը միտված հատուկ նիստեր, որոնց ընթացքում ԱՄՆ-ի կողմից միակողմանի վետոյի կիրառման պատճառով հնարավոր չէր լինում թեմատիկ բանաձևի ընդունումը: Այս ուղղությամբ Իսրայել-ԱՄՆ համագործակցությունը ևս տվյալ հակամարտության շրջանակում ընդունված պրակտիկա է: Վաշինգտոնը առավելագույնս արգելափակում է ՄԱԿ-ի ԱԽ-ի կողմից կրակի անհապաղ դադարեցման վերաբերյալ համապատասխան բանաձևի ընդունումը՝ հնարավորություն ընձեռելով Իսրայելին՝ լուծելու Գազայի հատվածում իր առջև դրված խնդիրները: Ի վերջո, իսրայելական կողմից համապատասխան ուղերձ ստանալուց հետո Վաշինգտոնն այլևս չընդդիմացավ, և ՄԱԿ-ի ԱԽ-ն իրավիճակի վերաբերյալ միաձայն հռչակագիր ընդունեց միայն մայիսի 22-ին՝ հրադադարի հաստատումից 1 օր անց:

Հերթական ռազմական էսկալացիայի հետևանքով, ըստ Իսրայելի պաշտպանության բանակի (այսուհետև՝ ՑԱՀԱԼ), Գազայի հատվածից Իսրայելի տարբեր բնակավայրերի, այդ թվում՝ Թել Ավիվ, Երուսաղեմ, Աշդոդ, Աշկելոն և այլ կարևոր քաղաքների ուղղությամբ արձակվել է ավելի քան 4300 հրթիռ, որոնցից առնվազն 15%-ն ընկել են հենց Գազայի տարածքում, իսկ իսրայելական «Երկաթե գմբեթ» ՀՕՊ համակարգը որսացել է երկրի սահմանները հատած հրթիռների 85%-90%-ը: ՑԱՀԱԼ-ի կողմից հարձակման են ենթարկվել Գազայի հատվածում գործող «ՀԱՄԱՍ» և «Իսլամական ջիհադ» կազմակերպություններին ենթակա շուրջ 850 թիրախներ, այդ թվում՝ կառավարական, անվտանգության, հետախուզության ոլորտների հաստատություններ (100 կմ երկարությամբ «Մետրո»

Իսրայելական «Երկաթե գմբեթ» ՀՕՊ համակարգը խոցում է

անվանումն ստացած ստորգետնյա թունելը), զինապահեստներ, հրթիռային և այլ ենթակառուցվածքներ, վնասազերծվել են պաղեստինյան կազմակերպությունների ավելի քան 2 տասնյակ առանցքային ներկայացուցիչներ, դաշտային հրամանատարներ: Իսրայելական կողմի նյութական կորուստները, նախնական տվյալների համաձայն, հասնում են մոտ 780 մլն դոլարի:

11 օր տևած ռազմական գործողությունների ընթացքում, ընդհանուր առմամբ, զոհվել է 299 մարդ: Պաղեստինյան կողմի տվյալներով՝ Գազայի հատվածում իսրայելական հրթիռակոծությունների հետևանքով զոհերի թիվը կազմում է 289 մարդ, որոնցից շուրջ 109-ը՝ կանայք և երեխաներ, վիրավորների թիվը կազմել է՝ մոտ 2000: Իսրայելական կողմի պնդմամբ՝ սպանված պաղեստինցիներից առնվազն 225-ը «ՀԱՄԱՍ» շարժման, «Իսլամական ջիհադ» և պաղեստինյան այլ խմբավորումների զինյալներ են (ըստ պաղեստինյան կողմի՝ «նահատակված» զինյալների թիվը 83 է): Իսրայելցիների շրջանում զոհերի թիվը 12 է, վիրավորներինը՝ ավելի քան 330:

Գազայի ուղղությամբ իրավիճակի հանդարտեցումից հետո՝ մայիսի 23-ից, իսրայելական իշխանությունները նախաձեռնեցին «Օրենք և կարգ ու կանոն» անվանումով հատուկ գործողությունն, արդեն հրեական պետության տարածքում ներքին կայունությունը վերականգնելու նպատակով, ինչի հետևանքով ձերբակալվել է անկարգությունների մասնակցության մեջ մեղադրվող 418 անձ: Իսկ վերջին էսկալացիայի ընթացքում ընդհանուր ձերբակալվածների թիվը գերազանցում է 2000-ը:

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ մերօրյա աշխարհի ամենաանարդար, իսկ միջազգային իրավակարգի հիմքերն ամենից խորքայինը վտանգած հակամարտությունն արձանագրեց հերթական սահմանափակ և վերահսկելի էսկալացիան, որն ուներ հատկապես սուբյեկտիվ արտաքին և ներքին դրդապատճառներ: Հարյուրավոր մարդկային զոհերը, ահռելի ծավալով մարդասիրական ճգնաժամը դարձյալ ծառայեցվեցին նեղ քաղաքական նպատակների: Մինչդեռ այս հանգուցային հիմնախնդիրը շարունակում է չլուծված մնալ հակամարտ կողմերի անհավասար ներուժի, իրարամերժ քաղաքական շահերի և դրանց կարգավորման «կնքահայր» միջազգային հանրության ոչ հետևողական և անսկզբունքային վարքագծի հետևանքով:

Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանը

Անի Մելքոնյան
Պատմաբան, ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության անդամ

Հայ ժողովրդի խորհրդարանները ընդամենը մեկդարյա պատմություն ունեն. 103 տարի է անցել հայ ժողովրդի առաջին խորհրդարանի բացումից, իսկ առաջին ընտրովի խորհրդարանի պատմությունը սկսվում է 1919 թ. օգոստոսի 1-ից: 1919 թ. հունիսի 21-23-ը Հայաստանում առաջին անգամ տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ, բայց մինչ առաջին խորհրդարանական ընտրությունների մասին խոսելը՝ մի փոքր Առաջին հանրապետության առաջին խորհրդարանի մասին:

1918 թ. Մայիսյան հերոսամարտերի արդյունքում հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը, որը միայն երկու ամիս անց ունեցավ իր խորհրդարանը, որի բացումն ու առաջին հանդիսավոր նիստը տեղի ունեցան 1918 թ. օգոստոսի 1-ին: Երևանի քաղաքային ակումբի դահլիճում բացված Հայաստանի խորհրդարանի անդրանիկ նիստին ողջ կազմով ներկա էր կառավարությունը՝ վարչապետ Հովհաննես Քաջազնունու գլխավորությամբ: Նիստին ներկա էին նաև Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Օսմանյան Թուրքիայի ներկայացուցիչները, Պարսկաստանի հյուպատոսը, ռուսական և մահմեդական ազգային խորհուրդների ներկայացուցիչները: Հայ բարձրաստիճան զինվորականներից ներկա էին Թովմաս Նազարբեկյանն ու Մովսես Սիլիկյանը: Խորհրդարանի անդրանիկ նիստի բացման պատիվը տրվեց Ավետիք Սահակյանին: Ս. Վրացյանի վկայությամբ. «Սահակյանի ճառը լսվեց խորը հուզումով: Պատգամավորներն ու հասարակությունը հաճախ ընդհատում էին նրան բուռն ծափահարություններով: Երբ իր խոսքն ավարտելուց հետո Սահակյանը արտասանեց՝ «Հայտարարում եմ Հայաստանի Խորհրդի նիստը բացված», դուրսը՝ Խորհրդարանի շենքի գլխին, բարձրացավ հանրապետության եռագույն դրոշակը, և հազարավոր բերաններ որոտացին «կեցցե՛». ծափահարությունները թնդացրին օդը: Հնչեց «Մեր հայրենիքը»: Ջորքը պատվի կեցավ»[1]:

Հայաստանի անդրանիկ խորհրդարանը, սակայն, մեր պատմության միակ խորհրդարանն է, որ կազմավորվել է ոչ թե ընտրությունների, այլ քաղաքական պայմանավորվածությունների արդյունքում:

1918 թ., Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական անկայուն վիճակով պայմանավորված, ընտրություններ անցկացնել հնարավոր չէր, ուստի քաղաքական կուսակցությունները խորհրդարանում ստացան քվոտավորված տեղեր. Հայոց ազգային խորհրդում ներկայացված կուսակցությունների տեղերը եռապատկվեցին. «Հայոց Ազգային խորհրդի չորս կուսակցությունները Հայաստանի խորհրդում ներկայացվեցին հետևյալ թվով՝ ՀՅԴ (6x3) 18, ՀԺԿ (2x3) 6, Սոց. դեմ (2x3) 6, Սոց. հեղափ. (2x3) 6»[2]: ՀՀ խորհրդարանի կազմում էին նաև երեք անկուսակցականներ, որոնցից, սակայն, Հայաստան եկան միայն երկուսը՝ Ստեփան Մամիկոնյանը և

Պետրոս Ջաքարյանը, իսկ Տիգրան Բեկզադյանը Երևան չեկավ, բայց Հայաստանի կառավարության հանձնարարականով դիվանագիտական աշխատանք էր կատարում (1918 թ.՝ Բաքվում, այնուհետև 1920 թ.՝ Վրաստանում ՀՀ դեսպան): Հայաստանում կար մեծ թվով թուրք-թաթար բնակչություն, ուստի խորհրդարանի կազմի մեջ մտան 6 թուրք, 1 ռուս և 1 քուրդ (եզդի): Ահա այսպիսի կազմ ուներ ՀՀ առաջին խորհրդարանը, սակայն, ինչպես իրավացիորեն նշում էր սոցիալիստ-հեղափոխական Արշամ Խոնդկարյանը, «Ուժերի այս բաշխումը չէր համապատասխանում իրականությանը: Կասկածից դուրս է, որ Դաշնակցությունը շատ ավելի հետևորդներ ուներ, քան մյուս երեք կուսակցությունները միասին վերցրած»[3]: Կազմավորված խորհրդարանը ժամանակավոր էր և չէր արտահայտում ժողովրդական տրամադրությունները, ուստի պատահական չէր, որ կարճ ժամանակ անց ժողովրդի և խորհրդարանի միջև խզում առաջացավ: 1919 թ. փետրվարի 28-ին քվորում չլինելու պատճառով խորհրդարանի հերթական նիստը չկայացավ, ընդդիմադիր ուժերը հրավիրեցին մասնավոր խորհրդակցություն, ինչը, մեղմ ասած, դահլիճում գտնվող հասարակության ներկայացուցիչների սրտով չէր: Վերջիններս ձախողեցին խորհրդակցությունը՝ բացականչելով. ««Չենք ուզում այսպիսի խորհրդարան», «Մենք պահանջում ենք ընտրովի խորհրդարան», «Դուրս ինքնակոչ պատգամավորներ»»[4]: Հասարակության պահանջով օրակարգային էր դառնում ընտրովի խորհրդարանի ձևավորումը: 1919 թ. ապրիլի 27-ին խորհրդարանն ընդունեց բանաձև իր աշխատանքները մեկ ամսով դադարեցնելու և խորհրդարանի լիազորությունները կառավարությանը փոխանցելու մասին: Մայիսի 26-ին կառավարությունն ընդունեց և մայիսի 28-ին հրապարակեց «Միացյալ և անկախ Հայաստանի» հռչակագիրը, որից հետո ՀՀ խորհրդարանի կազմը համալրվեց 12 արևմտահայ պատգամավորներով: Սա առաջ բերեց մյուս քաղաքական ուժերի դժգոհությունը: Ոմանք այն համարում էին «պետական հեղաշրջում», ինչն իհարկե այդպես չէր, որովհետև, ինչպես ասացինք, խորհրդարանի լիազորությունները փոխանցվել էին կառավարությանը, որն իրավասու

էր նմանատիպ փաստաթուղթ ընդունելու: Սոցիալ-դեմոկրատներն ու սոցիալիստ-հեղափոխականները դեմ էին ոչ միայն «Միացյալ և անկախ Հայաստանի», այլև առհասարակ Հայաստանի անկախության գաղափարին, իսկ ՀԺԿ-ն (ռամկավարներ) գտնում էր, որ այդ որոշմամբ ոտնահարվել են գաղութահայության շահերը, քանի որ արևմտահայ պատգամավորները Հայաստանի Հանրապետության տարածքում ապրող արևմտահայեր էին, ոչ թե գաղութահայեր (ըստ նրանց՝ այդ պատգամավորները ներկայացնում էին միայն Հայաստանի Հանրապետության տարածքում ապրող 200.000 արևմտահայերին): Իրականությունն այն էր, սակայն, որ ՀԺԿ-ն դժգոհ էր, որովհետև այդ 12 արևմտահայ պատգամավորները դաշնակցականներ էին, իսկ նրանք պահանջում էին այդ տեղերը հատկացնել Փարիզում գտնվողներին, որոնք ռամկավարներ էին: ՀԺԿ-ն, փաստորեն, ավելի շատ կուսակցական շահ էր հետապնդում, քան, ինչպես ինքն էր պնդում, արևմտահայության իրավունքների պաշտպանությունը: Այս պայմաններում հունիսի 4-ին տեղի ունեցավ խորհրդարանի նիստը, որի ժամանակ ընդդիմադիր կուսակցությունները մեծ աղմուկով լքեցին դահլիճը: Դահլիճում մնացած ՀՅԴ խմբակցությունն ու 12 արևմտահայ պատգամավորները ի վերջո որոշեցին դադարեցնել խորհրդարանի աշխատանքները մինչև ընտրություններով նոր խորհրդարանի ձևավորումը:

Հունիսի 5-ին աշխատանքները դադարեցրած խորհրդարանը իր գործունեության գրեթե 10 ամիսների ընթացքում ընդունել է մոտ 116 օրենք երկրի կյանքի տարբեր բնագավառների վերաբերյալ:

Ընտրողների ցուցակները պատրաստվել էին դեռևս մայիսի 15-ին: Ընտրողները կարող էին ծանոթանալ դրանց և անճշտություններ գտնելու դեպքում 10 օրվա ընթացքում հայտնել այդ մասին:

Սկզբնական շրջանում Հայաստանի խորհրդարանում ներկայացված ուժերը պատրաստ էին մասնակցելու ընտրություններին, բայց ընտրություններից կարճ ժամանակ առաջ ՀԺԿ-ն հետ վերցրեց իր ցուցակը՝ հայտարարելով, որ չի մասնակցելու ընտրություններին: Բացի ՀՅԴ-ի հետ ունեցած որոշակի տարաձայնություններից՝ կար նաև մեկ այլ պատճառ՝ ՀԺԿ ներկուսակցական անհամաձայնությունը ընտրական ցուցակի վերաբերյալ. ««Աշխատավոր»-ը, մեկնաբանելով ՀԺԿ նախընտրական վարքագիծը, կարծիք էր հայտնել, թե ընտրություններին չմասնակցելու պատճառը մայիսի 28-ի անկախության ակտը չէր, այլ այն, որ կուսակցության Թիֆլիսի մարմինն էր կազմել պատգամավորական թեկնածուների ցուցակը: Մինչև ցուցակի՝ Երևան հասնելը, այսինքն՝ ընտրություններից մոտ մեկ շաբաթ առաջ, ամեն ինչ հարթ էր ընթանում, ամեն ինչ սկսվեց ցուցակի՝ Երևան հասնելուց հետո, որում գերապատվությունը տրված էր թիֆլիսյան գործիչներին»[5]:

Ընտրություններին չմասնակցեցին հնչակյանները և բոլշևիկները, որոնք հայտարարեցին, որ մասնակցել ընտրություններին կնշանակի ճանաչել «դաշնակցական» Հայաստանի գոյությունը: Այս ամենով հանդերձ՝ ընտրապայքարն ընթանում էր, և դրա «….անվիճելի առաջատարը Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությունն էր, որը հանդես էր գալիս հետևյալ կարգախոսներով՝ Միացյալ և Անկախ Հայաստան, ամբողջ իշխանությունը՝ աշխատավոր ժողովրդին, հողը՝ գյուղացուն, գործը՝ գործազուրկին, ժողովուրդների համերաշխություն և եղբայրություն»[6]:

Ի տարբերություն «Միացյալ և անկախ Հայաստանի» կարգախոսով հանդես եկող ՀՅԴ-ի՝ սոցիալիստ-հեղափոխականները (էսէռ) հանդես էին գալիս հակաանկախական կարգախոսներով. ««Սոցիալիստ-հեղափոխական» թերթը, խոսելով ընտրություններում իրենց նպատակների և մասնակցության մասին, գրում էր. «Մենք գնում ենք ափերից դուրս եկած քաղաքական կյանքը դնելու իր բնականոն հունի մեջ, որ նա ընթանա զուգահեռ և կողք կողքի Ռուսաստանի մեծ դեմոկրատիայի գծած քաղաքական ու սոցիալական կյանքի հեղափոխական շավիղով»»[7]:

Խորհրդարանական ընտրությունները տեղի ունեցան նախապես նշանակված օրերին՝ 1919 թ. հունիսի 21-23-ին: Ընտրությունների արդյունքներով խորհրդարանական տեղերը բաշխվեցին հետևյալ կերպ. «ՀՀԴ՝ 72, էսէռներ՝ 4, թուրքեր՝ 3 և Անկուսակցական գյուղացիական միություն՝»[8]: Եվ չնայած հաջորդ օրն իսկ ընդդիմադիր մամուլում բարձրացած զանազան բողոքներին ու դժգոհություններին՝ էսէռներն այնուամենայնիվ գոհ էին ընտրությունների արդյունքներից, ինչը չի կարելի ասել ՀԺԿ-ի մասին: Այդ օրերի երկրի քաղաքական և այլ իրավիճակից ելնելով՝ իհարկե չենք բացառում, որ որոշ բնակավայրերում կարող էին որոշ ընտրախախտումներ տեղի ունենալ, բայց պետք է ասել, որ ՀՅԴ հաղթանակը ընտրություններում հենց սկզբից էլ կանխատեսելի էր. «Կուսակցությունը մեծ հեղինակություն էր վայելել հայ ժողովրդի լայն շրջանակներում նաև անկախ պետականության նախօրյակին: Դրա վառ ապացույցն են Համառուսական Սահմանադիր ժողովի, Արևմտահայ և Արևելահայ համագումարների, իսկ ՀՀ գոյության շրջանում՝ նաև Երևանի քաղաքային խորհրդի ընտրությունները, որոնցում Դաշնակցությունը տարել էր համոզիչ հաղթանակ: Այն, որ խորհրդարանական ընտրությունները չվերածվեցին միջկուսակցական թեժ մրցակցության, պայմանավորված էր նաև որոշ ընդդիմադիր ուժերի դիրքորոշմամբ, որոնք, ելնելով ինչ-ինչ հաշվարկներից (ցածր վարկանիշ, կուսակցականների փոքրաթիվ բանակ), մի կողմ քաշվեցին պայքարից՝ որդեգրելով դիտորդ-քննադատի դերը: Իսկ ասպարեզում մնացած էսէռները, ազգային ու հասարակական հոսանքները չէին կարող դիմանալ մրցակցությանը»[9]:

Նորընտիր խորհրդարանի առաջին նիստը տեղի ունեցավ օգոստոսի 1-ին: «Օգոստոսի 5-ին խորհրդարանի երկրորդ նիստում հաստատվեցին ընտրությունների արդյունքները, կայացան օրենսդիր մարմնի նախագահության ընտրությունները: Խորհրդարանի նախագահ ընտրվեց Ա. Ահարոնյանը, փոխնախագահներ՝ Լ. Շանթը, Ս. Արարատյանը, քարտուղարներ՝ Հ. Տեր-Հակոբյանը և Ա. Սաֆրաստյանը: Քվեարկության ժամանակ ձեռնպահ մնացին էսէռ պատգամավորները և «Արագածոտնի գյուղացիական միության» ներկայացուցիչ Ա. Մելքոնյանը: Ա. Ահարոնյանը սկզբից ևեթ մնաց որպես

ձևական նախագահ, որի ընտրությունը ավելի շատ նպատակ ուներ բարձրացնելու նրա դերն ու կշիռը՝ որպես ՀՀ պատվիրակության ղեկավարի»[10]:

Երկրորդ գումարման խորհրդարանում ՀՅԴ-ին ընդդիմադիր խմբակցությունը հիմնականում էսէռներն էին՝ չորս պատգամավորով, որոնց երբեմն միանում էին երկու թուրք-թաթար պատգամավորները: Այս խորհրդարանում ևս էսէռները շարունակում էին իրենց նախկին հակաանկախական գիծը:

Երկրորդ գումարման խորհրդարանը օրենքներ ընդունեց ՀՀ տարածքում երդվյալ ատենակալների դատարան ստեղծելու, ազգային դրամը շրջանառության մեջ դնելու, ուռճացած պետական ապարատում կրճատումներ անելու մասին (սոցիալ-տնտեսական և այլ բնույթի մի շարք օրենքներ և օրինագծեր): Ի թիվս այլ կարևոր օրենքների՝ Հայաստանի խորհրդարանը 1919 թ. դեկտեմբերի 26-ին ընդունեց «Օրենք պետական լեզվի մասին», որով հայերենը դառնում էր պաշտոնական գրագրությունների լեզու. «Առաջնորդվելով լեզվի մասին օրենքով՝ հաղորդակցության, գյուղատնտեսության, խնամատարության և վերաշինության նախարարությունները 1920 թ. հունիսի 5-ին պաշտոնական հայտարարություն արեցին այն մասին, որ իրենց հասցեագրված ռուսաց լեզվով գրությունները այսուհետ ուշադրության չեն արժանանա և կմնան անպատասխան»[11]:

Հայաստանի Հանրապետության բնականոն կյանքն ու խորհրդարանի գործունեությունը խաթարվեցին բոլշևիկյան մայիսյան խռովության պատճառով: Մայիսի 5-ին գումարվեց խորհրդարանի արտահերթ նիստ, որն ընդունեց վարչապետ Ա. Խատիսյանի կառավարության հրաժարականը: Ստեղծված արտակարգ դրության պայմաններում ՀՅԴ Բյուրոն ստիպված էր իր ձեռքը վերցնել երկրի կառավարումը. խորհրդարանը վարչապետ է ընտրում ՀՅԴ Բյուրոյի անդամ Հ. Օհանջանյանին, որի կառավարության կազմի մեջ մտավ ՀՅԴ Բյուրոն՝ իր ամբողջ կազմով: Այնուհետև խորհրդարանն իր լիազորությունները փոխանցեց Բյուրո-կառավարությանը և մեկ ամսով գնաց արձակուրդ: Մայիսյան խռովության հետևանքով, փաստորեն, դադարեցվեցին խորհրդարանի աշխատանքները:

Երկրորդ գումարման խորհրդարանը օգոստոսի 1-ից մինչև մայիսի 5-ը ընդունել է ավելի քան 200 օրենք: Հաշվի առնելով երկրում մահմեդականների անհնազանդությունները՝ հունիսի 5-ին խորհրդարանի արտահերթ նիստում որոշվեց երկարաձգել խորհրդարանի արձակուրդը՝ այս անգամ մինչև օգոստոսի 1-ը: Օգոստոսի 2-ին, սակայն, խորհրդարանի փոխնախագահ Ավ. Սահակյանի ստորագրությամբ նոր օրենք է ընդունվում խորհրդարանի աշխատանքները մինչև հոկտեմբերի 31-ը դադարեցնելու մասին:

Խորհրդարանի հաջորդ նիստը գումարվեց նոյեմբերի 4-ին երկրի համար չափազանց ծանր պայմաններում, երբ Կարսի անկումից հետո (հոկտեմբերի 30) Հայաստանը կ՝անգնած էր պարտության շեմին: Երկրի համար ճակատագրական այդ օրերին խորհրդարանի լիազորությունները փոխանցվեցին կառավարությանը, իսկ խորհրդարանը դադարեցրեց իր աշխատանքը մինչև դեկտեմբերի 1-ը: Սակայն նոյեմբերի 23-ի երեկոյան գումարվեց խորհրդարանի արտահերթ նիստ, որի ժամանակ խորհրդարանի նախագահ Հ. Քաջազնունին կարդաց կառավարության հրաժարականի մասին գրությունը: Խորհրդարանն ընդունեց Հ. Օհանջանյանի կառավարության հրաժարականը և նոր վարչապետ ընտրեց Ս. Վրացյանին՝ հանձնարարելով նրան ձևավորել նոր կառավարություն: Նոյեմբերի 24-ին Ս. Վրացյանը ներկայացրեց իր կառավարությունը, որը դարձավ ՀՀ վերջին կառավարությունը:

Խորհրդարանի (ՀՅԴ խմբակցության) վերջին նիստը տեղի ունեցավ դեկտեմբերի 1-ին, որի ժամանակ որոշվեց իշխանությունը խաղաղ ճանապարհով հանձնել բոլշևիկներին: Դեկտեմբերի 2-ին Հայաստանը խորհրդայնացավ, և ՀՀ խորհրդարանն էլ կառավարության նման զրկվեց իր լիազորություններից:

Հայաստանի առաջին հանրապետության երկու խորհրդարանները իրենց ավելի քան երկու տարվա գործունեության ընթացքում ընդունեցին բազմաթիվ կարևոր օրենքներ և օրինագծեր պետության ներքին և արտաքին մի շարք հարցերի վերաբերյալ, սակայն Հայաստանի առաջին հանրապետությունը գրեթե մշտական ներքաղաքական լարվածության պայմաններում այդպես էլ չունեցավ իր Սահմանադրությունը: Այնուամենայնիվ, նրա երկու գումարման խորհրդարանների աշխատանքի արդյունքում ընդունվեցին օրենքներ, որոնց մի մասը հետագայում հիմք հանդիսացավ Խորհրդային Հայաստանի կյանքը կազմակերպելու համար: Նշենք նաև, որ երկու գումարման խորհրդարաններում ունենալով բացարձակ մեծամասնություն ՀՅԴ-ն գերադասեց պետական կառավարման և առհասարակ պետականաշինության գործընթացում ներառել այլ ուժերի ևս: Առաջին խորհրդարանում այդպիսի ուժ եղավ Ժողովրդական կուսակցությունը, իսկ երկրորդում Էսէռները, որոնց հետ ՀՅԴ-ն կոալիցիա կազմեց:

Հղումներ

1. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 94:
2. Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները, Եր., 2005, էջ 50:
3. Նույն տեղում:
4. Նույն տեղում, էջ 156:
5. Բաբաջանյան Վ., Միջկուսակցական հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում 1918-1920 թթ., Եր., 2017, էջ 103:
6. Նույն տեղում, էջ 103-104:
7. Նույն տեղում, էջ 105:
8. Նույն տեղում, էջ 107:
9. Նույն տեղում, էջ 109-110:
10. Նույն տեղում, էջ 111:
11. Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 2

Օգտագործված գրականության ցանկ

1. https://www.hayagitaran.am/2014/08/id-4634.html
2. Կիրակոսյան Ջ.,Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, հատ. Ա, Եր., 1982,էջ 208:
3. Խուրշուդյան Լ., Հայկական հարցը.բռվանդակությունը, ծագումը, Եր., 1995, էջ 38-39:
4. Կիրակոսյան Ջ., նշվ. աշխ., էջ 208:

Հայ որբերի տարհանումն Օսմանյան կայսրությունից 1922 թ.

Գոհար Խանումյան
Գիտական հոդվածների հեղինակ. գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է Հայոց ցեղասպանության խնդիրները: Զբաղվում է Օսմանյան կայսրությունում որբահավաք աշխատանքների ուսումնասիրությամբ

1915-1923 թթ.՝ Հայոց ցեղասպանության իրագործման տարիներին, հազարավոր հայ երեխաներ որբացան՝ դառնալով և՛ ծնողազուրկ, և՛ խնամազուրկ: Նրանց մեծ մասը հարազատների կորստից հետո հայտնվեց անմարդկային պայմաններում՝ զրկվելով կենցաղային տարրական պայմաններից: Որբերից շատերը մահացան սովից և այդ տարիներին մոլեգնող տարբեր համաճարակներից:

Հարկ է նշել, որ Հայոց ցեղասպանության տարիներին երեխաները ամենախոցելի խումբն էին, քանի որ, ֆիզիկական բնաջնջման ենթարկվելուց բացի, նրանց մի մասը բռնի իսլամացվում էր պետության և մահմեդական բնակչության կողմից: Այսինքն՝ նոր միջավայրում նրանք հարկադրաբար կորցնում էին հայկական ինքնությունը[1]:

Հայ որբերին վերահաս բնաջնջումից փրկելու համար գործուն աշխատանքներ իրականացրին հայկական միությունները (Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ), Ազգային խնամատարություն, Հայ ազգային միություն), հայոց եկեղեցին (ազգային առաջնորդարաններ, Կ. Պոլսի պատրիարքարան, հոգևոր գործիչներ), անհատները, հատկապես՝ Հայկական լեգեոնի և հայկական կամավորական գնդերի զինվորականները, օտարերկրյա նպաստամատույց կազմակերպությունները (Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտե, Լոնդոնի քաղաքագլխի ֆոնդ, Կանանց առաքելության աշխատողներ, Համառուսաստանյան քաղաքների միություն և այլն), ինչպես նաև միջազգային կազմակերպությունները (Կարմիր խաչ, Ազգերի լիգա):

Հայ որբերին հավաքագրում էին Օսմանյան կայսրության տարբեր հատվածներից, այդ թվում նաև՝ անմարդաբնակ վայրերից, սիրիական անապատներից, մահմեդական ընտանիքներից: Որբահավաք աշխատանքների շնորհիվ 1918-1921 թթ. Ընթացքում հավաքագրվեց ավելի քան 77.000 հայ երեխա[2], որոնք տեղաբաշխվեցին Օսմանյան կայսրության տարածքում գտնվող հայկական և օտարերկրյա նպաստամատույց կազմակերպությունների որբանոցներում:

ՀԲԸՄ Տյորթ-Յոլի «Սիսուան» որբանոցի տեսուչ Հմայակ Գրանյանը այս կապակցությամբ նշում է. «Անդամահատուած Թուրքիան իր բոլոր շրջաններով համատարած թշուառութեան և որբանոցի էր վերածուած»[3]: Օսմանյան կայսրությունում, Խորհրդային Հայաստանում հավաքագրված հայ որբերի թվաքանակը 1921-1922 թթ., ըստ բնակավայրերի, հետևյալ պատկերն է ներկայացնում:

Բնակավայրը	Որբերի թիվը
Խարբերդի որբանոցներ	5.300
Խորհրդային Հայաստան	45.000
Կ. Պոլիս	4.000
Սեբաստիա, Մարզվան	5.600
Բուրսա	250
Կոնիա	600
Սամսուն, Տրապիզոն	750
Կեսարիա	2.300
Մալաթիա	1.250
Էնկյուրի	250
Իզմիթ	225
Պարտիզակ	200
Ադանա	2.000
Հալեպ	2.000
Մարաշ	1.700
Այնթապ	1.200
Երուսաղեմ	800
Պորտ Սաիդ	350
Մոսուլ, Բաղդատ	600
Ուրֆա	1.200
Մարդին	1.000
Տիգրանակերտ	700
Ընդամենը	77.275[4]

Փոքր Ասիայում քեմալական շարժման ծավալմանը զուգընթաց՝ 1921-1922 թթ. Օսմանյան կայսրության որբանոցներում ապաստանած հայ երեխաների համար ստեղծվեց վտանգավոր իրավիճակ: Այն ավելի սրվեց Կիլիկիայում քեմալականների կողմից իրագործված հայկական կոտորածներից հետո, որոնց հետևանքով հազարավոր կիլիկիահայեր Այնթափից, Մարաշից, Հաճնից, Մերսինից և այլ վայրերից ստիպված էին լքել իրենց հայրենի բնակավայրերը:

1921 թ. վերջին՝ կիլիկիահայերի զանգվածային գաղթի ընթացքում, որբանոցներում ապաստանած շուրջ 7.500 հայ որբեր Կիլիկիայից տեղափոխվեցին Հալեպ, Բեյրութ, Դամասկոս և Ալեքսանդրեթ, որոնց մեծ մասը հայտնվեց «Ազգային խնամատարություն» միության և Հայկական բարեգործական ընդհանուր միության խնամակալության տակ[5]:

Կիլիկիայի՝ Մերսինի և Տյորթ-Յոլի երեք որբանոցներից տարհանված հայ որբերի համար 1922 թ. սկզբին ՀԲԸՄ Բեյրութի մասնաճյուղի ջանքերով վերակազմավորվեց «Քելեկյան-Սիսուան» որբանոցը[6]:

Հայ երեխաներին Կիլիկիայից տարհանել է նաև դանիացի միսիոներուհի Մարիա Յակոբսենը[7], որը 1922 թ. Հունվարին Քարեն Մարի Պետերսոնի հետ հայ որբերի մի մեծ խումբ տեղափոխեց Բեյրութ: 1922 թ. Հուլիսին Կիլիկիայից տարհանված 208 որբերի հետ նա հաստատվեց Բիբլոս և Բեյրութ քաղաքների միջև գտնվող Ջուք Միքայիլ բնակավայրում, որտեղից հետագայում նրանց տեղափոխեցին Սայդա: Այս որբանոցում խնամք և հոգածություն էին ստանում ամենափոքրիկ հայ որբերը[8]:

Կիլիկիայի անկումից հետո ակնհայտ էր, որ որբացած հազարավոր հայ երեխաների վերստին սպառնում էր ֆիզիկական ոչնչացման վտանգ Օսմանյան կայսրության ողջ տարածքում: Այս մտահոգությամբ պայմանավորված՝ 1922 թ. փետրվարի 7-ին Հալեպում կայացավ Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեի աշխատակիցների և Սահակ Բ կաթողիկոսի[9] կողմից հաստատված հայկական պատվիրակության (Հայ ազգային միության և Քաղաքական ժողովի ներկայացուցիչների, Մարաշի և Այնթափի որբանոցների հոգաբարձուների) ժողովը՝ առաջնորդական փոխանորդ Հարություն քահանա Եսայանի նախագահությամբ[10]: Ժողովում քննարկվեց Թուրքիայում ստեղծված քաղաքական նոր իրավիճակը, և որոշվեց Թուրքիայի հարավային և հարավարևելյան շրջանների որբանոցներում ապաստանած հայ որբերին տեղափոխել Սիրիա և Լիբանան, իսկ հյուսիսային և հյուսիսարևմտյան շրջանների որբացած հայ երեխաներին՝ Հունաստան և Կովկաս[11]: Թուրքիայի ներքին՝ կենտրոնական (Կեսարիա, Կոնիա, Սեբաստիա), ինչպես նաև հյուսիսային շրջանների (Տրապիզոն, Սամսուն) քրիստոնյա որբերը՝ հայ և հույն, Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի որոշմամբ ցամաքային ճանապարհով տեղափոխվեցին Կ. Պոլիս, իսկ այնտեղից նավով՝ Հունաստան և տեղաբաշխվեցին 13 որբանոցներում: Քայքայվող Օսմանյան կայսրության մյուս շրջաններից Թրակիայից որբերը տեղափոխվեցին Ռումինիա և Բուլղարիա, իսկ Իզմիրից և Բուրսայից Մարիցա գետով՝ Հունաստան[12]:

Հալեպում կայացած ժողովի մասնակիցները քննարկեցին և որոշեցին, որ «լաւ է թրքական իշխանութեանց տակ գտնուած որբանոցները փոխադրել, անոնց տեղը պահելով տեսակ մը



Գաղթականական քարավան

միսիոնարական կազմակերպութիւններ, որոնք պիտի ծառայեն շրջաններու մէջ գտնուած որբերը հաւաքելու և պատսպարելու, զանոնք նկատելով իբր Ըլլիֆի *(Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտե – Գ.Խ.)* սաները: Որբանոցներուն կապուած պաշտօնեաներն ու գործաւորներն ալ պէտք է փոխադրել որբերուն հետ, և պէտք է Ճէպէլ-Լիբանան հիմնուելիք որբանոցներուն մէջ տալ հայկական դաստիարակութիւն»[13]:

Այսպիսով, ելնելով Թուրքիայում ստեղծված ռազմաքաղաքական լարված իրավիճակից, ինչպես նաև հատկապես հայ որբերի կյանքին սպառնացող վտանգից, հայ հասարակական գործիչներն ու հոգևոր ներկայացուցիչները և Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեի աշխատակիցները[20] օրհասական համարեցին կայսրության տարածքի որբանոցներում ապաստանած քրիստոնյա որբերի տարհանումը երեք հիմնական ուղղություններով՝

1. Բալկաններ՝ Ռումինիա, Բուլղարիա, Հունաստան,
2. Կովկաս, հատկապես Խորհրդային Հայաստան,
3. Միջին Արևելք՝ Սիրիա և Լիբանան:

Թուրքիայից որբերի *էվակուացիան* ապահովելու էր երեխաների հետագա ֆիզիկական անվտանգությունը, կեցությունը և ազգային դաստիարակությունը: **Հայ որբերի դուրսբերումը Թուրքիայից իրականացվելու էր Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեի ֆինանսական օժանդակությամբ:**

Իր հուշերում շվեյցարացի միսիոներ Յա. Քյունցլերը[17] գրում է. «Ամերիկացիները 1919 թվին ողջ Թուրքիայում աքսորի ժամանակ թուրքական, քրդական և արաբական տներ տարված ավելի քան տասը հազար որբ երեխաներ էին հավաքել: Քանի որ շարունակ ուժեղացող քեմալական կառավարությունը ամերիկացիների համար շատ տեղերում, ամենուր դժվարություններ էր հարուցում, նրանց վերահսկում էր, նրանցից օգնություն էր պահանջում նաև մուսուլման որբերին օժանդակելու համար, որոնք ևս Թուրքիայում մեծ քանակությամբ կային, մինչդեռ

նրանց համար հատկացվող գումարներն այլևս հնարավոր չէր լինում վերահսկել, «Օգնության…» ընկերությունը (Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտե – Գ.Խ.) որոշեց իր հայ որբերին մի ոչ թուրքական երկիր տեղափոխել: Այդ ժամանակ Հարավարևելյան Անատոլիայի համար որպես հանգրվան ընտրվեց Լիբանանը»[14]:

Թուրքիայի հարավային և հարավարևելյան շրջաններից (Ուրֆայի շրջակայք, Մարդին, Խարբերդ, Ակն և Մալաթիա) հայ որբերի տարհանման պատասխանատուներ նշանակվեցին Յակոբ Քյունցլերը և նրա կինը՝ Էլիզաբեթը, որոնք 1922 թ.-ից աշխատում էին Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեի Ուրֆայի մասնաճյուղում և զբաղվում այդ կազմակերպության կողմից հավաքված հայ որբերի խնամքով[15]: Նրանց ընտրությունը պայմանավորված էր տարածքի և թուրքերենի փայլուն իմացությամբ: Այս կապակցությամբ Քյունցլերը նշում է. «Քանի որ ես և իմ կինը մեր լեզվական գիտելիքների և տեղանքի ճանաչողության պատճառով այդ աշխատանքի համար ավելի նպատակահարմար էինք, քան որևէ մեկը ամերիկյան «Օգնության…» (*Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց* կոմիտե –Գ.Խ.)աշխատակիցներից, որոնց մեծ մասը կարճ ժամանակով էին եղել երկրում, մեզ երկուսիս հանձնարարվեց Ուրֆայի շրջակայքից, Մարդինից, Դիարբեքիրից, Խարբերդից, Ակնից, Արաբկիրից և Մալաթիայից շուրջ 8000 երեխաների տեղափոխման գործը, մի աշխատանք, որը մեզ այնքան մեծ ուրախություն պատճառեց, որ մենք մեր կյանքի այս հատվածը կարող ենք լավագույններից մեկը համարել»[16]: Բացի այդ՝ տարածքի մահմեդական բնակչությունը ճանաչում էր Քյունցլերին, ինչի շնորհիվ կանխվեցին որբերի քարավանի թալանն ու կոտորածը: Հարկ է նշել, որ Քյունցլերի հեղինակության շնորհիվ ապահովվեց երեխաների ֆիզիկական անվտանգությունը նրանց տարհանման ժամանակ:

Որբանոցներում ապաստանած հազարավոր երեխաներին հարյուրավոր կիլոմետրեր տեղափոխելը ֆինանսական և անվտանգային լուրջ խնդիրներ էր հարուցում, ուստի որոշվեց շուրջ 8.000 որբերի տարհանումն իրականացնել փուլ առ փուլ՝ նրանց բաժանելով խմբերի: Ինչպես իր հուշերում վկայում է Յա. Քյունցլերի դուստրը՝ Իդա Ալամեդդինը, հայրը ծրագրել էր հայ երեխաներին Թուրքիայից դուրս բերել դեռ 1915 թ., երբ նա դարձավ Ուրֆայի հայության սարսափելի կոտորածների ականատես, սակայն այդ ցանկությունը կարողացավ իրագործել միայն 1922 թ.[19]:

Տեղափոխությունը մեծ ցնծություն առաջացրեց որբերի շրջանում, «քանի որ ինչ հաճոյքով պիտի հեռանային նրանք մի երկրից, ուր մահուան և կործանումի վտանգը կար շարունակ»[20]: Յուրաքանչյուր քարավանի ճանապարհումը վերածվում էր մի զվարճալի հանդիսության:

Հայ որբերը 1915 թ.

Երեխաներն իրենց քարավանի ավանակներին զարդարում էին դրոշակներով և զանգակներով, իսկ նրանց ճանապարհող մահմեդական կանայք, իրենց սովորության համաձայն, քարավանի հետևից բացականչում էին «լի՛-լի՛-լի՛-լի՛»: Իր հուշերում Քյունցլերը վկայում է, որ «լի՛-լի՛-լի՛-լի՛»-ն ոչ միայն ուրախության բարձրակոչ էր, այլև ռազմակոչ, քանի որ «նրանք (մահմեդական կանայք –Գ.Խ.)այդ «լի՛-լի՛-լի՛-լի՛»-ն էին աղաղակել նույն այդ երեխաների ծնողների յետևից, երբ նրանց տանում էին ջարդելու»[21]:

Առաջին խմբի տարհանումն իրականացվեց 1922 թ. մարտի վերջին Ուրֆայից[22]: Երբեմնի հայաշատ քաղաքում և նրա շրջակայքի որբանոցներում ապաստանել էին մոտ հազարի հասնող հայ որբեր, որոնք բերվել էին ինչպես Ուրֆայից և նրա հարակից շրջաններից, այնպես էլ կայսրության ամենահեռավոր բնակավայրերից: Այդ երեխաներից կազմված առաջին խումբը՝ մոտավորապես 130 հոգի, Յա. Քյունցլերի առաջնորդությամբ 10 օր հետիոտն անցավ մոտ 90 կմ ճանապարհ՝ Ուրֆայից հասնելով Հալեպ: Որբերի տարհանումը Յա. Քյունցլերը ներկայացրել է իր «Երեսուն տարի ծառայութիւն Արևէլքի մէջ» հուշագրության մեջ՝ «Որբերի մեծ ելքը երկրից» գլխում[23]:

Տարհանվող առաջին խմբի երեխաները ստիպված էին հաղթահարել տասնյակ կիլոմետրեր դժվարին ճանապարհ եղանակային անբարենպաստ պայմաններում, ինչի հետևանքով նրանց մեծ մասը վարակվեց այդ ժամանակ տարածված գրիպով: Բացի այդ՝ նրանք հանդերձավորված չէին ցուրտ եղանակային պայմաններին համապատասխան: Որբերի մեծ մասը ճանապարհը հաղթահարում էր ոտքով, առավել տկարները և մանկահասակները՝ սայլերով:

Երեխաների առաջին խմբի հետիոտն տեղափոխման դժվարությունները տարհանումը կազմակերպողներին ստիպեցին որբերի հաջորդ խմբերին տեղափոխել միայն սայլերով և ավանակներով, ինչը հնարավորություն տվեց երեխաներին տեղափոխելու միաժամանակ ավելի

մեծ խմբերով:

Թուրքիայից տարհանվող յուրաքանչյուր երեխայի տվյալներն արձանագրվում էին Քյունցլերի կազմած ցուցակներում, որոնք ստուգվում էին թուրքական ոստիկանական անցագրակետերում: Ցուցակների մանրակրկիտ ստուգումը թուրքական իշխանությունների կողմից կատարվում էր այն պատճառաբանությամբ, որ զինվորական տարիքի ոչ մի հպատակ իրավունք չունի լքելու երկիրը[22]: Յա. Քյունցլերին այս դժվարին գործում մեծապես օգնում էր իր կինը՝ Էլիզաբեթը, որը ղեկավարում էր Ուրֆայում ապաստանած հայ որբերի երկրորդ խմբի տարհանումը[25]:

Որբերի ամենաստվար խումբը՝ 5.000 հոգի, 1922 թ. ապրիլին տեղափոխվեց Խարբերդից և հարակից շրջաններից: Որբերի այս մեծաքանակ խմբի տեղափոխման ընթացքում Յակոբ և Էլիզաբեթ Քյունցլերները ծրագրեցին, որ 10-ական հոգուց բաղկացած յուրաքանչյուր խմբի ուղեկցի մեկ չափահաս որբ: Այս խմբի երեխաների մեծ մասին տեղափոխեցին սայլերով Խարբերդ-Դիարբեքիր-Ճերապլուս, իսկ մյուսներին՝ ջորիներով Խարբերդ-Մալաթիա-Ճերապլուս ուղղություններով:

Հայոց ցեղասպանությունը վերապրած, Խարբերդի ամերիկյան որբանոցի սան Արամ Թորիկյանը, որը Օսմանյան կայսրությունից տարհանված հազարավոր երեխաներից մեկն էր, իր հուշերում գրում է. «1922 թ. ամերիկացիները Խարբերդի որբանոցը տեղափոխեցին Հալեպ: Տղաները ձիերով, Մալաթիայի ճանապարհով գնում էին Հալեպ, իսկ աղջիկները՝ կառքերով, Տիգրանակերտի ճանապարհով: Մենք՝ տղաներս, դժվարին պայմաններում գնացինք Մալաթիա, այնտեղից ալ՝ Հալեպ»[26]:

Այսպիսով՝ 1922 թ. սեպտեմբերին հայ որբերի տարհանումը Թուրքիայից ավարտվեց: Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույցի հատկացրած միջոցներով որբերին տեղափոխելու համար վարձակալվեցին 130 կառք և մոտ 200 գրաստ: Ի դեպ, տարհանված երեխաների մի ստվար խումբ՝ տարբեր տարիքի շուրջ 1.500 հայ աղջիկներ, տեղավորվեցին Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույցի Ղազիրի որբանոցում, որի ղեկավարությունը ստանձնեց Յա. Քյունցլերը:

Ըստ Ջեյմս Բարտոնի տվյալների՝ 1922-23 թթ. Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեի գործուն աշխատանքների շնորհիվ, մոտավոր հաշվարկով, Թուրքիայից Սիրիա, Լիբանան և Հունաստան տարհանվեցին մոտ 30.000 հայ և հույն որբեր, որից 12.000 հայ երեխա՝ կայսրության միայն հարավային և հարավարևելյան շրջաններից[27]:

Օսմանյան կայսրությունից տարհանված հայ երեխաները, որոնք, ըստ էության, փրկվեցին վերահաս ֆիզիկական բնաջնջումից, իրենց հետևում թողնելով պատմական հայրենիքը, հայտնվեցին նոր երկրներում, բոլորովին նոր միջավայրում՝ ստանալով նոր կյանք սկսելու հնարավորություն: ■

Հղումներ

1- Մանրամասն տես Ümit Kurt, Cultural Erasure: The absorption and Forced Conversion of Armenian Women and Children, 1915-1916, Etudes Arméniennes Contemporaines, vol. 7, 2016, էջ 79:., Տես նաև Մարգարյան Ն., «Հայ երեխաների թրքացման գործընթացն Օսմանյան կայսրության պետական որբանոցներում (1915 -1918 թթ.), «Ցեղասպանագիտական հանդես», Երևան, 2016, №4 (1), էջ 25-43:

2- Տես Եղիայեան Բ.,Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, Անթիլիաս, 1975, էջ 252:

3- Գրանեան Հ., Հայ որբութիւնը, Յուշամատեան Մեծ եղեռնի (1915-1965), պատրաստեց՝ Ահարոնեան Գ., Պէյրութ,տպարան Ատլաս, 1965, էջ 936:

4- Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 252:

5- Տես նույն տեղում:

6- Նույն տեղում, էջ 109:

7- Մարիա Յակոբսեն (1882-1960) – դանիացի միսիոներուհի, Հայոց ցեղասպանության ականատես: 1906 թվականից՝ սկանդինավյան «Կանանց առաքելության աշխատողներ» կազմակերպության անդամ: 1919-1922 թթ. Օսմանյան կայսրության տարբեր հատվածներից հավաքագրել է շուրջ 3.600 հայ որբեր: 1928-1960 թթ.՝ Ջբեյլի «Թոչնոց բույն» որբանոցի տնօրեն:

8- Տես http://www.genocide-museum.am/arm/29.03.2013.php:

9- Սահակ Բ Խապայան–Կիլիկիայի հայոց կաթողիկոս (1902-1939): Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ երիտթուրքական իշխանությունների կողմից աքսորվել է Երուսաղեմ (1916), ապա՝ Դամասկոս (1917): Զինադադարից հետո վերադարձել է Ադանա (1919): 1921 թ. Կիլիկիայի հայության հետ բռնագաղթել է Սիրիա: 1930թվականից հաստատվել է Անթիլիասում (տես «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 10, Եր., 1984, էջ 135):

10- Տես Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 253:

11- Տես նույն տեղում, էջ 254:

12- Տես Ազատեան Լ., Հայ որբերը Մեծ եղեռնի, Լոս Անճելըս, 1995, էջ 39:

13- Եղիայեան Բ.,նշվ. աշխ., էջ 254:

14- Որբահավաք աշխատանքների արդյունքում Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեն 1918-1921 թթ. հավաքագրել էր 132.000 հայ, հույն և ասորի որբ (տես Barton J., Story of Near East Relief(1915-1930) in interpretation, New York, 1930, էջ 211): Հավաքագրված 132.000 որբերից հայ էին 65-70.000-ը (տես Եղիայեան Բ., նշվ. աշխ., էջ 251):

15- Յակոբ Քյունցլեր (1871-1949)– շվեյցարացի բուժակ, հայասեր, Հայոց ցեղասպանության ականատես: Պատանեկության տարիներին եղել է հյուսն, ապա Բազելում ստացել է բժշկի օգնականի և հիվանդապահի կրթություն: 1899 թ. Յոհաննես Լեփսիուսի «Գերմանական առաքելությունը Արևելքում» կազմակերպության հրավերով մեկնում է Ուրֆա և նշանակվում այդ կազմակերպության որբանոցային հաստատությանը կից ստեղծված հիվանդանոցի և կլինիկայի բժշկի՝ Հեման Խրիստի օգնական: Առաջին աշխարհամարտի տարիներին Քյունցլերը՝ իբրև չեզոք երկրի՝ Շվեյցարիայի քաղաքացի, հնարավորություն ունեցավ մնալու Ուրֆայում և դարձավ ականատես տեղի հայության հերոսական ինքնապաշտպանությանն ու թուրքական բանակի կողմից իրականացված դաժան կոտորածներին: Զինադադարից հետո Քյունցլերն իր կնոջ՝ Էլիզաբեթի հետ ազատեց մահմեդականների տներում բռնի պահվող բազմաթիվ հայ կանանց և երեխաների: 1923 թ. ստանձնեց Ղազիրի որբանոցի ղեկավարումը, որտեղ ապաստանել էին 1.400 հայ որբեր (աղջիկներ):1928 թ. Քյունցլերը Հայ օգնության շվեյցարական ընկերության աջակցությամբ Ղազիրում 50 կույր որբերի համար հիմնեց առանձին կացարան:1947 թ. ստացել է Բազելի համալսարանի պատվավոր դոկտորի կոչում (տես Կյունցլեր Յ., Արյան և արցունքների երկրում. իրադարձությունները Միջագետքում Համաշխարհային պատերազմի ժամանակ (1914-1918), Եր., Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2011, էջ 10-15):

16- Նույն տեղում, էջ 130:

17- Տես նույն տեղում,էջ 12:

18- նույն տեղում,էջ 131:

19- Տես ԻտաԱլեմետտին, Փափա Քիւնցլերը և հայերը, Անթիլիաս, 1999, էջ 135:

20- Զուիցէրացի հայասէր Եագոպ Քիւնցլէր. Իր հայանպաստ գործունէութեան 40-ամեակին առթիւ, Պէյրութ-Հալէպ,տպ. «Ռոթոս», 1946,էջ 91:

21- Նույնտեղում, էջ 103:

22- Յակոբ Քյունցլերը, 1899 թ. սկսած՝շուրջ 20 տարի, որպես բժշկի օգնական, աշխատել է Ուրֆայի հիվանդանոցում:

23- Տես Զուիցէրացի հայասէր Եագոպ Քիւնցլէր, էջ 57:

24- Տես ԻտաԱլեմետտին, նշվ.աշխ., էջ 136:

25- Տես նույն տեղում, էջ 142:

26- Շուշանյան Ս. ,Հին և նոր Խարբերդ, «Արտագերս», 2006, էջ 88:

27- Տես Barton J.,նշվ. աշխ., էջ148:

Վախենում Եմ

Նորեկ Գասպարյան
Գրող, Արցախի վաստակավոր լրագրող, ռեժիսոր

Ինչից եմ վախենում: Գուցե չասեմ՝ ինչպես շատ շատերը... բայց լռության կողքին ապրելն էլ մի տղամարդկություն չէ: Չի ստացվում: Ծանր է: Տեսակի խնդիր էլ կա: Ինչքան էլ ասես, հերն էլ անիծած, բան չի փոխվելու: Չէ՛, իսկապես, զարմանալի ոչինչ չկա: Այս վարակիչը ամենաքիչը մի քանի հազար տարվա կենսագրություն ունի, և մենք լավ էլ ուսումնասիրել ենք դրա ավերող ու կործանիչ բացիլները: Մեկը մտածե՞լ է, որ դրանք մեզ հանգիստ թողնելու մտադրություն ունեն, որ դրանք կարող են գոյություն ունենալ առանց մեզ: Չասեք՝ միամիտ բան ես ասում, եղբա՛յր, չասեք՝ ձեր մատուցածը քիչ մը հնահոտ է և նոր սերմնացաններին անհասկանալի: Մեկ է, չեմ համաձայնի: Ուզեք-չուզեք, ինչքան էլ ձեզ համար անհասկանալի ու տհաճ լինի:

Համարձակ ասեմ՝ ոչ թե վախ է մտել մեջս, այլ այդ վախը միշտ էլ եղել է ինձ հետ. միասին քնել, միասին արթնացել ենք, միասին ուրախացել ենք, ճանապարհ ենք անցել, մի խոսքով, կարճ-կոնկրետ՝ ամեն տեղ միասին ենք եղել, և, օրինակի համար, ոչ մեկը չի կարողացել բաժանել մեզ, գոնե մի քանի օրով հեռացնել իրարից... Լավ-վատ սա է իրականությունն ու անժխտելին... թաքցնելը... չեմ կարծում, որ ճիշտ է: Չասեմ, որ տարիներ առաջ, օրինակ, վախենում էի, չէ՛, սարսափում էի անտարբերությունից: Եվ մտածում էի, որ դրա դեմն առնելու համար խիզախությունն ու նվիրումը չեն հերիքելու, որ երբեք չենք համարձակվելու նրան պատերազմ հայտարարել, և նա առանց դիմադրության, առանց կրակոցի զավթելու է մեր երկիրը, մտնելու է մեր քաղաքներն ու շեները և քարուքանդ է անելու մեր մեծ ու փոքր տները... և մեզանից ոչ մեկը այդ հարյուրամյա ճակատամարտում զարկվելու «միամտություն» չի ունենալու...

Ուզում եմ ասել՝ կրկին կորցնելու ենք, հրաժարվելու ենք ունեցածից, դառնալու ենք անհոտ, անդիմագիծ, օտարված մեկը՝ անցյալից հեռու, ներկայից դուրս, ապագայից անբաժին...

Հետո՞... վերջից էլ եկող չկա, որ բան ասի, բան իմանանք... օրինակի համար՝ ասի, որ մի նոր տապան շինելու ժամանակն է, կամ ամեն ինչ դեռևս ջրի տակ է, և աղավնին տեղ չի գտնում ոտքը դնելու...

Վախենում եմ իմ և մերձավորիս արանքում մի ժամանակ բնակություն հաստատած և անընդհատ ընդարձակվող ու նորանոր տարածքներ գրավող նորին մեծություն գիշատիչ ատելությունից: Ես-ը, թիմ-ը, նոր-ը, նախկին-ը... վերջապես՝ նոր Հայաստանը, հին Հայաստանը... սպիտակասև տագնապ է... սպիտակասև իրականություն... Որտե՞ղ է իմ երկիրը... Ասեք տեղը... իմանամ՝ ուր է հասել... գնամ աղաչեմ, խոստովանեմ մեղքերս և փորձեմ վերադարձնել, փորձեմ բերել հետս... փորձեմ ոտքի կանգնել... չգիտեմ, գուցե հաջողվի՞ ապրել... նեղվածք է, օդը չի հերիքում, մեկը գիշերը կողոպտել է մեզ, մենք՝ անտեղյակ... Տատս կասեր՝ տունը գող է մտել...

Ո՞վ է ավելորդը... եղբա՛յր, կա՞մ մեր այս պուճուրիկ երկրում մեկը... Ես ամեն օր ու ժամ ինձ համոզում եմ, որ դա հորինվածք է, գայթակղիչ սուտ, որ առանց այդ ինչ-որ մեկի, ուզում եմ ասել՝ այդ ավելորդի, մենք մեր կռիվը տանուլ կտանք, այսօրվա կռիվն էլ, վաղվանն էլ... բոլոր կռիվները... և ոչ մեկը չի վերադառնա մարտադաշտից...

Մեկը կար, գյուղում ապրող մարդ էր: Ամբողջ օրը գյուղամիջի հարյուր տարվա ծռված նստարանին նստած էր: Լույսը կաթում էր, նա այնտեղ էր: Ասում են՝ մի քիչ լավ չի ծնվել, ուզում եմ ասել՝ բոլորի նման չէր, և մարդուն մեծ ու փոքր ձեռ էին առնում, ուղարկում ջրի, ինչ-որ մեկին օգնելու, տների առաջն ավլելու, հանդից չվերադարձած մարալ կովերը բերելու... օրինակի համար՝ այդպես հազար ու մի գործ... Տարիքն առած մարդ էր, բայց էլի ոչ մեկին չէր մերժում, ոչ մեկին չէր կոպտում... էլի երեխայի պես վազում էր ջրի... Եվ երբ մահացավ այդ մեծ երեխան, ուզում եմ ասել՝ փոխեց բնակության վայրը, գյուղը կարծես դատարկվեց, մարդիկ նկատեցին, որ ջարդվել է ծռված նստարանը, որ հազար տարվա աղբ կա գյուղի փողոցներում, որ մարալ կովերը ամեն օր դառնում են գել ու գազանի բաժին, որ սառը ջուր բերելը դարձել է, ո՞նց ասեմ, տիեզերք նվաճելու նման մի բան...

Եվ մենք հիմա դարձել ենք ավելորդ փնտրող... գյուղերում, քաղաքներում, նույնիսկ ամենափոքրիկ բնակավայրերում այդ գործով ենք զբաղված: Չասե՞ս՝ հանգստացեք մի հատ... Չասե՞ս՝ մեզ ջուր բերող է հարկավոր, զենք բռնող էլ, գիրք գրող, հպարտ ու ուրախ դպրոց մտնող... Չասե՞ս՝ առանց մարալ կովի

դժվար կլինի, շատ դժվար...

Եղբայր, կորցնելուց եմ վախենում: Սկզբունքս, մտածողությունս, հավատս, բարեկամիս, տնկած ծառս, տաշած քարս... մերձավորիս...

Հիշողությունս...

Բայց թաքցնելու բան չկա, ամենաշատը հենց այդ հիշողությունը կորցնելուց եմ վախենում: Ինչքան մտածում եմ, դա է ինձ պահողը այս օրեցօր փոքրացող արևի տակ, դա է հեռուներից ինձ տուն բերողը, ամենաանհասկանալի օրերին կողքիս պինդ կանգնողը... Օրինակի համար եմ ասում՝ ես առանց նրա ոչ մեկից չէի տարբերվի, ո՛չ էլ նախապապերիս կճանաչեի, ո՛չ էլ նախապապերս ինձ կընդունեին... ոչ մեկն էլ ինձ ջրի չէր ուղարկի, ոչ էլ կթողնեին ավլել երկրիս ամենահեռավոր ու մոռացված շեների նեղլիկ փողոցները...

Մեր բաժան-բաժան, հատվածային փառաբանությունից եմ վախենում, մեր մեծամտությունից, անընդհատ իրար մեղադրելու, իրար պատերի տակ կանգնեցնելու դաժանությունից: Ամեն օր, ամեն ժամ, ամեն վայրկյան երկրից հեռացնող մտածումից...

Լսե՞լ եք՝ բանակը պաշտպանում է ժողովրդին, ոչ թե ինչ-որ անիմաստ, անհասկանալի բարձունքներ, լճակներ ու մարգագետիններ... Ես չեմ ասել, քաղաքական գործիչն է ասել... Մի՞թե փառահեղ չէ... Կարելի է նույնիսկ ծափահարել... դարձնել ինչ-որ գեներալի պատմական խոսք... բանականաշինության փիլիսոփայության հենասյուն... ժամանակակից մտածողության հենակետ...

Մի բան էլ ասեմ, չզարմանաք, վախենում եմ ցավը չզգալուց... Ուզում եմ ասել՝ կորցնելու ցավը, չտեսնելու, անտուն ու անզեն մնալու ցավը...

Շուշիում մեկը կար, 1945-ին ոտքերից մեկը թողեց Բեռլինի փողոցներում և վերքածածկ մարմինը հենակների արանքում ճոճելով՝ բերեց հասցրեց Շուշի: Հարազատները, բնականաբար, օրերով լաց լացեցին, բախտ բաժանողի հերն անիծեցին, Հիտլերին ամենաքիչը մի հազար անգամ թաղեցին ու հասկացան, որ մի ոտքով էլ կարելի է մարդավարի ապրել, նույնիսկ առանց էն մյուսի էլ... բայց դա չէ կարևորը: Էդ մարդը մի օր՝ մի մայիսի 9-ի՝ մի հանդիպման ժամանակ, երբ, արցունքները հսկայական թաշկինակով սրբելով, սկսեց պատմել էդ անիծյալ պատերազմի մասին, հավաքվածները, չգիտես ինչու, սկսեցին ծիծաղել... սկզբում՝ առանձին-առանձին, հետո՝ բոլորը միասին, ողջ դահլիճը...

Եվ գիտե՞ք՝ ինչ եղավ հետո: Ասեմ: Մարդը դադարեց խոսել, տարիներ շարունակ նույնիսկ բարեկամների ու ծանոթների հարցերին չէր պատասխանում: Ավելին՝ սկսել էր... ծիծաղել: Մարդ էր մեռնում՝ ծիծաղում էր, ծնվում էր՝ ծիծաղում էր... Ծիծաղելով էլ գնում էր հանգուցյալին ճանապարհելու... Ասում են՝ հարազատ, ամենաքիչը մի 50 տարի հետո ապրած կնոջն էլ է ծիծաղելով հասցրել գերեզմանոց... Եվ երբ մի անգամ բարեկամ-հարազատ-ընկերներով փորձեցին իբր կարգի հրավիրել նրան՝

Նկարը՝ Հակոբ Հակոբյանի

համարձակվելով բացատրել, որ նման վայրերում ծիծաղելը վիրավորական է, առաջին անգամ առանց ծիծաղի երկու բառ ծանր քարերի նման դրեց իրար վրա.

- Ինչ տարբերություն...

Հիմա ես եմ, պատկերացնո՞ւմ եք, սկսել եմ տեղի-անտեղի ծիծաղել... մի բան, որից ամենաշատն էի վախենում... չնայած... ճիշտ էր ասում մարդը՝ ինչ տարբերություն...

Համատարած խտրականութիւնը

Վրէժ-Արմէն

«Մարդկային իրաւանց տիեզերական ուխտագիրը» իր երկրորդ յօդուածով յստակ կը դնէ հարցը. «Իւրաքանչիւրը կրնայ վայելել ներկայ ուխտագրով հռչակուած բոլոր իրաւունքներն ու բոլոր ազատութիւնները՝ առանց որևէ խտրութեան, յատկապէս՝ ցեղի, գոյնի, սեռի, լեզուի, կրօնի, քաղաքական թէ որևէ այլ կարծիքի, ազգային կամ ընկերային ծագման, հարստութեան, ծնունդի կամ որևէ այլ վիճակի: Այլևս պիտի չդրուի որևէ խտրութիւն, որ հիմնուած է անձի մը պատկանած երկրի մը կամ տարածքի մը քաղաքական, իրաւական կամ միջազգային իրավիճակին վրայ, այդ երկիրը կամ տարածքը ըլլայ անկախ, ուրիշի մը խնամակալութեան ներքոյ, ոչ ինքնավար, թէ գերիշխանութեան որևէ սահմանափակման ենթակայ»:

Իզուր չէ, որ Միացեալ ազգերու կազմակերպութիւնը Փարիզի մէջ կայացած իր համագումարին՝ 1948 թ. դեկտեմբեր 10-ին, Շայոյի պալատին մէջ այդքան համապարփակ, այդքան մանրամասն բանաձևած է այս յօդուածը: Իզուր չէ, որովհետև մարդկութեան ամբողջ տարեգրութիւնը պատմութիւնն է այստեղ արտայայտուած այդ բոլոր խտրութեանց, մարդկային իրաւանց և ազատութիւններու բռնաբարման:

Անհրաժեշտ պիտի ըլլար տակաւին, որ աւելի քան կէս դար ետք՝ 2005 թ. հոկտեմբեր 21-ին, դարձեալ Փարիզի մէջ ՄԱԿ-ի Կրթութեան, գիտութեան և մշակոյթի կազմակերպութեան (UNESCO) ընդհանուր համագումարը իր 33-րդ նիստին որդեգրէր «Մշակութային արտայայտութեանց այլազանութեան պաշտպանութեան ու ջատագովման» համաձայնագիրը, որուն նախադրեալներու չորրորդ ու հինգերորդ կէտերը կը շեշտէին.

- «Յիշեցնելով, որ մշակութային այլազանութիւնը, որ կը ծաղկի ժողովրդավարութեան, հանդուրժումի, ընկերային արդարութեան և ժողովուրդներու ու մշակոյթներու փոխադարձ յարգանքին վրայ, անհրաժեշտ է ապահովելու համար խաղաղութիւն և անվտանգութիւն տեղական, ազգային թէ միջազգային մակարդակներու վրայ,

- Նշելով մշակութային այլազանութեան կարևորութիւնը՝ ամբողջական իրականացման ի խնդիր մարդկային իրաւանց ու ազատութիւններու, որոնք հռչակուած են «Մարդկային իրաւանց տիեզերական ուխտագրով» և այլ համաճանաչ վաւերաթուղթերով»:

Ինչո՞ւ կը վերյիշեցնենք այս բոլորը:

Հակառակ բոլոր վեհ խօսքերուն, հակառակ երևութապէս այնքան ազնիւ տրամադրութիւններուն՝ աշխարհը կը շարունակէ դառնալ իր ծուռ առանցքին շուրջ, և կ՚անդրադառնանք, թէ տակաւին երկար է ճանապարհը մեր առջև՝ հասնելու համար ցանկալի այդ համակեցութեան:

Վերջին շրջանին միջազգային յառաջադէմ մամուլը տևական քննարկման ու վերլուծութեան նիւթ է

դարձուցած խտրականութեան հարցը, հիմա՝ ոչ թէ պարզապէս կամ բացառապէս բռնապետական կարգերու տակ կրկնուող խախտումները, այլ իրենց սեփական երկիրներուն՝ ժողովրդավարութեան հնոց նկատուող Արևմուտքի՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներու, Միացեալ Թագաւորութեան և այլ պետութիւններու մէջ իսկ կատարուող խախտումները, որոնք մարդկային իրաւանց դասեր կու տային, կու տան տակաւին աշխարհի մնացեալ երկիրներուն:

ԱՄՆ-ի Մինեսոթա նահանգի Մինէափոլիս քաղաքի ոստիկանութեան կողմէ 2020 թ. մայիս 25-ին սևամորթ Ճորճ Ֆլոյտի սպանութիւնը բաժակը յորդեցնող կաթիլը եղաւ, և անկէ ի վեր, այս օրերուն տիրող համաճարակի ամենակալ ու անընդհատ տեղեկատուութեան կողքին, մարդկային կեանքի սրբութեան, սևամորթներու նկատմամբ ցուցաբերուած խտրականութեան, գերեվաճառութեան ու յարակից հարցերը ուշադրութեան մնայուն առարկան են գրաւոր թէ բանաւոր մամուլին:

Նպատակս չէ այստեղ մամուլի համապարփակ տեսութիւն մը ներկայացնել: Պիտի նշեմ ըսուածներէն մի քանի օրինակներ միայն, յատկապէս այն պարբերաթերթերէն, որոնց կը յաջողիմ հետևիլ:

Անգլիական «The Guardian Weekly» շաբաթաթերթի 2021 թ. փետրուար 12-ի թիւին մէջ տպագրուած իր «Imperial formulae» («Կայսերական դրոյթներ») յօդուածին մէջ Fara Dabhoiwala կը գրէր նոր լոյս տեսած երկու գրքերու մասին: Առաջինը «Empireland: How Imperialism Has Shaped Modern Britain» («Կայսերաստան. ինչպէ՞ս է կայսերապաշտութիւնը ձևաւորած արդի Բրիտանիան») գիրքն է, որ կը պատկանի Sathnam Sanghera-ի գրիչին: Հոն վերջինս դիտել կու տայ, որ դիտմամբ թէ անգիտակցաբար կայսրութիւնը պատմութեան մէջ «ամենէն մեծ ձեռնարկումներէն մէկն էր սպիտակներու գերակայութեան» և կը շարունակէ աղճատել բրիտանական ընկերութիւնը: Երկրորդը Padraic X Scantan-ի գիրքն է՝ «Slave Empire: How Slavery Built Modern Britain» («Ստրկային կայսրութիւն. ինչպէ՞ս ստրկութիւնը կերտեց արդի

Բրիտանիան»), որուն մէջ այդ հեղինակն ալ կը հաստատէ, թէ եւրոպացիներու կողմէ ափրիկեցիներու զանգուածային գերեվարութիւնը-շահագործումը երբէք պատահական կամ անջատելի չէր համաշխարհային առևտուրի և կայսրութեան վերելքէն. ան կեդրոնական միջոցներէն մէկն էր, որով այդ բաներն իրականացան:

Նոյն շաբաթաթերթի 2021 թ. ապրիլ 30-ի թիւին մէջ ծաւալուն ուսումնասիրութիւն մը հրատարակած է Robert P. Baird՝ «The Invention of Whiteness» («Սպիտակութեան յայտնագործութիւնը») վերնագրով: Անկէ ալ երկու մէջբերում միայն բաւարար է հեղինակին մտահոգութիւնը հասկնալու համար: Ան կը յիշեցնէ երեք վկայութիւններ: Մէկը՝ ամերիկացի ընկերաբան W.E.B. Du Bois-էն, որ տակաւին 1920 թ. կը գրէր, թէ «Աշխարհի ժողովուրդներուն մէջ անձնական սպիտակութեան յայտնաբերումը շատ արդիական բան մըն է, տասնիններորդ և քսաներորդ դարերու հարց մը իսկապէս»: Տիւ Պուա երևոյթը կը կոչէ «սպիտակութեան նոր կրօնը»՝ պնդելով, որ սպիտակութեան նման ցեղային դասակարգում մը աւելի շատ կրօնական հաւատի մը նման է, քան կենսաբանական իրողութեան մը, և կը նշէ Թրինիտատի ու Թոպակոյի առաջին վարչապետ Eric Williams-ի այն գնահատումը, թէ «գերեվարութիւնը ցեղասպանութենէն չէ՛ ծնած, ցեղասպանութի՛ւնն էր հետևանքը գերեվարութեան»: Վերջապէս երրորդ վկայութիւնը կու գայ Benjamin Disraeli-էն, որ Վիկտորեան Բրիտանիոյ վարչապետն էր: Ան յայտարարած է. «Ցեղը կ՚ենթադրէ տարբերութիւն, տարբերութիւնը կ՚ենթադրէ գերակայութիւն, գերակայութիւնը կ՚ենթադրէ գերակշռութիւն»:

Գերակայութեան այդ նոյն տրամադրութիւնները ունեցած է նաև, ի շարս այլոց, Բրիտանիոյ միւս ակնառու վարչապետը՝ Winston Churchill, որուն տեսակէտները ցեղի վերաբերեալ նոյնիսկ իր ժամանակակիցները զայրացուցած են: Իր ատենի գաղթային նախարարը՝ Leo Amery, երբ տեսած է, թէ ինչպէս Չըրչիլ թոյլ տուած է, որ Պենկալի ժողովուրդը սովամահ ըլլայ, ըսած է. «Մեծ տարբերութիւն մը չեմ տեսած իր և Հիթլերի աշխարհայեացքներուն միջև», ինչպէս կը գրէ Priyamvada Gopal իր «Why can't Britain handle the truth about Winston Churchill?» («Ինչո՞ւ Բրիտանիա չի կրնար դիմակայել իրականութիւնը Ուինսթըն Չըրչիլի մասին») յօդուածին մէջ՝ տպագրուած «The Guardian Weekly»-ի 2021 թ. մարտ 26-ի թիւին մէջ:

Վերջապէս մատնանշեմ յօդուած մը ևս՝ «The enduring problem of race in America» («Ամերիկայի մէջ ցեղի երկարատև խնդիրը»)՝ տպագրուած ամերիկեան «TIME» (այժմ երկու շաբաթը անգամ մը լոյս տեսնող) պարբերաթերթի 2021 թ. մայիս 24-ի և 31-ի թիւերին մէջ, ստորագրուած Janell Ross-ի կողմէ: Ան ալ բաւական հանգամանալից ակնարկ մը կը նետէ պատմութեան վրայ ու կը նշէ, որ 1937 թ. «Carnegie Corporation»-ը շուէտացի տնտեսագէտ, ընկերաբան ու ապագայ նոպելեան մրցանակակիր Gunnar Myrdal-էն կը խնդրէ տեղեկագիր մը պատրաստել ԱՄՆ-ի մէջ ցեղային անհաւասարութեան մասին: «Նոյն հիմնական տեղեկութիւնն է, որ կը գտնենք Միրիատի աշխատանքին մէջ, ամէն ինչ, որ իրմէ առաջ եղած էր ու իրմէ ետք եղած»,– կ՚ըսէ հեղինակը: «Երկրի մը մէջ, որ հիմնուած է հաւասարութեան յանձնառութեան վրայ, միայն սպիտակ ամերիկացիներն են, որ լրիւ վայելած են քաղաքացիութիւնը: Նորաբնակները բնիկ ամերիկացիները դուրս քշեցին իրենց սեփական հողերէն, ապա զանոնք անբաղձալի, վտանգաւոր հիւրերու տեղ դրին: Գոնկրեսը արգիլեց շատ ուրիշներ, որ նոյնիսկ երկիր մուտք գործեն: Բայց սևամորթ ամերիկացիներն էին, որ պետութիւնը գերեվարեց, ապա այնքան ամբողջական լքումի ենթարկեց, որ ընկերային, տնտեսական կամ ֆիզիքական բարօրութեան բոլոր գլխաւոր ոլորտներուն մէջ միլիոնաւորներ իրենց սպիտակամորթ հայրենակիցներէն շատ ետ մնացին ու տակաւին կը մնան»:

Աւելցնեմ նաև, որ այդ մեղքերը միայն եւրոպացիները չէ, որ գործած են, քանի որ նոյնիսկ ափրիկեցի ցեղապետեր, սեփական շահեր հետապնդելով, մեղսակից եղած են արաբ, ասիացի և, իհարկէ, եւրոպացի դրամատէրերու, բայց առաւելաբար վերջիններն են, որ անբաւ հարստութիւն դիզած են՝ գերիները անվճար կամ գրեթէ անվճար աշխատցնելով:

Դրական երևոյթ է, որ այս հարցերուն մասին այլևս բացէ ի բաց կը գրուի և ոչ միայն կը գրուի: Բացի ցոյցերէն, հեռասփռումներէն՝ նաև արուեստի ու մշակոյթի տարբեր բնագաւառներու ճամբով հարցերը կ՚արծարծուին, կը վերարծարծուին:

Համոզուած եմ, որ հայ մամուլն ալ անմասն մնալու չէ այս շարժումէն, մանաւանդ որ ոչ միայն անցեալին, այլև մինչև օրս հայութիւնն ալ ենթակայ է տեսակաւոր ճնշումներու բոլոր անոնց կողմէ՝ բարեկամ թէ թշնամի, որոնց համար մեր գոյութիւնն այնքան ալ ցանկալի բան մը չի թուիր:

Զմոռնանք՝ մարդկային իրաւանց պաշտպանութիւնը մեր օրակարգին վրայ է եղած Վարդանանցէն ի վեր, Նուարսակի դաշնագրի ստորագրութենէն ի վեր ու մանաւանդ 1878-էն ի վեր, երբ Պերլինի վեհաժողովէն Խրիմեան Հայրիկ վերադարձաւ երկաթէ շերեփի իր պատգամով: Եւ յիշենք, որ մարդկային իրաւանց պաշտպանութեան ի խնդիր յառաջ եկան մեր կուսակցութիւնները: Այդ հարցը սկիզբէն մաս կազմեց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ալ ծրագրին, որուն նորագոյն՝ 1998 թ. տարբերակին մէջ հետևեալ բառերով բանաձևուած է ան. «Հ. Յ. Դաշնակցութեան ընկերվարական իդէալն է կերտումը հասարակութեան մը, ուր մարդը ազատագրուած ըլլայ ցեղային, կրօնական-դաւանական, ազգային, քաղաքական, ընկերային և տնտեսական ամեն տեսակ խտրականութենէ, կաշկանդումէ, բռնութենէ և շահագործումէ»:

Ուրեմն միշտ պահենք այս հարցերը օրակարգի վրայ և գալիք ակնարկով մը փորձենք անդրադառնալ նաև այն խտրականութեան, որ մենք մեզի՛ հանդէպ ցոյց կու տանք անհատական թէ հաւաքական մեր կեանքին մէջ: ■

Հայաստան Դաշինք

«365 օր+.Ապագան սկսվում է հիմա»

Արժանապատիվ խաղաղություն

1.Մենք հանդես ենք գալիս հավասարակշիռ և հետևողական արտաքին քաղաքականության, արդյունավետ տարածաշրջանային համագործակցության և բոլոր հարևանների հետ արժանապատիվ հարաբերությունների հաստատման և զարգացման օգտին:

2.Աշխարհաքաղաքական նոր մարտահրավերներին համահունչ, տարածաշրջանում շահեր հետապնդող դաշնակից երկրների հետ կձևավորվեն համագործակցության, փոխօգնության և տարածաշրջանային խաղաղության հաստատման մոդելներ:

3. Մենք մերժում ենք պարտվածի հոգեբանությունը՝ վստահ լինելով, որ Հայաստանն իր դաշնակիցների հետ կարող է ձևավորել տարածաշրջանային նոր օրակարգ և պաշտպանել սեփական շահերը:

4.Կողմ լինելով Հարավային Կովկասում կայուն խաղաղության, կոմունիկացիաների ու բաց սահմանների գաղափարին՝ հաստատակամ ենք դաշնակիցների հետ գտնել խելամիտ և փոխշահավետ լուծումներ՝ դրանք բխեցնելով մեր ազգային և պետական շահից:

5.Ընդլայնելու ենք Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչումն ու դատապարտումը, հետապնդելու ենք հայ ժողովրդի անժամանցելի իրավունքների իրականացումը՝ որպես նոր ցեղասպանությունների կանխարգելման նախապայման, որպես սերունդների համար անվտանգության երաշխիք և տարածաշրջանում երկարաժամկետ և արժանապատիվ խաղաղության գրավական:

ՍԻՐԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑ.

Հայաստանը ծանր ժամանակներ է ապրում, սակայն ընտրությունը շատ պարզ է: Կա երկու տարբերակ՝ հրատապ կասեցնել այս աղետալի անկումը, բուժել վերքերն ու նորից ոտքի հանել երկիրը, կամ գնալ նոր կորուստների:

Ովքեր իրենց ապագան տեսնում են Հայաստանում, նրանց համար ընտրությունը հստակ է:

Հատվածներ «Առաջնահերթ գործողությունների ծրագրից»

ՀԱՅԱՍՏԱՆ
ԴԱՇԻՆՔ

ԴՐՕՇԱԿ